Էջմիածին

ՌՆԱ

Թ. ՏԱՐԻ

Տայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ՍՍՌ Միությունում գտնվող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների Մոսկվայում գումարված կոնֆերենցիայի դիմումը ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Հայ եկեղեցին խաղաղության համար պայքարի ճակատում	7
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ. ՍՍՌՄ քրիստոնյա եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում	11
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻի բացման խոսքը ՍՍՌՄ քրիստոնյա եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում	16
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՆԻԿՈԼԱՅի զեկուցումը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում	19
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճառը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում	42
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԼՔԻՍԵԴԵԿի ելույթը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում	48
ԼԻԱՏՎԻԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍի ճառը ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիայում	51
Ուղերձ ՍՍՌ Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների կոնֆերենցիայից՝ ողջ աշխարհի եկեղեցիներին, կրոնական միավորություններին, հոգևորականության և բոլոր կրոնների հավատացյալներին	55
Ուղերձ ՍՍՌ Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների կոնֆերենցիայից՝ խաղաղության Համաշխարհային Խորհրդին	59
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԵԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Թանկագին Իոսիֆ Վ.իսսարիոնովիչ.

Մենք, Սովետական Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների ներկայացուցիչներս, հավաքվելով այս կոնֆերենցիային՝ խաղաղության պաշտպանության հարցերը քննարկելու համար, ողջունում ենք հանձինս Ձեզ՝ մեր մեծ Պետության ժողովուրդների առաջնորդիդ, նրա խաղաղասեր քաղաքականության իմաստուն ղեկավարին և ամբողջ աշխարհի խաղաղության դրոշակակրին:

Մեր կոնֆերենցիան հավաքվել է այն ժամանակ, երբ հակառակ բանականության և համաձայնությունների, ուժեղ թափով ընթանում է Արևմտյան Գերմանիայի և Ցապոնիայի վերազինումը, երբ Արևմտյան Եվրոպայում ամերիկյան հրամանատարության ներքո կազմակերպվում է միացյալ բանակ և երբ չտեսնված թափով իրականացվում է սպառազինման վազքը, որը արտահայտվում է Կորեայում բակտերիոլոգիական պատերազմի հանցագործ մեթոդների գործադրումով:

Նկատի ունենալով խաղաղությանը սպառնացող պատերազմի վտանգը, ոչ ոք չի կարող մնալ այդ ողբերգական իրադարձությունների վերաբերմամբ զուտ անմասնակից ականատեսի դերում, ոչ ոք չի կարող հետ մնալ նախապատրաստվող նոր պատերազմի դեմ մղվելիք պայքարից: Ձեն կարող խուսափել ընդհանուր գործից և մեր Հայրենիքի հավատացյալ մարդիկ, և թեև նրանք սկզբից աջակցում են նրա հաջողությանը, մենք՝ նրա ներկայացուցիչներս,

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսիի հրավերով հավաքվեցինք միասին, որպեսզի միավորենք և ուժեղացնենք մեր օգնությունը ժողովրդին՝ խաղաղության պայքարի համար ողջ աշխարհում:

Մեր կոնֆերենցիան մեծ աշխատանք է կատարել: Նա ծանոթացել է ՍՍՌՄ-ի գլխավորությամբ ժողովուրդների նվաճումներին խաղաղության պայքարի գործում, գնահատել է բոլոր երկրների քրիստոնեական եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների, եկեղեցական խմբակների և անձանց մասնակցությունն այդ պայքարում, հանրագումարի է բերել Սովետական Միությունում գտնվող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների այդ նույն գործունեությունը, նշել է հետագա խնդիրներն այդ բնագավառում և ուղերձ է ներկայացրել ողջ աշխարհի բոլոր եկեղեցիներին, կրոնական միավորություններին, հոգևորականությանը և բոլոր գավանանքների հավատացյալներին, որով կոչ է արել ուժեղացնել պայքարը խաղաղության համար:

Քննարկելով խաղաղության համար մղվող պայքարի վերաբերմամբ Սովետական Միությունում գտնվող եկեղեցիների և կրոնական միավորությունների առջև դրված խնդիրները՝ կոնֆերենցիան կենտրոնացրել է իր ողջ ուշադրությունը այնպիսի հարցերի վրա, ինչպիսին են՝ աջակցել բոլոր հասարակական հեռանկարներին, որոնք նպատակ ունեն ամրապնդելու խաղաղությունը ժողովուրդների միջև, մասնակից դարձնել այլ երկրների հավատացյալներին՝ գործուն մասնակցություն ունենալու խաղաղությունը պաշտպանելու խնդրում, դաստիարակել մեր երկրի հավատացյալներին անձնվիրական սիրո ոգով Հայրենիքի նկատմամբ, ամրացնել նրանց գիտակցորեն հանրօգուտ աշխատանքներում և քաղաքացիական պարտականությունների կատարման գործում, քարոզել խաղաղություն և ժողովուրդների իրավահավասարություն:

Հոգևորականությանը և աշխարհի բոլոր կրոնների հավատացյալներին նպատակ իր դիմումի մեջ մեր կոնֆերենցիան մատնանշել է խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշումները պաշտպանելու անհրաժեշտությունը, որն ընդգծել է համաշխարհային պատերազմը կանխելու ամենահասարակ և մատչելի ուղին, խելամիտ համաձայնությունների ուղին՝ ագրեսիան դատապարտելու, ընդհանուր զինաթափման, Կորեայում պատերազմը դադարեցնելու և խաղաղության պակտ կնքելու մասին:

Բուռն ոգեշնչությամբ և միահամուռությամբ մենք, զանազան դավանանքների ներկայացուցիչներս, դիմելով Ձեզ, քանկագի՛ն Իոսիֆ Վիսսարիոնովիչ, ողջույնի, նվիրվածության և ամենալավագույն ցանկությունների արտահայտությամբ մաղթում ենք ապրել Ձեզ երկա՛ր-երկա՛ր տարիներ՝ հուրախություն մեր ժողովրդի և բոլոր խաղաղասեր ու առաջադեմ մարդկության:

Ողջունելով Ձեր ջանքերը և խաղաղասիրական քաղաքականության կիրառման գործում Ձեր հետևողականությունը՝ մենք երջանիկ ենք վկայելու մեր երկրի բոլոր հավատացյալ մարդկանց վճռականությունը՝ բաժանելու ժողովրդի ջանքերը, նրա ուրախությունն ու տխրությունը և հետևելու նրա լավագույն ձգտումներին:

Մեծ երջանիկ եմ նույնպես հավաստելու մեր սերը դեպի Հայրենիքը՝ խաղաղությունն ամրապնդելու պայքարում ցուցաբերած մեր գործուն մասնակցությամբ և արտահայտելու Ձեզ, Իոսիֆ Վիսսարիոնովիչ, մեր ամուր հավատը արդարացի գործի վերջնական հաղթանակի խնդրում:

Դիմումը ստորագրել են՝

ԱԼԵՔՍԻ՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք:
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ՝ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս:
ԳԵՈՐԳ Զ.՝ Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց:
ՖԼԱՎԻԱՆ՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Հին-Ծիսական Արքեպիսկոպոս:
ԿԱԶԻՄԻԵՐԱՍ ՊԱԼՏԱՐՈԿԱՍ՝ Պաճևիժիսի և Վիլնյուսի Եպիսկոպոս, Կապիտուլ Փոխանորդ:
ՊՅՈՏՐ ՍՏՐՈԴՍ՝ Եպիսկոպոս, Ռիգայի Միտրոպոլիտի Տեղակալ. Լիեպայի թեմի Առաքելական առաջնորդ:
ԻՈԶԱՍ ՍՏԱՆԿԵՎԻՉՈՒՍ՝ Կանոնիկոս, Լիտվայում Կաունասի Ծայրագույն թեմի, Կայշյադորի և Վիլկավիշյան թեմերի առաջնորդ:
ՊՅԱՏՐԱՍ ՄԱԺՅԱԼԻՍ՝ Կանոնիկոս, Լիտվայում Տելշայի թեմի առաջնորդ:
ԻՈԱՆՆ՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Հին-Ուղղափառ Քրիստոնյաների Արքեպիսկոպոս:
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ՝ Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական Եկեղեցու Արքեպիսկոպոս:
ՅԱՆ ԿԻՅՎԻՏ՝ Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական Եկեղեցու Արքեպիսկոպոս:
ՅԱ. Ի. ԺԻԴԿՈՎ՝ Ավետարանական Քրիստոնյա-Մկրտչականների Համամիութենական Խորհրդի Նախագահ:
Գ. Ա. ՄԱՅԱՆՈՎ՝ Յոթերորդ Օրվա Ադվենտիստների Համամիութենական Խորհրդի Նախագահ:
Ա. Ֆ. ԳԱՆՁԻ՝ Անդրկարպատների Ռեֆորմատորական Եկեղեցու Դեկան:
Մ. Ս. ՍԵՐԳԵԵՎ՝ Հին-Ծիսական — Հնապատվորեցների Մոսկվայի Գրեոբրաժենսկու Միավորման Գործադիր Խորհրդի Նախագահ:
Ի. ՈՒ. ՎԱԿՈՆՅԱ՝ Ռիգայի Գրեբենշչիկովյան Հին-Ծիսական Համայնքի Խորհրդի Նախագահ, Ավագ քարոզիչ:
Ֆ. Ս. ԿՈՒԶՆԵՑՈՎ՝ Լիտվական ՍՍՌ Հին-Ծիսական Գերագույն Խորհրդի Նախագահ. քարոզիչ:
Մ. ՅԱ. ԿՈՒՅԳՐԵ՝ Էստոնական ՍՍՌ Մեթոդիստական Եկեղեցու Սուպերինտենդենտ:
Ի. Մ. ՄՈՆԱՑԵՆԿՈ՝ Բաքու քաղաքի Հոգևոր Քրիստոնյա-Մոլոկանների Համայնքի Գործադիր Խորհրդի Նախագահ:

Ա. Մ. ՌԵՄԻԶՈՎ՝ Թբիլիսի քաղաքի Հոգևոր Քրիստոնյա-Մոլոկան-ների Համայնքի Գործադիր խորհրդի Նախագահ:

ԱԼ-ՀԱՖԻԶ ԿԱՅԱՄՈՒԼԼԱ, ՇԱՔԻՐ ԻԲՆ ՇԵՅԽ ՈՒԼ-ԻՍԼԱՄ ԽԻԱԼԵԴԻՆՈՎ՝ Մուֆտի, ՍՍՌՄ Եվրոպական մասի և Սիբիրի մուսուլմանների Վարչության Նախագահ:

ԶԻԱՈՒԴԻՆ ԲԱԲԱԽԱՆՈՎ՝ Մոլլա, Միջին Ասիայի և Ղազախստանի Մուսուլմանների Հոգևոր Վարչության Նախագահի Տեղակալ:

ՄԱՀՈՄԵԴ ՀԱՋԱՆ ԿՈՒՐԲԱՆՈՎ՝ Հյուսիսային Կովկասի և Դաղստանի մուսուլմանների Հոգևոր Վարչության Նախագահ, Մուֆտիի Պաշտոնակատար:

ԱԼԻ-ՋԱԴԵ ԱԽՈՒՆԴ ԱՂԱ ՋԱՎԱԴ ՕՂԼԻ՝ Շեյխ ուլ-Իսլամ, Անդրկովկասի մուսուլմանների Հոգևոր Վարչության Նախագահ:

Ս. Մ. ՇԼԻՖԵՐ՝ Մոսկվայի Խմբագրական Սինագոգայի Ռաբբի և Հրեական Կրոնական Համայնքի Նախագահ:

Ի. Գ. ՇԵԽՏՄԱՆ՝ Կիևի Սինագոգայի Ռաբբի:

ԲԱՆԴԻԴՈ-ԽԱՄԲՈ ԼԱՄԱ ԴԱՐՄԱԵՎ ԼՈԲՍԱՆ-ՆԻՄԱ՝ ՍՍՌՄ Բուդդայականների Կենտրոնական Հոգևոր Վարչության Նախագահ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ ԳԵՈՐԳ Զ.Ը ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՆ
ՄՈՍԿՎԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Այն տարվա մայիսի 9—12-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՌՄ քրիստոնյա Եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերենցիան՝ նվիրված խաղաղության պաշտպանության հարցերին: Կոնֆերենցիային մասնակցեց նաև Հայոց Եկեղեցու ներկայացուցչությունն Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ: Կոնֆերենցիայում ելույթ ունեցող հոետորները ծանոթացրին իրենց հավատքների կատարած աշխատանքների հետ այդ ստվածահաճո գործի համար: Ի պատիվ խաղաղասեր հայ ժողովրդին և Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, պետք է ասել, որ Հայոց Եկեղեցին ներկա գտնվեց բաց հակառով, քրիստոնեական իր պարտականությունները բարեխղճորեն կատարած: Անհրաժեշտ ենք համարում հատուկ անդրադառնալ այն հատկապես աշխատանքին, որ կատարել է Հայոց Եկեղեցին վերջին տարիներին խաղաղության պահպանման գործում:

Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ Արևելքի հնագույն եկեղեցիներից մեկն է. իր հիմնադրման առաջին իսկ օրից, Քրիստի սիրո և խաղաղության բարձր գաղափարների շերմ հետևողներից ու պաշտպաններից մեկն է եղել և է այժմ: Հայոց եկեղեցիներում, հնուց ի վեր, սահմանված է որոշ անխախտ կարգ, որ հայ եկեղեցականը, ի պաշտոնե, պարտավոր է հավատացյալներին խաղաղություն քարոզել թե՛ եկեղեցում և թե՛ եկեղեցուց դուրս: Կանոնական դարձած հայկական աղոթքներն ունեն հատուկ մաղթանք խաղաղության մասին՝ ուղղված Սուրբ Աստվածածնին. «Մայր սուրբ սքանչելի լուսոյն,— ասվում է այնտեղ,— որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր և ցնծութիւն աշխարհի ծնար զՔրիստն Աստուած, աղաչեմք: Զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի, աղաչեմք»:

Նշանակալից է նաև այն, որ հայոց եկեղեցիներում, պատարագի սրբազան արարողության ամենախորհրդավոր բոպեին, դպիրները երգելով գիմում են Սուրբ Երրորդությանը հետևյալ սրտառուչ աղերսով.

«Ամենասուրբ Երրորդութիւն,

Տուր աշխարհիս խաղաղութիւն...»:

Քրիստոսավանդ խաղաղության այս վեհ գաղափարը ամենանվիրական գաղափարն է քարոզվել բազմաչարչար հայ ժողովրդի համար, որին սպասարկելու է կոչված Հայոց Սուրբ Եկեղեցին: Գտնվելով Արևելքի և Արևմուտքի խաչաձևող քառուղու վրա, նա հաճախ է տրոհվել Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ նվաճողների ոտքերի տակ, հաճախ է հաշակել պատերազմի դաժան պտուղները, ուստի և ավելի քան մի այլ ժողովուրդ գնահատել խաղաղության կենսական արժեքը:

Դարեր շարունակ խաղաղություն քարոզող և աղոթող Հայոց Սուրբ Եկեղեցին, հավա-

տարիս Փրկչի ավանդին, հարազատ իր դարավոր ավանդություններին, բնական է, չէր կարող չկողմնորոշվել, չէր կարող վճռական իր խոսքը չասել այն պատասխանատու պահին, երբ աշխարհի վրա նորից սկսեց կախվել պատերազմի սարսափը և խաղաղասեր բարի կամքի տեր մարդիկ սկսեցին համախմբվել՝ պայքարելու պատերազմի դեմ:

Խաղաղության համար պայքարելու առաջին վճռական ձայնը հայ եկեղեցական ասպարեզում, ինչպես պետք էր և սպասել, հնչեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Գեորգ Զ. հայրենասեր Հայրապետն առաջինը եղավ, որ 1949 թվականի ապրիլի 7-ին խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի նախապատրաստական կոմիտեին ուղարկած իր դիմումի մեջ բողոքեց պատերազմ հրահրողների դեմ և պահանջեց վճռապես հանդես գալ պաշտպանելու խաղաղությունը:

«Մենք այսօր իրավունք չունենք լռելու,— հայտարարեց նա,— երբ համայն մարդկության ապագա անվտանգությունն ու խաղաղ կյանքի խոստումը ենթակա է վտանգի, և տեսական պատերազմից հոգնած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառության առաջ: Մենք այսօր իրավունք չունենք լռելու, այլ պարտավոր ենք հանդես գալու և ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հակասում է համարյա ամբողջ մարդկության դավանած կրոնների սիրո և եղբայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին ու շահերին...»:

Միաժամանակ, Վեհափառ Հայրապետը հանձնարարեց Արևմտյան Եվրոպայի թեմերի կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանին՝ Հայոց Եկեղեցու անունից հանդես գալ Փարիզում գումարված խաղաղության կողմնակիցների առաջին կոնգրեսում և ջերմորեն պաշտպանել խաղաղության կողմնակիցների միջոցառումները: Հանգուցյալ Սրբազանը պարտաճանաչությամբ կատարեց Վեհափառ Հայրապետի հանձնարարությունը:

Նորին Սուրբ Օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսը նույն թվականի ապրիլի կեսերին հատուկ գրությամբ դիմեց Մեծի Տանն Կիլիկիո Նորին Սրբություն Գարեգին Կաթողիկոսին (որը գտնվում է Բեյրութում) և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություններին և կոչ արեց նրանց՝ «Ըստ ամենայնի զորավիգ լինել խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսին, հնչեցնել իրենց ձայնը բոլոր նրանց դեմ, որոնք ձգտում են նոր պատերազմ հրահրել, և միացնել իրենց ձայնը բոլոր նրանց ձայներին, որոնք իրենց ասպվածանման գործողություններով ձգտում են կասեցնել մարդկության գլխին կախված նոր արհավիրքը»: Նորին Սրբություն Գարեգին Կաթողիկոսը և Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները այդ ուղղությամբ արել են և այժմ անում են իրենց կարելին:

Այդ նույն ժամանակ Վեհափառ Հայրապետը շրջաբերական կոնդակով հանձնարարեց Սովետական Միության և Սփյուռքի բոլոր թեմական առաջնորդներին՝ հորդորելու հավատացյալ ժողովրդին՝ համոզված կանգնելու խաղաղության համար պայքարողների հետևում:

Ամենայն Հայոց Հայրապետությունն իր վճռական խոսքն ասաց նաև խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի նստաշրջանի բանաձևերին: 1950 թվականի ապրիլի 12-ին Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հատուկ որոշում ընդունեց, ուր ի միջի այլոց ասված է. «Քաղաքական ներկա խառնակ իրադրության մեջ, երբ մարդկությունը կանգնած է միլիոնավոր նոր զոհեր կլանող համաշխարհային նոր պատերազմի սպառնալիքի մղձավանջի առաջ, Հայոց Եկեղեցին՝ հավատարիմ իր ավանդական սկզբունքին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին և անվերապահ միանում է խաղաղության կողմնակիցների Համաշխարհային վեհաժողովի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի նստաշրջանի բանաձևերին»:

Ամենայն Հայոց Հայրապետության այդ որոշումը ընդարձակ մեկնաբանության ենթարկվեց, «Էջմիածին» կրոնական պաշտոնաթերթի 1950 թվականի մարտ-ապրիլ ամիսների խմբագրականում, որի վերնագիրն է «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑ է»:

1950 թվականի հունիսի 29-ին, երբ Հայկական ՍՍՌ խաղաղության կողմնակիցների ռեսպուբլիկական հանձնաժողովը որոշում ընդունեց ստորագրություններ հավաքել ատոմային զենքն արգելելու Դիմումի տակ, Ամենայն Հայոց Հայրապետությունը նեռագրեց իր բոլոր թեմերին, որպեսզի հայ հավատացյալներն իրենց գործուն աջակցությունը բերեն այդ նորնոր ձեռնարկությանը. միաժամանակ Վեհափառ Հայրապետը բողոքեց խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեին՝ Կորեայի բնակելի վայրերը Ամերի-

կայի զինվորականության կողմից տարածքին ոմբակոծելու և խաղաղ բնակչությանը կոտորելու համար:

Ամենայն Հայոց Հայրապետությունն ամեն կերպ աշխատել է սատար հանդիսանալ և խրախուսել խաղաղության համար կատարվող ամեն մի ձեռնարկություն ո՛չ միայն արտասահմանի և ՍՍՌՄ իր հավատացյալների շրջանում, այլ, ընդհանրապես, ամեն մի բարի գործ, որը որևէ ձևով նպաստում է խաղաղությանը: Առաջնորդվելով այդ սկզբունքով, Ամենայն Հայոց Հայրապետությունն անհրաժեշտ համարեց գերապատիվ Խորեն արքեպիսկոպոս Դրամբյանի գլխավորությամբ հատուկ պատգամավորություն ուղարկել Չեխոսլովակիա, Լուգաշովիցյում գումարված Քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանսին, որը տեղի ունեցավ 1950 թվականի հուլիսի 1—2-ին:

Եկեղեցականների խաղաղության համար մղած պայքարում խիստ կարևոր ձեռնարկություն է հանդիսանում Սովետական Միության երեք եկեղեցիների Պետերի՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատի և Ամենայն Հայոց Կաթողիկոս և Պայրագույն Պատրիարք Նորին Սուրբ Օծություն Գեորգ Զ.ի Դիմումը Քրիստոնյա աշխարհին 1950 թվականի օգոստոսի 5-ին Թբիլիսի քաղաքում: Ամենայն Հայոց Հայրապետությունը անհրաժեշտ համարեց իր պաշտոնաթերթի հատուկ համարը նվիրել այդ կարևոր իրադարձությանը և մասնայականացնել այն Սովետական Միության և արտասահմանի հավատացյալների լայն շրջանում: Արտասահմանի հայկական առաջադիմական ողջ մամուլը արտատպեց երեք Հովվապետների այդ Դիմումը և ջերմորեն արձագանքեց:

Գեորգ Զ. Կաթողիկոսի առաջարկությամբ, «Էջմիածին» ամսագրում հատուկ բաժին է հատկացվել խաղաղության ճարտի լուսաբանմանը՝ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ» խորագրի տակ, ուր տպվել են բազմաթիվ նյութեր:

Սովետական Հայաստանի հասարակությունը բարձր գնահատելով Գեորգ Զ. Կաթողիկոսի գործունեությունը՝ խաղաղության պահպանման գործում, նրան ընտրեց 1950 թվականի հոկտեմբերի 12-ին Մոսկվայում գումարված խաղաղության կողմնակիցների Համամիութենական կոնֆերենցիայի պատգամավոր, ուր և կոնֆերենցիան Վեհափառ Հայրապետին ընտրեց խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի անդամ:

Վեհափառ Հայրապետը խաղաղության կողմնակիցների Համամիութենական կոնֆերենցիայում ունեցած իր ելույթում շարադրեց քրիստոնեության սկզբունքը խաղաղության նկատմամբ և պահանջեց՝ վճռականապես հանդես գալ պատերազմի դեմ: «Քրիստոնեական կրոնը մարդուն համարում է տիեզերքի կատարելագույն էակը և տիեզերական կյանքի նպատակը,— հայտարարեց նա,— այդ տեսակետով է, որ Աստվածորդին ուղարկվում է աշխարհ, որպեսզի իր անձի զոհաբերությամբ փրկի մարդկությունը, ուրեմն, մարդը, կրոնական աշխարհայացքով, հանդիսանում է տիեզերական կյանքի կենտրոնական էակը, նորա նպատակը: Այլ տեսակետ չունի նաև գիտությունը: Մարդկային միտքը, որ ձգտում է հայտնաբերել տիեզերքի մեջ գոյություն ունեցող ուժերը, լուսաբանել տիեզերական կյանքի օրենքները և ճշմարտություններ հայտնաբերել, ինչո՞ւ համար, եթե ո՛չ միայն նորա համար, որ այդ բոլորը ծառայեն մարդու կյանքը կատարելագործելու, բավարարելու և նորան երջանիկ դարձնելու: Եվ ուրեմն պատերազմի հրձիգները ի՞նչ բարոյական իրավունք ունեն մարդու, այդ բարձրագույն էակի կյանքի հետ խաղալու»:

1950 և 1951 թվականների «Էջմիածին» ամսագրի համարներում, որոնք ուղարկվում են Սովետական Միության և արտասահմանի հայկական բոլոր եկեղեցիներին, սիստեմատիկաբար տպագրվել են խաղաղության վերաբերող խմբագրականներ, եկեղեցականների քարոզներ, տեղեկություններ բոլոր եկեղեցիների խաղաղության համար ձեռնարկությունների մասին և այլն: Արտասահմանի հայ առաջադիմական մամուլը արտատպել է նրանց մեծ մասը:

Վեհափառ Հայրապետը խաղաղության գաղափարին նվիրված հոդվածներ է հրապարակել «Էջմիածին» ամսագրում, որոնցից առանձնապես ուշադրություն արժանի է «ՍՈՒՐԲ ԵՎ ԲԱՐԻ ԶԵՌՆԱՐԿ» խորագրով հոդվածը, որ նախ լույս է տեսել «В защиту мира» ամսագրում և ապա արտատպվել արտասահմանի առաջադիմական մամուլում:

Ամենայն Հայոց Հայրապետության հանձնարարությամբ քարոզչական լայն աշխատանք է ծավալվել հայոց եկեղեցիներում՝ նվիրված խաղաղության գաղափարին: Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում խաղաղության նվիրված քարոզներ են խոսվել հետևյալ բնաբաններով. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ», «Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին», «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»

և «խաղաղության» ամենեցուն»: Քարոզիչներ են հանդիսացել՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ տեր Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը, գերաշնորհ տեր Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, Սուրբ Էջմիածնի միաբանության անդամ հոգեշնորհ տեր Կարապետ վարդապետը և ուրիշներ:

Նույն թեմաներով քարոզներ են խոսվել մայրաքաղաքի՝ Երևանի, ինչպես և հանրապետության բոլոր եկեղեցիներում: Քարոզիչներ են հանդիսացել Սուրբ Էջմիածնի միաբանության անդամ գերաշնորհ Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և բոլոր եկեղեցիների ավագ քահանաները:

Խաղաղության գաղափարին նվիրված քարոզներ են խոսվել Վրացական և Ադրբեջանական ՍՍՌ հայկական եկեղեցիներում: Առանձնապես անհրաժեշտ է նշել գերաշնորհ տեր Կարապետ արքեպիսկոպոսի և գերաշնորհ տեր Սուրեն արքեպիսկոպոսի այդ ուղղությամբ կատարած մեծ աշխատանքը:

Հայոց Եկեղեցին իր գործուն մասնակցությունն է ցուցաբերել խաղաղության կողմնակիցների Ռեսպուբլիկական կոնֆերենցիայում: 1951 թվականի սեպտեմբերի 12-ին գումարված ժողովում Հայոց Եկեղեցին ունեցել է իր ներկայացուցիչը ի դեմս գերաշնորհ տեր Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի: Վեհափառ Հայրապետը, ողջունելով խաղաղության կողմնակիցների Ռեսպուբլիկական կոնֆերենցիան, կոչ է արել հայ հավատացյալ ժողովրդին՝ «դնել իրենց ստորագրությունները խաղաղության պաշտպանության Համաշխարհային խորհրդի Կոչի տակ՝ աջակցելով մարդկային կյանքի անվտանգությանն ու նորա ապագա երջանիկ կյանքին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Գեորգ Զ.ը խաղաղության կողմնակիցների Համամիութենական կոնֆերենցիայի պատգամավոր է ընտրվել նաև անցյալ տարի նոյեմբերի 26—28-ին Մոսկվայում գումարված կոնֆերենցիայում: Մերունգարող Հայրապետը, չնայած այդ օրերին փոքր ինչ տկար էր, բայց այնքան մեծ նշանակություն տվեց կոնֆերենցիայի աշխատանքներին, որ ուզեց անպայման ներկա գտնվել:

Վեհափառ Հայրապետը այդ կոնֆերենցիայում ելույթ ունեցավ և առաջ քաշեց կարևոր մի ճարտ՝ պատերազմի դեմ քրիստոնյա եկեղեցիների համատեղ հանդես գալու ճարտը: «Մենք նպատակահարմար ենք գտնում և համոզված ենք,— հայտարարեց նա.— որ եթե Կաթոլիկ, Բողոքական և Պրավոսլավ մեծ եկեղեցիները և միացյալ փոքր ազգերի ազգային եկեղեցիները, ինչպես նաև մյուս կրոնները համախմբվեն և կազմակերպվեն և խմբովին հանդես գան հօգուտ խաղաղության և ընդդեմ պատերազմի, ոչ միայն դրական արժեք կունենա և խաղաղության հաջողության կնպաստե, այլ և կբարձրանա եկեղեցու հեղինակությունը և կշեշտադրվի նորա անհրաժեշտությունը կյանքի համար»:

Հայաստանյայց եկեղեցին խաղաղության գործում իր աշխատանքը Սովետական Միության մեջ տարել է բարյացակամ մթնոլորտում: Այդ նույնը չի կարելի ասել արտասահմանի որոշ երկրների նկատմամբ, մասնավորապես, Հյուսիսային Ամերիկայի, Ֆրանսիայի և մի քանի այլ երկրների: Հայոց եկեղեցին ավել է խաղաղության համար պայքարի իր առաջին հանատակները, դրանց թվում Արևմտյան Եվրոպայի կաթողիկոսական պատվիրակ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը, խաղաղության առաջին կոնգրեսի մասնակիցը, որը ճիվանոր վիճակում ոստիկանատուն է տարվել, Ֆրանսիայի կառավարության կողմից արտաքսման հրաման է ստացել, իսկ այս բոլորը ծառ է անդրադարձել սրբազանի հոգեկան ապրումների վրա և նա հանկարծամահ է եղել:

Սակայն, այս ամենը չեն կարող շեղել Հայ եկեղեցուն քրիստոնեական ճշմարիտ ուղուց: Հայոց եկեղեցին ամենահին քրիստոնյա եկեղեցին է աշխարհում. նա առաջին անգամ (303 թ.) պաշտոնական կրոն հանդիսացավ քրիստոնեությունը: Այդ օրերից նա հավատարիմ է մնացել իր դավանած փրկչավանդ սիրո և եղբայրության գաղափարին և այդ գաղափարով էլ նա հաստատուն պիտի ընթանա առաջիկայում:

Մոսկվայում հրավիրված ՍՍՌՄ քրիստոնյա եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների կոնֆերենցիան, անշուշտ, նոր ազդակ կհանդիսանա ինչպես բոլոր կրոնական համայնքների, այնպես և Հայոց Սուրբ Եկեղեցու համար՝ շարունակելու իր պայքարը խաղաղության պահպանման գործում:

ՏԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

(Թբիլիսիի վանական Ս. Գեորգ եկեղեցու վանահայր)

ՍՍՌՄ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

Բրաստանի հայոց թեմական խորհրդի անունով Մայր Աթոռից ստացած հեռագիրը հայտնում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի առաջիկա ուղևորությունը դեպի Մոսկվա՝ մասնակցելու այնտեղ կայանալիք ՍՍՌՄ քրիստոնյա եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերենցիային՝ նվիրված խաղաղության պաշտպանության հարցերին, որի կազմակերպումն իր վրա էր վերցրել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին։

Հեռագիրը միաժամանակ հայտնում էր, որ մեզ մեծ պատիվ է շնորհվել՝ լինել Վեհափառ Հայրապետի շքախմբում։

Մայիսի 4-ի ուշ երեկոյան Երևան—Մոսկվա գնացքով Թբիլիսիի կայարանում կանգ առավ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գեորգ Զ-ը իր շքախմբով։

Կանգառի միջոցին Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար վագոն բարձրացան Վրաստանի հայոց թեմական խորհրդի անդամները, որոնց հետ ծերունազարդ Հայրապետն ու գերաշնորհ տեր Վահան արքեպիսկոպոսը աշխույժ զրույց ունեցան՝ ծանոթանալով թեմի գործերին։

Միանալով թանկագին հյուրերին և լրացնելով շքախմբի կազմը, մենք գրավեցինք փափուկ վագոնի մեզ հատկացված մասնաբաժինը։

Անսահման ուրախություն պատճառեց մեզ Վեհափառ Հայրապետի առողջական վիճակը, որի մասին ինքը, Վեհափառը, արտահայտվում էր գոհունակությամբ։

Ամբողջ ճանապարհին վայելելով Վեհափառի սիրալիր ուշադրությունը և ունկնդրելով նրա կենսուրախ զրույցները, երեքօրյա ճանապարհորդությունը անցկացրինք անհուն բերկրանքով, որպիսի տպավորությունները միշտ վառ կմնան մեզանից յուրաքանչյուրի սրտում։

Ի վերջո երեք օրվա մեր ճանապարհորդությունը հասավ իր վախճանին. գնացքը մոտեցավ մեր մեծ Հայրենիքի մայրաքաղաքին՝ Մոսկվային։ Մեր գնացքը ավարտեց իր երկար ուղին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար վագոն բարձրացավ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի պատգամավորությունը՝ Պրավոսլավ եկեղեցու ավանդավոր գործիչներից մեկի՝ հայտնի հռետոր միտրոպոլիտ Նիկոլայ Կրուտիցկու գլխավորությամբ։ Սիրալիր ողջագուրանքից հետո, գերաշնորհ միտրոպոլիտը թևանցուկ արած Նորին Վեհափառությանը, իջան վագոնից կայարան, իսկ այնտեղից ավտոներով տեղափոխվեցինք մայրաքաղաքի ամենաառաջնակարգ նորակառույց հյուրանոցներից մեկը։ Մենք բոլորս Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք

Հայ եկեղեցու պատմական ուսումնասիրության կոնֆերենցիայի մասնակիցները Ս. Էջմիածնի մոտ գտնվող Ճաղարիի վանքում

Նորին Սրբություն Այեքսիի հյուրերն էինք համարվում։

Համաձայն մշակված ծրագրի, համագումարը բացվելու էր մայիսի 9-ին, առավոտյան ժամը 11-ին, ռուսական հոգևոր կենտրոն Զագորսկ քաղաքում՝ Հոգևոր Ճեմարանի շենքում։ Այդ օրը մեզ տանող ավտոները սլացան դեպի Զագորսկ, որը գտնվում է Մոսկվայից 75 կիլոմետր հեռավորության վրա։

Հոգևոր Ճեմարանի ընդարձակ սրահներում ու դահլիճներում միրաիր իրար էին ողջունում 18 ազգությունների և կրոնական 34 համայնքների ներկայացուցիչների բազմաթիվ պատգամավորներ՝ իրենց շքախմբերի անդամների հետ։ Բոլորն էլ համակված էին մի ընդհանուր համամարդկային գաղափարով, որը ջնջել, վերացրել է բոլոր արգելքները, բոլոր արհեստական խոչընդոտները — այդ խաղաղության պաշտպանությունն էր։

Ներկա էին նաև բազմաթիվ հյուրեր, սովետական և արտասահմանյան թերթերի թղթակիցներ։

Հանդիսավոր իրադրության մեջ համագումարը բացված հայտարարեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Այեքսին, որի երևալն ամբիոնի վրա առաջացրեց ներկաների փուռն ծափահարությունը։

Իր բացման ճառում Պատրիարքը հայտարարեց, որ այս նշանավոր համագումարի նախաձեռնության պատիվը պատկանում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.-ին. նա է հուշել նման կոնֆերենցիա հրավիրելու գաղափարը։

Ընտրվում է գործնական նախագահություն, որի կազմի մեջ մտան Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Այեքսին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ը, Համայն Վրաստանի Կաթողիկոս Մելքիսեդեկը, Անդրբկովկասի մահմեդականության հոգևոր պետ Շեյխ ուլ-Իսլամ Ալի-Զադեն և ուրիշներ։

Խաղաղության և ժողովուրդների միջև համագործակցության հարցի վերաբերյալ մեծ ու բովանդակալից ճառով հանդես եկավ միտրոպոլիտ Նիկոլայ Կրուտիցկին՝ շեշտելով Ուղղափառ Եկեղեցու կատարած դերը ընդհանուր խաղաղության գործում և իր անձնական մասնակցությունը՝ զանազան երկրներում այդ հարցի վերաբերյալ կայացած համագումարներում, որպես խաղաղության պաշտպանության Համամիութենական կոմիտեի անդամ։

Ամբիոնի վրա է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը։

Խաղաղության դատի ջերմ պաշտպան Հովվապետը բովանդակալից և փաստերով հագեցած իր ճառով ընդգծեց այն փառահեղ ուղին, որ անցել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ փարձր պահելով խաղաղության դրոշը։ Նորին Սրբությունը կոնֆերենցիայի մասնակիցներին ծանոթացրեց այն խոշոր աշխատանքի հետ, որը ներկայումս կատարում է մեր Եկեղեցին՝ աշխարհի բոլոր ծայրամասերում՝ ընդհանուր խաղաղությունն ու ժողովուրդների միջև համագործակցությունն ամրապնդելու համար։

Քրիստոնեական Հնագույն Եկեղեցու Պետի ելույթը ներկաներն ընդունեցին բուռն ծափահարություններով։

Զանազան լեզուներով ելույթներ ունեցան կրոնական բոլոր հոսանքների ներկայացուցիչները, որոնք համագումար էին ժամանել աշխարհի բոլոր կողմերից, ի թիվս որոց Հոլանդիայից, Դանիայից, Արևմտյան Եվրոպայի շատ երկրներից, մինչև անգամ փուդդայական կրոնի ներկայացուցիչները։

Թվում էր, թե ոչինչ անհասկանալի չկա այդ բազմազան լեզուներից և ոչ մեկում։ Բոլոր ներկաների ու հեռատորների դեմքերին զոհունակության փայլ կար, մեծ և շնորհակալ գործ կատարելու խոշոր շեշտվածություն, աստվածային մեծ պատգամն իրագործելու ազնիվ վճիռ— «խաղաղություն ամենեցուն»։

Եվ Զագորսկում կայացած համագումարը այդպես էլ որոշեց— «խաղաղություն ամբողջ աշխարհին»։

Համագումարն ունեցավ երեք նիստ՝ մայիսի 9-ին, 10-ին և 12-ին։ Վերջին նիստում, ներկաների բուռն ծափահարությունների ներքո, ընդունվեց ողջույնի նամակ խաղաղության մեծ դրոշակիր Ի. Վ. Ստալինին։

Համագումարը ծավալուն Դիմումով կոչ արեց աշխարհի բոլոր ծագերում աշխատող հոգևորականներին՝ ուժեղացնել խաղաղության ամրապնդման պայքարը և անել ամեն հնարավորը այդ սրբազան գործը ամուր հիմքերի վրա դնելու համար։

Մայիսի 11-ին համագումարի բոլոր մասնակիցները հրավիրված էին Մոսկվայի

Պատրիարքական տաճարը պատարագի։ Ցերեկվա ժամը 11-ին բազմաթիվ ավտոմեքենաներով հյուրերը կանգ առան հոյակապ տաճարի առջև, ուր նրանց դիմավորելու էին ելել ռուս բարձրաստիճան հոգևորականներ։ Տաճարի շուրջը, մերձակա փողոցներում և բուն տաճարում խոնված էր հավատացյալների հոծ բազմություն։ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատգամավորությանը հատկացված էր առանձին տեղ տաճարում։ Մեր շքախումբը նկատելի կերպով վայելում էր ներկաների սիրալիր ուշադրությունը։

Պատարագից հետո, տաճարում ներկա եղող հավատացյալները ջերմագին ողջույններով ուղեկցեցին բոլոր պատգամավորներին՝ առաջացնելով խիստ ջերմ և հուզիչ տեսարան։

Համագումարն ավարտելուց հետո, Հոգևոր Ճեմարանի ընդարձակ դիհլիճներից մեկում կայացավ համերգ՝ մայրաքաղաքի երաժշտական լավագույն ուժերի մասնակցությամբ։ Ելույթ ունեցավ Հոգևոր Ճեմարանի ուսանողների և Հոգևոր Սեմինարիայի սաների երգեցիկ խումբը՝ ռեգենտ Ի. Ն. Ակսիոնովի ղեկավարությամբ։ ՌՍՖՍՌ և Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանն ի միջի այլ համարների, սքանչելի կատարումով երգեց հայկական հանրածանոթ «Միծեռնակը»։

Աստեղից մեզ առաջնորդեցին վանքի թանգարանը, ուր խնամքով պահված են հնադարյան եկեղեցական սրբազան անոթներ, զգեստներ, սրբանկարներ։ Մեր ուշադրությունը գրավեց ապակեպատ պահարանում խնամքով պահված հայկական մի խաչ՝ 1237 թվականի գործ։

Մյուս օրը, մայիսի 13-ին, համագումարի մասնակիցները հրավիրված էին մեր իշխանած հյուրանոցի ընդարձակ սեղանատունը, ուր Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին կազմակերպել էր ճոխ հյուրասեղան։

Հաջորդ օրը, մայիսի 14-ին, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրոնական գործերի խորհրդի նախագահ Պոլյանսկու և Պրավոսլավ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կարպովի հրավերով ճնացիոնալ հյուրանոցի սեղանատունը տեղի ունեցավ ճաշկերույթ, ի պատիվ արտասահմանյան եկեղեցական գործիչների։

Համագումարի մասնակիցների համար, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքարանի աշխատողների նախաձեռնությամբ կազմակերպվեցին մի շարք էքսկուրսիաներ՝ մայրաքաղաքի տեսարժան վայրերին և նորակառույցներին ծանոթանալու համար։

Համագումարի մասնակիցները ամբողջ կազմով, մի ամբողջ օր շրջեցին Մոսկովյան հոյակավոր Կրեմլը և հմուտ էքսկուրսավարի ուղեկցությամբ ծանոթացան այն մի ամբողջ շարք պատմական հուշարձաններին ու թանգարանային հավաքածուներին, որոնցով այնքան հարուստ է Կրեմլը։ Թանգարաններից մեկում էքսկուրսավարը, նկատելի սիրալիրությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատգամավորության ուշադրությունը հրավիրեց այն ականակուռ գահի վրա, որը Հին-Ջուղայի հայերը նվիրաբերել են Ալեքսեյ Թեոդորովիչ կայսեր։

Մյուս օրը հերթական այցելությունը կատարեցինք դեպի ռուսական կերպարվեստի հոյակավոր թանգարանը՝ Տրետյակովսկու պատկերասրահը։ Եղանք նաև Լենինյան լեռներում, ուր կառուցված է մեր ժամանակի խոշորագույն շենքերից մեկը՝ գիտությունների հիասքանչ պալատը։ Այստեղ տեղավորվելու է Լոմոնոսովի անվան Մոսկվայի Պետական համալսարանը, իր բազմաթիվ լաբորատորիաներով ու փորձակայաններով։ Տասնյակ հեկտարներ գրավող այս շենքը մի վիթխարի կոթող է, որ պատկառանք է պատճառում դիտողին և խորհրդանշում սովետական կառուցողական տեխնիկայի ամենակարող հզոր թափը, ռուս մեծ և ազնիվ ժողովրդի ստեղծագործական տաղանդը։ Այնուհետև գնացինք Վ. Ի. Լենինի դամբարանը։

Ամեն տեղ պատգամավորությունը հանդիպում էր մայրաքաղաքի բնակչության սիրալիր և հոգատար վերաբերմունքին, նրա ջերմ ընդունելությանը։ Թանգարաններում, թատրոններում, նկարասրահներում, ամենուր, հոգևորականների նկատմամբ ցուցաբերվում էր բացառիկ հարգանք։

Մոսկվայի մետրոն իր ստորերկրյա պալատներով, ժամանակակից տեխնիկայի ամենախիզախ և ամենաբարդ նվաճումների փարթամությամբ, սրահների գեղարվեստական հարուստ ձևավորումներով, քանդակների առատությամբ և գրագիտությամբ, լույսերի, բազմերանգ մարմարների, զար-

դանկարների կատարելությամբ անջնջելի տպավորություն թողեց բոլորիս վրա։

Ամենուր զգացվում է խաղաղությունն ամրապնդելու մեծ գործը, որ Մոսկվայում տրոփում է արտակարգ թափով։

Ի վերջո, մայիսի 15-ին մենք հրավիրվեցինք վայելելու հաճույքը մի աննման ուղևորության, որը կատարեցինք Մոսկվա-Վոլգա ջրանցքով։ Մեզ հնարավորություն տրվեց մոտիկից դիտելու և ծանոթանալու այն բարդ ու աննման տեխնիկային, որով այնքան առատորեն հագեցված է այդ մեծ ջրուղին։

Շոգենավի վրա հյուրերը վայելեցին ճաշկերույթ, որը նախորդների նման անցավ ջերմ փարեկամության և փոխըմբռնման մթնոլորտում։ Արտասահմանյան պատգամավորներից ոմանք իրենց բաժակաճառերում խոսեցին իրենց տպավորությունների մասին, շեշտելով կրոնի և եկեղեցու լիակատար ազատության փաստը ՍՍՌՄ-ում, որի մասին իրենց մոտ հաճախ միտումնավոր զրպարտություններ են հերյուրում մարդատեցության սև ուժերը, պատերազմի հրձիգների կամակատարները։

Մայիսի 15-ի երեկոյան Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին, իր շքախմբով, այցելեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գեորգ Զ-ին՝ հյուրանոցում։ Մտերմական այս զրույցի ժամանակ կարելի էր տեսնել՝ թե որքան սիրալիր է ու անկեղծ Եկեղեցու երկու Պետերի փոխհարաբերությունը։ Վեհափառը իր խորին շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբություն Ալեքսիին՝ իր և իր հոգևորականության ցուցաբերած բացառիկ ուշադիր վերաբերմունքի համար Հայոց Եկեղեցու պատգամավորության նկատմամբ։

Մայիսի 16-ից հետո համագումարի մասնակիցները սկսեցին մեկնել իրենց տեղերը։ Վեհափառ Հայրապետը իր շքախմբով մեկնեց Մոսկվայից Մոսկվա-Երևան ճեպընթաց գնացքով, մայիսի 21-ին։

Մենք հրաժեշտ տվինք մեր մեծ Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվային՝ մեզ հետ տանելով վառ հիշատակն այն հոգեթով օրերի, որ անցրինք խաղաղության վեհ գործի համար մի սիրտ, մի մարդու նման պայքարի ելած մեր բաղմաթեղու կարգակիցների հետ միասին։

Տերը թող հաստատուն խաղաղություն պարգևի աշխարհին, ամեն։

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ ՍՈՒՍՄ ԳՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

Սարգելի՛ բարեկամներ, խաղաղության պաշտպանման հարցին նվիրված մեր կոնֆերենցիայի անդամնե՛ր, բանկացի՛ն եղբայրներ.

Հանձինս ձեզ ամբողջ սրտով ողջունում եմ խաղաղության պաշտպաններին, ձեզ, որ ներկայացնում եմ այս կոնֆերենցիայում մեր մեծ երկրի բոլոր եկեղեցիները և կրոնական միավորումները: Ողջունում ու շնորհակալություն եմ հայտնում ձեզ իմ հրավերին ցուցաբերած այդքան համերաշխ արձագանքի համար: Շնորհակալ եմ և հավատացած, որ դուք բոլորդ ժամանել եք այստեղ անկեղծ պատրաստակամությամբ՝ միասին քննարկելու միջազգային խաղաղության ամրապնդման գործին մեր կողմից ցույց տրվելիք օգնության հարցը:

Պետք է ասել, որ մենք ժամանակին ենք հավաքվել, հատկապես պատասխանատու մի ժամանակ, երբ յուրաքանչյուր վերահաս օրը կոչ է անում ժողովուրդների խաղաղ կյանքը պաշտպանելու համար նոր աշխատանքի: Մենք բոլորս արդեն քիչ չենք աշխատել մեր ժողովուրդների հետ միասին այդ բարի նպատակի համար, բայց խաղաղության թշնամիների մեքենայությունները շարունակվում են, ուստի և անհրաժեշտ է, որ մենք բոլորս հրապարակենք մեր զգոնությունը, որպեսզի կանխենք կործանարար պատերազմը և մարդկության համար ապահովենք խաղաղության ու բարգավաճման օրեր:

Այն բանից հետո, երբ 1948 թվականին ինքնանկախ ուղղափառ եկեղեցիների ղեկավարներ ու ներկայացուցիչներ Մոսկվայում ժողովվելով սկիզբ դրին խաղաղության համար մղվող պայքարում իրենց գործողությունների միասնությանը, նրա օրինակը և կոչերը այդ մեծ գործի մեջ ներգրավեցին բոլոր դավանանքներին պատկանող հավատացյալ մարդկանց զգալի մասսաներ: Այս կապակցությամբ ուզեցինք օգտվել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.-ի մեզ հայտնած բարի մի մտահղացումից՝ խաղաղության գործին ցույց տրվելիք օգնության համար հրավիրել ո՛չ միայն քրիստոնյա եկեղեցիների, այլև բոլոր կրոններին պատկանող հավատացյալների կոնֆերենցիա, նպատակ դնելով համախմբելու Սովետական Միության մեջ գտնվող բոլոր եկեղեցիների ու կրոնական միավորումների գործունեությունը՝ ի պաշտպանություն խաղաղության:

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին բաց է անում կոնֆերենցիան

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ

Առանց կանխորոշելու, թե կոնֆերենցիան ինչ դատողություններ կանի խաղաղության ամրապնդման օգտին գործողությունների միասնական ծրագիրը մշակելու մասին, մենք չենք կասկածում, որ արդասավոր է բուն այն գաղափարը, որի համաձայն հարկավոր է միավորել աշխարհում գոյություն ունեցող բարոյական ուժերը մի ձգտման համար, այն է՝ դատապարտել պատերազմի նախապատրաստման և հրահրման քաղաքականությունը և աջակցել ժողովուրդների կառավարություններին, որպեսզի նրանք համաձայնության գան միջազգային կյանքի այդ կարևորագույն հարցի նկատմամբ:

Մենք համոզված ենք, որ այդման վսեմ, ազնիվ խնդրի լուծմանը խանգարել չեն կարող մեր դավանած կրոնների տարբերությունները, որովհետև մենք բոլորս հավատում ենք միակ Աստծուն և բոլորս ընդունում ենք սերն ու խաղաղությունը որպես մարդկային համակեցության բարձրագույն սկզբունքներ: Ուստի մարդկային և միջազգային հարաբերություններում սիրո և խաղաղության յուրաքանչյուր խախտում չի կարող մեր մեջ եռանդուն հակազդեցություն առաջ չբերել:

Անարդարացի պատերազմը Կորեայում, այնտեղ, նմանապես և Չինաստանում բակտերիոլոգիական զենքի գործադրումը, նոր համաշխարհային պատերազմի նախապատրաստումը— անվավիճակ այն փաստերը, որոնք այլ կերպ չի կարելի անվանել, քան հանցագործություն ընդդեմ սիրո և արդարության, և չկա ոչ մի կասկած այն մասին, որ այդ հանցագործությունների դեմ պայքարելը յուրաքանչյուր հավատացյալ մարդու պարտադիր ու սրբազան գործը պետք է լինի և այդ հատկապես նրա հավատի պատճառով:

Այդ հենց այդպես էլ է մեր իրականության մեջ. մեր երկրում գոյություն ունեցող բոլոր եկեղեցիներն ու միավորումներն արդեն զգալի ներդրում են կատարել խաղաղության պաշտպանման գործի մեջ և չեն ընդհատում իրենց ջանքերն այդ ուղղությամբ, որի մասին վկայում է այս բազմամարդ կոնֆերենցիան:

Սակայն մեր ջանքերը խաղաղության համար՝ ազդու կլինեն, եթե մենք դրանք միավորենք և նույն բանի համար կոչ անենք բոլոր եկեղեցիներին և ժողովուրդներին պատկանող հավատացյալ մարդկանց: Այդպիսի ուժը գործելով հոգուտ ճշմարտության, հանուն սիրո, կոգնի կաշկանդելու և սանձելու պատերազմի գազանին:

Լի հավատով մեր ընդհանուր գործի և այն բանի նկատմամբ, որ Աստված կոչեցի ժողովուրդներին ընդհանրական խաղաղությամբ, ես մի անգամ ևս ողջունում եմ սույն կոնֆերենցիայի մասնակիցներին և մաղթելով Աստծու օգնությունը կոնֆերենցիայի աշխատանքների սկզբնավորության, ցանկություն եմ հայտնում օգտավետ կերպով քննարկելու այն խնդիրները, որ դրված են մեր երկրի եկեղեցիների ու կրոնական միավորումների առջև՝ խաղաղությունը պաշտպանելու գործում:

Ես հրավիրում եմ նախագահության մեջ տեղեր գրավել արտասահմանյան մեր բանկագին հյուրերին՝ Ռումինական Եկեղեցու Բարձր Սրբազնության միտրոպոլիտ Սեբաստիանին, Հոլանդիայից ժամանած հյուր հովիվ Հուգո վան Դալենին և խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահ Ն. Ս. Տիխոնովին:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՆԻԿՈԼԱՅԻ ՋԵԿՈՒՑՈՒՄԸ ՍՍՌՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԽՄՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ[1]

Բանկագի՛ն եղբայրներ, խաղաղության պաշտպանության ասպարեզի բանկագի՛ն բարեկամներ.

Մեր կոնֆերենցիան կյանքի է կոչված ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանության սրբազան ու վսեմ գործում, նոր պատերազմը կանխելու գործում մեկ ավանդ ևս մտցնելու մեր փափագով։

Մենք գիտենք, որ դեռևս այն ժամանակ, երբ նոր էր նշվում հաղթանակը մարդկության ամենաոխերիմ թշնամու՝ ֆաշիզմի դեմ, իմպերիալիստական որոշ շրջաններում արդեն հասունանում էր վաղեմի միտքը մեր երկրի թուլացման մասին, նրա ռեսուրսները զավթելու մասին, և, Համաշխարհային երկրորդ պատերազմը հաղթական վախճանին մոտենալուն զուգընթաց, միջազգային քաղաքականության ընդերքում պատրաստվում էին երրորդ համաշխարհային պատերազմի պլանները՝ Սովետական Միության դեմ։

Չնայած այն մի շարք համաձայնագրերին, որոնք պետք է որոշեին ժողովուրդների հետպատերազմյան հարաբերությունները՝ բարեկամության և համագործակցության ոգով, այդ պլանները պատերազմից հետո դարձան մի քանի դաշնակից կառավարությունների միջազգային քաղաքականության հիմքը։ Նույնիսկ Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որ ստեղծվել է խաղաղությունն ու միջազգային անվտանգությունը պաշտպանելու համար, սկսեց հետզհետե հարմարվել նոր պատերազմի այն կողմնակիցների կամակատար գործիքի դերին, որոնք այդ միջազգային օրգանում ղեկավարիչ դիրք էին գրավել։

Այնինչ այն ժողովուրդները, որոնք սառտիկ էին տառապել ֆաշիզմի բռնակալությունից և համաշխարհային պատերազմի սարսափներից, Միավորված Ազգերի Կազմակերպության ստեղծման գործում տեսնում էին իրենց ամենանվիրական հույսերի իրականացման հնարավորությունը։ Նրանք հավատացած էին, որ պատերազմի սարսափները կանցնեն պատմության գիրկը և դաս կծառայեն սոցիալ-տնտեսական ու միջպետական հարաբերությունների այնպիսի վերակառուցման համար, որը մարդկությանը հնարավորություն կտա վերջնականապես հրաժարվելու բռնության մեթոդներից և բոլոր հարցերը լուծելու արդարացիության և փոխադարձ հարգանքի ոգով։ Հենց այդպես է շարադրված ՄԱԿ-ի Կանոնադրությունը, որն իր անդամներին պարտավորեցնում է միջազգային կոնֆլիկտները լուծել բանակցությունների միջոցով, չդիմել ուժի և պաշտպանել ժողովուրդների իրավունքը՝ իրենց ճակատագիրը անօրինելու հարցում, զարգացնել միջազգային համագործակցությունը՝ ժողովուրդների կենսամակարդակը բարձրացնելու նպատակներով և խրախուսել ընդհանուր հարգանքը մարդու իրավունքի նկատմամբ։

Մարդկության այդ հույսերը մթագնեցին Սովետական Միության ու ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ վարվող ասառը պատերազմի քաղաքականությամբ ու սպառազինությունների այն մրցավազ-

1. Ամենապատիվ Նիկոլայ միտրոպոլիտի զեկուցումը բերվում է որոշ կրճատումով։— ԽՄԲ.



Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ ամենապատիվ Նիկոլայը զեկուցելիս

ֆով, որը հենց թելադրված էր կասկածանքներով, այն չափով, որ չափով ժողովուրդների ճակատագրերը յուրովի տնօրինելու դիտավորություններով։ Սկսվեց պատերազմի պրոպագանդան, որը փորձում է այդ դիտավորությունները քողարկել «պաշտպանության» և ուժերի հավասարակշռության բարեմիտ նկատառումներով. գործի դրվեցին ժողովուրդներին մասսայական ոչնչացման նորագույն զենքերով վախեցնելու մեթոդները։ Դրա հետ միասին սկսվեց արշավանքը ժողովուրդների ազատության և անկախության դեմ, նրանց կենսամակարդակի դեմ, սոցիալական վերափոխումների բոլոր պլանների դեմ, և աշխարհը բաժանվեց նոր և կործանիչ պատերազմի մռայլ հեռանկարի առջև կանգնած երկու ճակատի՝ պատերազմի ճակատի և խաղաղության ճակատի։

Մեր խնդիրը չէ տալ ստեղծված դրության քաղաքական վերլուծությունը։ Մենք քաղաքականությունից հեռու ենք։ Այն, ինչ որ մենք մինչև այժմ ասացինք, մարդկանց մեծամասնության ընդհանուր տեսակետն է տիրող իրադրության նկատմամբ։ Մեր գործն է այս տեսակետը խորացնել մինչև բարոյական հիմքերը և դրությունը լուսաբանել ներքին մղումներով, որոնք, ըստ մեր կրոնական հայացքների, կազմում են բոլոր իրադարձությունների ակզբնահիմքը։ Մեր հայացքի առջև բացվում է ողբերգական մի պատկեր. անվստահությունը նոր պատերազմի հրձիգների մեջ ծնում է հակառակորդից ուժեղ դառնալու ձգտում, որպեսզի նրան թելադրեն իրենց կամքը՝ բանակցությունների կամ պատերազմի դեպքում. սպառազինությունների մրցավազքը դառնում է մեր ժամանակի ամենատագնապալի ախտանիշը։

Բայց այդ տագնապն է՛լ ավելի է ուժե-

Կոնֆերենցիայի նախագահությունը

կան հայացքների, կազմում են բոլոր իրադարձությունների ակզբնահիմքը։ Մեր հայացքի առջև բացվում է ողբերգական մի պատկեր. անվստահությունը նոր պատերազմի հրձիգների մեջ ծնում է հակառակորդից ուժեղ դառնալու ձգտում, որպեսզի նրան թելադրեն իրենց կամքը՝ բանակցությունների կամ պատերազմի դեպքում. սպառազինությունների մրցավազքը դառնում է մեր ժամանակի ամենատագնապալի ախտանիշը։

Բայց այդ տագնապն է՛լ ավելի է ուժեղանում, երբ մենք համոզվում ենք հակադիր կողմերի ներքին մղումների տարբերության մեջ։ Մեկ կողմը սկզբունքորեն դեմ է պատերազմին՝ որպես վեճերի լուծման մեթոդի։ Նա բոլոր ջանքերը լարում է, որպեսզի բոլոր ժողովուրդների համար ապահովի խաղաղությունը, այն որպես կյանքի զոյավիճակ և բարգավաճման պայման հռչակելով։ Եվ ոչ միայն նա հաստատում է այդ, այլև հսկայական եռանդով աշխատում է խաղաղության գործի համար։

Այնինչ մյուս կողմն ակնհայտորեն վախենում է խաղաղությունից և, չնայած խաղաղասիրական իր հայտարարություններին, անում է ամեն բան, որպեսզի պատերազմ

առաջացնի. ստեղծում է ավերածության և կյանքի բնաջնջման զենքեր, ժողովուրդներին հյուծում է անընդհատ սպառազինությունների ծանր բեռով, ռազմական բախումների պրովոկացիաներ է սարքում և մեր մոլորակի մի քանի կետերում արդեն պատերազմ է վարում, ընդ սմին կիրառելով մարդկանց ոչնչացման ամենագարհուրելի, տմարդի և բարոյականության ու կրոնի կողմից դատապարտված միջոցներ։

Իսկ ինչո՞ւ է այդ երկրորդ կողմը խաղաղությունից այդքան վախենում, որ շտապում է նրա կայունացումը պատերազմով կանխել։ Այս հարցին պատասխան չի կարող ծառայել միայն անվստահությունը հակադիր կողմի նկատմամբ, որովհետև դա չի արդարացվում վերջինի ո՛չ վարքով, ո՛չ էլ հայացքներով։ Հետևապես, խաղաղությունից վախենալու պատճառն անվստահությունից ավելի խորն է. դրա պատճառը կյանքը և բոլոր ժողովուրդներին, ամբողջ աշխարհը իրեն և իր կարգին հնազանդեցնելու ուղղակի դիտավորությունն է՝ համաշխարհային տիրապետության մոլուցքով բռնված։

Հնարավոր չէ դրան հասնել առանց բռնության, և պատերազմը արդարացնելու համար ստեղծվում է գերբնակվածության տեսությունը, «ավելորդ բերանների» տեսությունը, որից, ինչպես թունավոր բույսը, աճում է ոչնչացնելու փիլիսոփայությունը՝ պատերազմի փիլիսոփայությունը։ Ինչպես շարը մտմտացող սրտի արգասիք, այդ փիլիսոփայությունն ու նրա կողմից սրբագործվող պրակտիկան, քրիստոնեական տեսակետով, ներկայացնում են ավետարանի ուղղակի ժխտում, սիրո ուժի նկատմամբ ուղղակի թերահավատություն, սիրո, որ կազմում է քրիստոնեական կրոնի հիմքը։

Ճշմարտանման է և այն ընդհանուր հայացքը, որը մարդանց մի որոշ շրջանի կողմից գիտակցորեն պատերազմի ձգտելը բացատրում է կյանքի կողմից նրանց նվիրագործությամբ։ Հենց այդ նվիրագործության մեջ է ապրում պատերազմը վերջին խաղամիջոց դարձնելու գայթակղությունը՝ համաշխարհային տիրապետություն շահելու ապարեզում։

Այդպիսին է այն աղբյուրը, որտեղ թաքնված է պատերազմի վտանգը՝ բոցկլտուն մլմլացող կայծը, որը պատրաստ է ամեն րոպե բորբոքվել, վերածվել համաշխարհային հրդեհի, եթե իր ժամանակին չարգելափակվեն կրակի տարածման բոլոր ուղիները։ Այդ նախազգուշությունը կախված է ժողովուրդների կամքից և գգաստությունից, ժողովուրդներ, որոնք, միանալով խաղաղության պաշտպանների հզոր շարժման մեջ, ուժ կունենան իրենց կառավարություններին հարկադրելու, որպեսզի սրանք հրաժարվեն անվստահության քաղաքականությունից և, այսպիսով, կկարողանան մարել պատերազմի ամեն տեսակ օջախ։

1. ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՍՍՌՄ-Ի ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Ի հակակշիռ պատերազմի իմպերիալիստական քաղաքականության, Սովետական պետությունն իր գոյության առաջին օրերից պայքար է մղել հանուն խաղաղության, հանուն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո գումարված Սովետների II համագումարը դիմեց պատերազմող բոլոր պետությունների կառավարություններին ու ժողովուրդներին՝ առաջարկելով անհապաղ կնքել արդարացի և դեմոկրատական հաշտություն։ Եվ այնուհետև, իր զարգացման բոլոր փուլերում, Սովետական պետությունը շարունակում էր կիրառել խաղաղության հետևողական քաղաքականություն՝ ելնելով Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներից՝ սոցիալ-տնտեսական երկու սիստեմների խաղաղ գոյակցության, համագործակցության և մրցակցության հնարավորության վերաբերյալ։ Այդ քաղաքականությունն իր արտահայտությունը գտավ Միավորված Ազգերի Կազմակերպությունում Սովետական Միության մի շարք առաջարկություններում՝ սպառազինությունները կրճատելու մասին, ազգային սպառազինություններից ատոմային զենքը հանելու և միջազգային խաղաղության ամրապնդման այլ միջոցների մասին։

Խաղաղության կողմնակիցների առաջին ցույցը հանդիսացավ կուլտուրայի գործիչների Վրոցլավի կոնգրեսը, որը տեղի ունեցավ 1948 թվականի ապրիլ ամսին։ Դեկտեմբերին այդ ցույցը շարունակեց կանանց կոնգրեսը՝ Բուդապեշտում։ Իսկ 1949 թվականի փետրվարին Կուլտուրայի միջազգային կապի կոմիտեն և Կանանց միջազգային ֆեդերացիայի բյուրոն ստանձնեցին խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրես հրավիրելու նախաձեռնությունը։

Թվում էր, թե դժվար էր անցնել այն սահմանը, որը մարդկանց բաժանում էր իրարից ոչ միայն աշխարհագրական, այլ և՛ ազգային, և՛ քաղաքական, և՛ կրոնական տեսակետներից։ Բայց խաղաղության փափագը հանդիսացավ բոլոր տարբերություններից այնքան ավելի ուժեղ, որ խաղաղության կողմնակիցների կոնգրես հրավիրելու վերաբերյալ կուլտուրայի գործիչների կոչը ամենալայն արձագանք գտավ։ Կարճ ժամանակում կոնգրեսին հարեցին 600.000.000 մարդ՝ 72 երկրներում։ Սպառազինությունների աճումը, ռազմական դաշինքները ոգեշնչող և պատերազմները բռնությամբ խաղաղեցնող թշնամանքին և ատելությանը պատմության մեջ առաջին անգամ հակադրվեց կայուն հավատը՝ խաղաղության պաշտպանների ուժերի միասնության նկատմամբ։

Այն վսեմ ու մարդասիրական նախաձեռնությունը, որպիսին 1949 թվականի ապրիլ ամսին հանդիսացավ խաղաղության կողմնակիցների Համաշխարհային առաջին կոնգրեսը Փարիզում և Պրագայում, խաղաղասեր բոլոր մարդկանց մեջ առաջացրեց մեծ հույսեր։

Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսն իր Մանիֆեստով ժողովուրդների մեջ արթնացրեց նրանց դեմ կախված վտանգի գիտակցումը և մերկացրեց նրանց, ովքեր պատռում են տարբեր սոցիալական սիստեմների գոյակցության հնարավորությունը հաստատող համաձայնագրիրը, ովքեր խախտում են ՄԱԿ-ի կանոնադրությունը, ովքեր մերժում են բանակցությունների և զինաթափման վերաբերյալ առաջարկությունները։ Որոշելով խաղաղության կողմնակիցների նպատակներն ու ծրագիրը, կոնգրեսը դրեց Հշմարտության և բանականության պաշտպանության միասնական ճակատի սկիզբը, որպեսզի հասարակական կարծիքը պատերազմի կողմն ուղղող պրոպագանդան լիովին վնասազերծ լինի։ Այդ ճակատը ղեկավարելու համար ստեղծվեց Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտե։

Միանգամայն բնական է, որ Սովետական Միությունը՝ այդ մեծ տերությունը, որտեղ չկան ու չեն կարող լինել ագրեսիվ պատերազմի կողմնակիցներ, ամենաեռանդուն կերպով մասնակցեց Վրոցլավի և Փարիզի կոնգրեսներին։ Սովետական ներկայացուցիչները մտան Մշտական կոմիտեի կազմի մեջ, որն սկսեց շարունակել Համաշխարհային կոնգրեսի ձեռնարկած աշխատանքները։

Ի պաշտպանություն խաղաղության շարժման այդ ամիսներից սկսեց իսկական համաշխարհային չափեր ընդունել և շատ երկրներում համաժողովրդական շարժման բնույթ ստացավ։ Այն ժողովուրդները, որոնք ֆաշիստական բռնակալությունից իրենց փրկվելու համար պարտական էին Սովետական Միությանը, ի դեմս նրա տեսնում էին միջազգային խաղաղության պատվարին, որը բարձր է բռնում խաղաղ, ստեղծարար աշխատանքի դրոշը, և ընթացան նրա ետևից ամբողջ աշխարհում խաղաղության համար հետևողական պայքար մղելու գործում։ Այդ ժողովուրդներին սկսեցին հարել հասարակ մարդիկ մեր մայր ցամաքի բոլոր երկրներում։ Մեր մեծ Առաջնորդ Ի. Վ. Ստալինը երկրագնդի բոլոր անկյուններում դարձավ խաղաղության համար մղվող պայքարի դրոշը։ (Ծափահարություններ)։

Մոսկվայում 1949 թվականի օգոստոսին տեղի ունեցավ խաղաղության կողմնակիցների Համամիութենական առաջին կոնֆերենցիան, որը շատ բանով ծառայություն մատուցեց նոր պատերազմի հրձիգների դեմ ժողովրդական պայքարի հետագա խորացման գործին։

Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեին և բոլոր երկրներում շարժման բոլոր մասնակիցներին ուղղված Դիմումի մեջ կոնֆերենցիան նշում էր բոլոր խաղաղասեր ժողովուրդների կամքի և գործողությունների միասնության անհրաժեշտությունը՝ որպես պատերազմի հրձիգների պլանները վիժեցնելու կարևորագույն միջոցառում, և հայտարարեց, որ բոլոր ժողովուրդների ազգային անկախության, դեմոկրատական ազատությունների և խաղաղ համագործակցության սրբազան պաշտպանությունը կազմում է խաղաղության ճակատի կարևորագույն խնդիրը, որովհետև նա մոտիկ է ու հասկանալի յուրաքանչյուր հասարակ մարդու սրտին՝ քաղաքական համոզմունքներից, ռասայից, ազգությունից և դավանանքից անկախ։

Պատերազմի հրձիգների ստեղծած դրության հետևանքով այդ խնդիրը հարկ եղավ լուծել դժվարին պայմաններում. Ատլանտյան պայմանագիրը վավերացված էր, Ցապոնիայում և Արևմտյան Գերմանիայում խաղաղության դահիճներին թույլատրվել էր վերականգնել իրենց ռազմական հզորությունը, հույն ժողովրդի դեմ սկսած դինված ելույթը պաշտպանություն ստացավ իմպերիալիստներից, վերջինների դաղութային քաղաքականությունը շարունակում էր պատերազմի օջախներ բորբոքել Վիետնամում, Հունաստանում, Ինդոնեզիայում և Մալայում, իսկ սպառազինությունների մրցավազքը ժողովուրդներին ենթարկում էր էլ

ավելի խիստ շահագործման ու թշվառացման։

Ուստի, պահանջվում էին խաղաղության կողմնակիցների է՛լ ավելի եռանդուն գործունեություններ և է՛լ ավելի ընդարձակ չափերով։ Ահա թե ինչո՛ւ Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեն որոշեց 1949 թվականի հոկտեմբերի 2-ին անցկացնել խաղաղության համար պայքարելու միջազգային օր և 1949 թվականի օգոստոսին դիմեց բոլոր երկրների տղամարդկանց ու կանանց՝ կոչ անելով այդ օրը ցուցադրել խաղաղության գործում իրենց անհաղթահարելի կամքը։

Խաղաղության համար պայքարելու միջազգային օրը բոլոր երկրներում նշվեց նոր պատերազմի ծրագրերի դեմ բողոքի և ընդդիմադրության ամենաբազմազան արտահայտումներով և իմպերիալիստներին ցույց տվեց խաղաղության կողմնակիցների աճող համախմբվածությունն ու ուժը, ցույց տվեց նաև արդեն հաստատված միջազգային կապերի կայունությունը։

Գրեթե այդ նույն ժամանակ բազմամիլիոն չին ժողովուրդը գործնականորեն լուծում էր իր ազգային անկախության խնդիրը և դա նա լուծեց 1949 թվականի հոկտեմբերի 1-ին Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան ստեղծելով։ Նա թոթափեց ծախու ռեակցիոն իշխանության լուծը, իր բախտը վերցրեց իր սեփական ձեռքերի մեջ և միացավ խաղաղության ընդհանուր ճակատին, որը գլխավորում է Սովետական Միությունը։ Հենց միանգամից այդ ճակատի հզորությունն աճեց այնքան, որ ամբողջ մարդկության մեկ երրորդ մասն ազատ ու կազմակերպված կերպով, իր ճշմարտացիությանն ու ուժի լրիվ գիտակցումով, կանգնեց նոր պատերազմի հրձիգներին դեմ-հանդիման՝ ամբողջ մարդկության համար խաղաղությունը պաշտպանելու և ապահովելու վճռականությամբ։

Միջազգային խաղաղության մյուս կարևոր գործոնը հանդիսացավ Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի կազմավորումը այդ նույն 1949 թվականի հոկտեմբերին։ Եվրոպայի բուն կենտրոնում երևան եկավ մի խաղաղասեր պետություն, որի գոյությունը, խաղաղասեր Սովետական Միության գոյության հետ միասին, Եվրոպայի ժողովուրդներին հույս էր ներշնչում, որ անցյալում պատերազմի և ավերածությունների գործին ուղղված ջանքերն այժմ կարող են ուղղվել դեպի խաղաղ ստեղծագործություն։

Բայց իմպերիալիստական տերությունները շարունակում էին ուժեղացնել պատերազմի նախապատրաստությունը։ Նրանք ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի IV սեսիայում (1949 թվականի աշնանը) մերժեցին նոր պատերազմի նախապատրաստության մասին, ատոմային զենքն արգելելու և հինգ մեծ տերությունների միջև խաղաղության ամրապնդման Պակտ կնքելու մասին սովետական առաջարկությունները։ Խաղաղության կողմնակիցների գործողություններին սկսեցին դաժանորեն հետապնդել առանձնապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Անգլիայում։ Ուստի պահանջվում էին նոր ջանքեր, որպեսզի ընդարձակվի ազգային շարժումն ի պաշտպանություն խաղաղության և պայմաններ ստեղծվեն բոլոր ժողովուրդների ակնկալություններին համապատասխանող խաղաղության վերաբերյալ առաջարկությունները կառավարությունների կողմից քննարկելու համար։

Այդ առաջարկություններն իրենց վրա բևեռեցին բոլոր երկրների հասարակական ուշադրությունը և հետագա գործողությունների հիմք ծառայեցին ընդդեմ պատերազմի հրձիգների պլանների, որոնք միաժամանակ ստացան ջախջախիչ հարված՝ Սովետական Միության և Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի միջև բարեկամության դաշինքի և փոխադարձ օգնության վերաբերյալ 1950 թվականի փետրվարին կնքված պայմանագրի շնորհիվ։ Այդ իրադարձության կապակցությամբ մեծ տպավորություն գործեցին նաև խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի 1950 թվականի փետրվարին բոլոր երկրների պառլամենտներին արված նոր առաջարկությունները՝ ռազմական բյուջեների և բանակների թվային քանակության անհապաղ կրճատման միջոցով սպառազինությունների մրցավազքը դադարեցնելու և ատոմային ռումբն արգելելու մասին երկու հարցերը քննարկելու վերաբերյալ։

Մամուլից բոլորին հայտնի է, թե ինչպես դիմավորեցին Մշտական կոմիտեի այս նախաձեռնությունը Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունները։

Շարժման հաջողությունների հետ միասին աճեցին և ժողովուրդների հույսերը։ Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի 1950 թվականի մարտի սեսիայում արդեն քննարկվում էր վստահության մթնոլորտ հաստատելու հարցը, առանց որի չի կարելի կողմերի համաձայնության հույս ունենալ։ Բայց դրա համար պահանջվում էր, որ կապիտալիստական ու սոցիալիստական երկրների դայակցության և նրանց համագործակցության հնարավորության ու ցանկա-

լիությունն նկատմամբ լինի համոզվածություն, որ քաղաքականության հիմքում դնել այդ հիմնական սկզբունքը, ինչպես այդ անում է ՍՍՌՄ-ը,— իր ճառում ասաց Ժոլիո-Կյուրին,— նշանակում է հենց դրանով բացառել ագրեսիվ ամեն մի մտադրություն։ Այդ ժամանակ կստեղծվի վստահության մթնոլորտ, որն անհրաժեշտ է խաղաղության համաձայնությունների համար։

Բայց սպառազինությունների հետևանքով սաստկացող անվստահության պայմաններում հարկավոր է ուժից զրկել պատերազմի այնպիսի հիմունք, ինչպիսին ատոմային զենքն է։ Ուստի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի սեսիան կոչ ընդունեց ատոմային զենքն անպայման արգելելու և պատերազմի հանցագործ հայտարարելու այն կառավարությանը, որն առաջինը կկիրառի այդ զենքը։

Այդ կոչը հանդիսացավ պատերազմը սանձազերծելու ծայր աստիճանի մի լուրջ խոչընդոտ, որովհետև հնարավոր ագրեսորին ժողովուրդները կանխապես դատապարտում էին։ Բոլոր երկրներում սկսվեց Ստոկհոլմի կոչի տակ ստորագրությունների հավաքման կամպանիա։ ՍՍՌՄ Գերագույն Սովետը 1950 թվականի հունիսին որոշում ընդունեց կոչի պահանջները պաշտպանելու մասին և հայտարարեց իր պատրաստակամությունը՝ մյուս պետությունների օրենսդիր օրգանների հետ համագործակցել խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի առաջարկությունների իրականացման համար անհրաժեշտ միջոցներ մշակելու և գործադրելու գործում։ Շարժման աճումն ուժեղացավ։ Զանազան երկրներում ստեղծվեցին խաղաղության պաշտպանության ազգային կոմիտեներ և հազարավոր տեղական կոմիտեներ։

Ստոկհոլմի կոչը պաշտպանելու կամպանիան առաջացրեց պատերազմի հրձիգների կատաղի դիմադրությունը, բայց նրանց հայածանքները խաղաղության կողմնակիցների դեմ և ատոմային ռումբի արգելման նկատմամբ բնակչությանը միայն օգնում էին ատոմային պատերազմի ամբողջ վտանգավորությունը և այն կանխելու անհրաժեշտությունը գիտակցելու գործում։ Ուստե Ստոկհոլմի կոչի տակ ստորագրությունների թիվն օրըստ օրե աճում էր և հանրաքվեի վերջում հասավ գրեթե 500.000.000-ի։ Դա նշանակում է, որ կոչին միացավ երկրագնդի ամբողջ բնակչության մոտ քառորդ մասը։

Ստորագրությունների հավաքման կամպանիայի հետ միասին տեղի էր ունենում նաև խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնգրեսի նախապատրաստությունը, որի գումարման մասին որոշում էր կայացել Մշտական կոմիտեի Ստոկհոլմի սեսիայում։ Այդ ժամանակ արդեն սանձազերծվել էր պատերազմը Կորեայում, և երկրորդ կոնգրեսի գումարման նախապատրաստությունն ընդունեց լայն բացատրական աշխատանքի բնույթ՝ բնակչության բոլոր խավերի շրջանում, ժողովուրդներին կոչ էր արվում գործուն դիմադրություն ցույց տալ նրանց ագրեսիվ քաղաքականությանը, ովքեր հրման էին տվել չրաժնային ռումբ ստեղծելու մասին, ովքեր սպառնում էին ատոմային ռումբ գործադրել Կորեայում և անսահման չափերով պատերազմի պրոպագանդա էին մղում։

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում ծագում էին նոր նպատակներ և խաղաղության պաշտպանության շարժումը ընդունում էր հետզհետե ավելի շոշափելի, ավելի կազմակերպված ձևեր։ 1950 թվականի օգոստոսին Մշտական կոմիտեի Պրագայի սեսիան առաջ մղեց նոր խնդիրներ, որոնք պետք է բարի կամքի մարդկանց է՛լ՝ ավելի լայն շրջաններ ներգրավեին ու միավորեին —դրանք էին սպառազինությունների ընդհանուր կրճատումը, պատերազմի պրոպագանդայի արգելումը և կորեական կոնֆլիկտի խաղաղ լուծումը։

Սովետական Միությունը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի V սեսիայի (1950 թվականի աշնանը) քննարկմանը մտցրեց նոր պատերազմի սպառնալիքը վերացնելու և խաղաղության ու անվտանգության մասին Հայտարարության նախագիծը։ Պատերազմի պրոպագանդան դատապարտելու, ատոմային զենքն արգելելու, հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու և ռազմական ուժերը մեկ երրորդով կրճատելու վերաբերյալ այդ հայտարարության առաջարկությունները մերժեց Ասամբլեայի Ամերիկայի կամակատար մեծամասնությունը, բայց նրանք արժանացան աշխարհի բոլոր երկրների ժողովրդական մասսաների ամենաջերմ պաշտպանությանը։

Խորացնելով խաղաղության պաշտպանության շարժման իմաստը, բոլոր այդ խնդիրները Ստոկհոլմի կոչի պաշտպանության հետ միասին դարձան ազգային այն կոնֆերենցիաների քննարկման առարկա, որոնք պատվիրակներ ընտրեցին Համաշխարհային երկրորդ կոնգրեսի համար, և պատահական չէ, որ դրանք արտացոլվեցին նրա որոշումներում և մանիֆեստում։

Կոնգրեսի հենց նախօրեին, 1950 թվականի հոկտեմբերին կայացավ խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերենցիան, որտեղ սովետական

ժողովուրդը քննարկեց խաղաղության համար մղված պայքարում ձեռք բերած իր նվաճումները, պատվիրակներ ընտրեց Համաշխարհային երկրորդ կոնգրեսի համար և ընտրեց Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված կազմ։ Պատվիրակությունը ցուցում ստացավ հավաստել խաղաղության գործի նկատմամբ մեր նվիրվածությունը և Խաղաղության Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Պրագայի կոնֆերենցիայի որոշումները մեր կողմից լիովին պաշտպանելը։

Համաշխարհային երկրորդ կոնգրեսը, որը, Շեֆֆիլդի փոխարեն,— ուր պատվիրակներին չթույլատրեց անգլիական կառավարությունը,— կայացավ Վարշավայում 1950 թվականի նոյեմբերին, հանդիսացավ ամբողջ աշխարհում խաղաղության կողմնակիցների ուժի և միասնության մի հզոր ցուցադրում։ 82 երկրներից ժամանած ավելի քան 2.000 պատվիրակներ կազմեցին ժողովուրդների մի իսկական ասամբլեա, որ գումարվում էր միջազգային վտանգավոր բարդությունների պայմաններում, երբ Կորեայում մոլեգնում էր պատերազմը, Արևմտյան Գերմանիան ու Ճապոնիան կանգնել էին վերազինման ուղու վրա, սպառազինությունների մրցավազքն ուժեղանում էր և Միավորված Ազգերի Կազմակերպությունը չէր արդարացնում իր նշանակությունը։

Բայց դժվարությունն է՛լ ավելի բարձրացրեց կոնգրեսի այն որոշումների գաղափարական ու գործնական արժեքը, որոնք գործունեության մի ամբողջ ծրագիր կազմեցին խաղաղության պաշտպանության համար։ Այդ ծրագիրն իր արտահայտությունը գտավ ժողովուրդներին ուղղված մանիֆեստում և Միավորված Ազգերի Կազմակերպությանն ուղղված Դիմումի մեջ։

Խաղաղության Համաշխարհային խորհուրդ հիմնադրելով, համաշխարհային պատերազմ հրահրելու դեմ մղվող պայքարը թևակոխեց խաղաղության պաշտպանության համար նշված ծրագիրը կազմակերպված կերպով կենսագործելու նոր փուլ։

1951 թվականի փետրվարին Խորհրդի Բեռլինի նստաշրջանը քննարկեց և ընդունեց որոշումներ, որոնք գծեցին տվյալ պայմաններում խաղաղության համար միակ ուղին՝ խաղաղության պաշտպանության, աստիճանական զինաթափման և ժողովուրդների համագործակցության մասին փոխադարձ պարտավորությունների ուղին։

Տարակույս չկա, որ Խաղաղության Պակտի իրագործմամբ մարդկության պատմության մեջ սկսվելու է բոլոր ժողովուրդների համագործակցության մի խաղաղ դարաշրջան, անկախ նրանց սոցիալական սիստեմներից։ Այդ երանության գիտակցությամբ քարի կամքի մարդիկ փութացին ստորագրել Խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումը, որպեսզի մեծ տերությունների ղեկավարներին կանգնեցնեն միմյանց հանդիպելու ու համաձայնության գալու անհրաժեշտության առաջ։ Սովետական Միության մեջ ամբողջ չափահաս բնակչությունը՝ գրեթե 118.000.000 մարդ, ստորագրեցին Դիմումը, որովհետև խաղաղության պաշտպանության գործը սովետական մարդկանց համար դարձել էր պարտականություն, բարոյական պարտք, կյանքի անխզելի տարր։ Խաղաղության գործում հենց այդպիսի լիարժեք ավանդ մուծեցին նաև ժողովրդական դեմոկրատիայի երկրները։

Ի պատասխան Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կանգրեսի կոչի, ՍՍՌՄ Գերագույն Սովետը 1950 թվականի մարտին ընդունեց խաղաղության պաշտպանության մասին օրենք, որը պատերազմի պրոպագանդան սահմանում է որպես մի ծանրագույն և քրեական պատժելի հանցագործություն։ Հունգարիան, Ռումինիան, Բուլգարիան, Չեխոսլովակիան, Լեհաստանը, Ալբանիան, Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկան ու Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկան ընդունեցին նույնպիսի օրենքներ։

Խաղաղության գործի համար հսկայական նշանակություն ուներ «Պրավդայի» թղթակցին 1951 թվականի հոկտեմբերին Ի. Վ. Ստալինի պատասխանը ատոմային ռումբի վերաբերմամբ։ ՍՍՌՄ-ում ատոմային ռումբի տեսակներից մեկի փորձարկումը տագնապ առաջացրեց իմպերիալիստական շրջանների երկրների անվտանգության նկատմամբ։ Այդ առթիվ Ի. Վ. Ստալինն ասաց, որ «Այդպիսի տագնապի համար ոչ մի հիմք չկա, որովհետև «ԱՄՆ-ի գործիչները չեն կարող չիմանալ, որ Սովետական Միությունը ոչ միայն դեմ է ատոմային զենքի գործադրմանը, այլև կողմնակից է նրա արգելմանը, կողմնակից է նրա արտադրության դադարեցմանը։ Սովետական պետության ղեկավարի այս հայտարարությունը մի հսկայական ավանդ հանդիսացավ խաղաղության գործում և ուժեղ հարված հասցրեց պատերազմի հրձիգների պլաններին։

Խաղաղության համար մղվող պայքարում ժողովուրդների նոր նվաճում հանդիսացան Խաղաղության Համաշխարհային խորհրդի Վիեննայի սեսիայի (1951 թվականի նոյեմբերին) որոշումները, որոնք նվիրված են զինաթափման հարցին և Մերձավոր ու Միջին

Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների ինքնորոշման հարցին։

Այդ որոշումներին արձագանքելով կյանքում դրանք մարմնավորելու պատրաստակամությամբ, սովետական ժողովուրդը, հանձինս խաղաղության կողմնակիցների 1951 թվականի նոյեմբերին Համամիութենական երրորդ կոնֆերենցիա ուղարկած իր ներկայացուցիչների, վերստին իր վճռականությունը հաստատեց՝ անհողդողդ կերպով պաշտպանել խաղաղության գործը, հավատացած լինելով, որ այդ արդար գործը կհաղթի։

Օսլոյում սույն թվականի մարտի վերջին կայացավ խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի նստաշրջանը։ Նրա որոշումներում վերստին իրենց արտահայտությունը գտան ժողովուրդների կենսական ակնկալությունները, նրանց անհողդողդ կամքը՝ բոլոր ուժերով պաշտպանել խաղաղության վսեմ գործը, վիժեցնել պատերազմի իմպերիալիստական հրձիգների չարամիտ դիտավորությունները։ Սեսիան ամփոփեց հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի տակ ստորագրությունների հավաքման համաշխարհային շարժման արդյունքները և խաղաղության կողմնակիցներին տվեց ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման ու ամրապնդման համար մղվող պայքարում մի ծավալուն ծրագիր։

«Ի. Վ. Ստալինի պատասխանը ամերիկյան թերթերի մի խումբ խմբագիրների հարցերին», որ հրապարակվեց սույն թվականի ապրիլի սկզբին, պատմական նշանակություն ունի և անգնահատելի ավանդ է խաղաղության գործում։ Այդ պատասխանն է՛լ ավելի է ամրապնդում բարի կամքի բոլոր մարդկանց հավատը խաղաղությունը պաշտպանելու և համաշխարհային նոր պատերազմի վտանգը խափանելու հնարավորության նկատմամբ, մի ազգակ՝ խաղաղության պաշտպանության համար է՛լ ավելի անձնուրաց կերպով պայքարելու գործում։ Ի. Վ. Ստալինի պատասխանը Սովետական կառավարության հետևողական խաղաղասիրական քաղաքականության ամենափայլուն մի նոր վկայությունն է։

Միջազգային կյանքի իրադարձությունների ընթացքը մեզ է՛լ ավելի է համոզում, որ աշխարհի ժողովուրդները, Սովետական Միության գլխավորությամբ, խաղաղության համար մղվող պայքարում արդեն հասել են նշանակալից հաջողությունների և այդ ուղղությամբ շարունակում են ընթանալ դեպի է՛լ ավելի նորանոր նվաճումներ։ Ճիշտ է, պատերազմի վտանգը չի վերացել, բայց կան բոլոր նշանները, որ ճգնաժամը կլուծվի արդար գործի հաղթանակով։

Խաղաղության կողմնակիցների շարժումը մեր ժամանակի ամենախոշոր փաստն է, որը նշանակում է, որ երկրագնդի բնակչության մի զգալի մասը գիտակցել է խաղաղության և նրա գաղափարների համար պայքարելու գործում մարդկանց միասնության անհրաժեշտությունը։ Խաղաղության պաշտպանության գործում սոսսիալական, ազգային, քաղաքական և կրոնական տարբերությունների հաղթահարումն այդ բանի լավագույն ապացույցն է։ Խաղաղության համար մղվող պայքարում միավորվել է մարդկության մի հսկայական մասը. մոտավորապես 500.000.000 մարդ ստորագրել են Ստոկհոլմի Կոչի տակ և արդեն ավելի քան 600.000.000 մարդ՝ խաղաղության Պակտ կնքելու պահանջի տակ։

Այդպիսի միահամուռություն միջազգային հարաբերությունների պատմության մեջ երբեք չի եղել։ Դա բացառիկ երևույթ է ըստ իր նշանակության և բարոյական տեսակետից։ Պահանջելով արգելել ատոմային զենքը՝ մարդկանց մասսայական բնաջնջման զենքը, առաջին հանրաքվեն հանդիսացավ մարդկության ոգևորության աղբյուր։ Իսկ երկրորդ հանրաքվեն, որը բացահայտեց ժողովուրդների վերաբերմունքը խաղաղության Պակտի գաղափարի նկատմամբ, արտահայտեց համերաշխության ոգևորությունը, և այդ ուժը, որ ոգեշնչում է խաղաղության կողմնակիցներին, չի կարող չհաղթանակել։

Պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարում ժամանակակից ժողովուրդներն ունեն և ուրիշ էական նվաճումներ։ Ագրեսիան բնորոշելու ուղղությամբ իրավաբանական բոլոր ոլորտներից անցնելով, խաղաղության պաշտպանները հարցին մոտեցան գործնականապես և ագրեսիան անվանեցին զինված հարձակում՝ մեկ պետության կողմից մյուսի վրա, թեկուզ ինչ առիթով էլ լինի։ Բայց ամենակարևորն այն է, որ ագրեսիվ պատերազմը ճանաչվեց որպես հանցագործություն։

Խաղաղության համար մղվող պայքարում ձեռք բերած հաջողությունների արդյունքների գնահատման գործում մենք մեր երկրի նկատմամբ ունեցած հպարտությամբ ենք խոսում խաղաղության գործում Սովետական Միության միշտ ավելի և ավելի աճող նշանակության մասին։ ՍՍՌՄ-ը խաղաղության դրոշակակիրն է։ Սովետական ժողովրդի գործուն մասնակցության շնորհիվ, մարդկության մեծ հանճար և խաղաղության համար մարտնչող առաջին մարտիկ

Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, խաղաղության կողմնակիցների շարժման գործում մյուս երկրների ավելի և ավելի մեծ թվով մարդկանց համար բացահայտվում է ճշմարտությունը՝ նրա խաղաղ ձգտումների մասին։ Այդ ճշմարտությունը հաստատվում է մեր երկիրն այցելող բոլոր ազնիվ մարդկանց կողմից և կենսագործվում է Սովետական կառավարության կողմից միջազգային հարաբերություններում։ Մեր խոսքերը չեն տարբերվում գործից, և այդ ճշմարտությունը դառնում է բոլոր ժողովուրդների սեփականությունը։

Միևնույն ժամանակ պատերազմի հրձիգների պլաններն ու դիտավորությունները ավելի և ավելի են մերկացվում՝ մարդկության առջև հրապարակ հանելով նրանց բարոյազուրկ էությունը։ Վերջին կիսամյակում ագրեսիվ կառավարությունների հեղինակությունը նկատելիորեն ընկավ, որի մասին են վկայում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի VI (վերջին) նստաշրջանում նրանց մի շարք նախագծերի և առաջարկությունների կրած անհաջողությունները։ Ամերիկա-անգլիական բլոկի այդ անհաջողությունները հաջողություններ հանդիսացան այն ժողովուրդների համար, որոնք, Սովետական Միության գլխավորությամբ, պայքար են մղում հանուն խաղաղության՝ ամբողջ աշխարհում։

2. ՍՍՌՄ-Ի ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Մենք ցույց տվեցինք, թե կրոններին ինչպիսի նշանակություն է վերապահվում՝ աշխարհի ժողովուրդների կողմից համայն աշխարհի խաղաղության պաշտպանման գործում ձեռք բերված նվաճումների տեսակետից։ Այդ համաշխարհային ճակատում զգալի տեղ է գրավել, ինչպես տեսանք, մեր Ռուսական Ուղղափառ Եկեղեցին։ Սակայն իր գործունեությունը ի պաշտպանություն խաղաղության՝ նա իրականացնում է նաև այստեղ, մեր երկրի ներսում։ Խաղաղության գործին օգնում են նաև ՍՍՌՄ-ում գոյություն ունեցող մյուս բոլոր կրոնական միավորումները, որոնք ներկայացված են տվյալ կոնֆերենցիայում։ Սովետական Միության մեջ կատարված մեր ընդհանուր աշխատանքի համառոտ հանրագումարներին էլ հենց նվիրում եմ ես իմ զեկուցման հաջորդ մասը։

Դիմելով Ռուսական Ուղղափառ Եկեղեցու փորձին, տեսնենք, թե ինչով է արտահայտվել մեր ժողովրդին նրա ցույց տված աջակցությունն՝ առաջինի կողմից խաղաղության համար մղվող պայքարում, բացի նրանից, ինչ է նա արել և շարունակում է անել մյուս երկրների քրիստոնեական եկեղեցիների հետ միասին։

Մեր եկեղեցին անցյալում միշտ ժողովրդի հետ միասնական է եղել նրա լավագույն ձգտումների և ջանքերի մեջ։ Նա ժողովրդի հետ միասնական է մնում նաև այժմ՝ նոր հասարակություն և միջազգային խաղաղություն կերտելու այս դարաշրջանում։ Հանուն իր ժողովրդի բարօրության ու փրկության՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի ամբիոնից վերջին երեք տարիների ընթացքում բազմիցս հնչել է Ալեքսի Պատրիարքի խաղաղասիրական ու հորդորիչ ձայնը, որով հավատացյալ ռուս ուղղափառ ժողովրդին կոչեր է արել՝ աջակցելու խաղաղության գործին և քրիստոնեական պարտքը կատարելու աշխատանքով ու աղոթքով։

Ռուսական Ուղղափառ Եկեղեցին գործուն մասնակցություն ցույց տվեց խաղաղության կողմնակիցների Համամիութենական առաջին կոնֆերենցիային, որտեղ ինձ վիճակվեց գլխավորել եկեղեցական պատվիրակությունը։ Այդ կոնֆերենցիայում հանդես գալով ես ասացի, որ մենք՝ ռուս եկեղեցականներս, քաղաքացիական պարտքի և կրոնական խղճմտանքի զգացմունքից դրդված, դատապարտում ենք համաշխարհային հետադիմության հանցավոր դիտավորությունները և մեր քրիստոնեական պարտականությունն ենք համարում կոչ անել բազմահազար ազնիվ կաթոլիկ ու բողոքական քահանաներին ու նրանց բազմամիլիոն հոտերին, որպեսզի նրանք պայքարեն կայենյան եղբայրասպանության գայթակղության դեմ և բոլոր ջանքերը գործադրեն խաղաղության աստվածահաճո գործի ամրապնդման վրա։

Ռուսական Ուղղափառ Եկեղեցին, հանձին ինձ, մտավ խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կազմի մեջ, որպեսզի այս պատասխանատու ժամանակում մշտապես լինի նրա՛նց հետ, ովքեր պայքարում են

ժողովուրդների ազատության և անկախության համար, ովքեր պայքարում են փոքր ազգերի գաղութային ճնշման դեմ, գաղութային ճնշում, որն ամոթալի է քաղաքակրթված մարդկության համար, ովքեր պայքարում են իմպերիալիստների կողմից խաղաղությունը խախտելու փորձերի դեմ։

Մեր երկրի եկեղեցական մարդիկ խաղաղության գործը պաշտպանելու պատրաստակամությամբ դիմավորեցին ատոմային զենքն արգելելու վերաբերյալ Ստոկհոլմի Կոչը և այն ստորագրեցին բոլորը, մի մարդու պես, ամբողջ ժողովրդի հետ միասին, ստորագրեցին ո՛չ թե ձեռականորեն, ո՛չ թե անտարբեր կերպով, այլ հանուն Քրիստոսի սիրո պատվիրանի և լի հավատով արդար գործի հաղթանակի նկատմամբ։

Կորեայում տեղի ունեցող արյունալի անցքերի առթիվ Ռուսական Եկեղեցու Պատրիարքը և Սինոդը դիմեցին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին՝ կարեկցություն հայտնելով կորեական նահատակ ժողովրդի նկատմամբ և բողոքելով Կորեայում կատարվող ամերիկյան ագրեսիայի դեմ, կոչ անելով հանուն Քրիստոսի դադարեցնել անօրեն պատերազմը։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերենցիայում ինձ վրա, որպես Ռուսական Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցչի, պարտականություն ընկավ՝ լուսաբանել կոնֆերենցիայի սկզբունքային և գործնական վերաբերմունքը պատերազմի և խաղաղության հարցերի նկատմամբ, նոր պատերազմի հանցագործ հրձիգների, խաղաղության համար մղվող պայքարի հարցերի և Կորեայում տեղի ունեցող ամերիկյան ագրեսիայի նկատմամբ։

Խաղաղության համար իր անդադրում քարոզը մեր Եկեղեցին հաստատեց միահամուռ կերպով պաշտպանելով ժողովուրդների պահանջը՝ հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու մասին։ Բոլորը՝ Պատրիարքը, եպիսկոպոսները, քահանաները և աշխարհականները 1951 թվականի սեպտեմբերին ստորագրեցին այդ բանական պահանջը, որն իր պարզորոշ նպատակով հաստատում է խաղաղության կողմնակիցների շարժման արդարացիությունը և մերկացնում է այն մարդկանց ագրեսիվ դիտավորությունները, ովքեր մինչև այժմ հրաժարվում են այդ պահանջը կատարելուց։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում Ռուսական Ուղղափառ Եկեղեցին, հանձին իր Պետի՝ Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի, պաշտպանեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կոչերը՝ սպառազինությունները կրճատելու, մարդկանց մասսայական ոչնչացման բոլոր միջոցներն արգելելու, գերմանական և յապոնական պրոբլեմներն անցյալում ընդունված միջազգային համաձայնությունների ոգով լուծելու, Կորեայում և այլ տեղերում պատերազմը դադարեցնելու մասին, նմանապես և բոլոր ժողովուրդներին ինքնորոշման իրավունք տալու և խաղաղության Պակտ կնքելու մասին։

Իսկ երբ ամերիկյան մարդակերներն սկսեցին բակտերիոլոգիական զենք գործադրել կորեական և չին ժողովուրդների դեմ, մեր Եկեղեցին զայրագին բողոք հայտնեց, որը մամուլում հրապարակվեց 1952 թվականի մարտի 21-ին։

Եվ այդպես Ռուսական Ուղղափառ Եկեղեցին քայլ առ քայլ ուղեկցում է իր ժողովրդին՝ խաղաղությունը պաշտպանելու գործում, օգնելով նրա ամրապնդմանն իր բարոյական միահամուռությամբ ու հավատացյալների համերաշխությամբ։ Պատրիարքական ուղերձներում, հոգևորականության քարոզներում և մեր եկեղեցական մամուլում անդադար հնչում է մեր Եկեղեցու ձայնը՝ խաղաղության սուրբ գործը պարզաբանող, ահազանգող և օրհնող ձայնը։

Քրիստոսի պատվիրաններին նույնպիսի հավատարմությամբ է խաղաղության գործը ամրապնդում նաև Վրացական Ուղղափառ Եկեղեցին։ Նրա՝ վերջերս վախճանված Հայրապետը՝ Նորին Սրբություն Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատը մտնում էր խաղաղության պաշտպանության Ռեսպուբլիկական և Սովետական կոմիտեների կազմի մեջ և ամենաաշխույժ կորովով մասնակցում էր նրանց բոլոր ձեռնարկումներին։

Այդ մեծ քրիստոնյայի և հայրենասերի ուղերձներն ու քարոզները տոգորված էին խաղաղության հրաշունչ ոգով և հաղթանակի նկատմամբ հաստատ հավատով։ Նա նշում էր, որ Վրաստանի ու Ռուսաստանի պատմությունը լի է հաղթանակներով՝ արևմտյան նվաճողների կողմից այդ երկրները հպատակեցնելու փորձերի դեմ։ Բայց այդ հաղթանակները ձեռք էին բերվում միլիոնավորների կյանքերի գնով, որին չէր կարող և չի կարող անտարբեր վերաբերվել Ուղղափառ Եկեղեցին։ Այդ պատճառով էլ նա բոլոր մարդկանց կոչ է անում միաբանվել խաղաղության, սիրո և ճշմարտության ոգով, որպեսզի կանխվի նոր համաշխարհային սպանդը, որը պատրաստվում է Ատլանտյան պակտի մասնակիցների կողմից։

Ռուսական ուղղափառ Եկեղեցու եղբայրական համագործակցությամբ Վրաստանի

Ուղղափառ եկեղեցին անդադրում կերպով օժանդակում է խաղաղության կողմնակիցների շարժման հաջողություններին։ Ատոմային զենքն արգելելու վերաբերյալ դիմումի տակ ստորագրություններ հավաքելու ժամանակ Կալիստրատ Պատրիարք-Կաթողիկոսը և Վրաց Կաթողիկոսության ամբողջ episkoպոսությունը, հանձինս հոգևորականության և Վրաց հավատացյալ հոտի, իրենց ձայնը միացրին խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի նստաշրջանի որոշումները պաշտպանելու վերաբերյալ Ռուսական Ուղղափառ եկեղեցու Պետերի որոշմանը։

Վրաց եկեղեցին պաշտպանեց նաև Մոսկվայի Պատրիարքի 1950 թվականի մարտի 3-ի կոչը բոլոր տեղական Ուղղափառ եկեղեցիների՝ խաղաղության պաշտպանության գործում համագործակցելու մասին։ Կալիստրատ Պատրիարք-Կաթողիկոսն իր պատասխանում հայտարարեց, որ եթե իմպերիալիստները խաղաղության նկատմամբ իրենց ձգտումն արտահայտում են երկրագնդի բնակչության թիվը նվազեցնելու կոչ անող մարդատեցության քարոզով, ապա այդպիսի ուսմունքին պետք է հակադրվի ծառայի եկեղեցու մայրական խրատը։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերենցիայում Վրաց Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Գավրիլ episkoպոսն իր ելույթում ասաց, որ իր Պատրիարքն ու հոգևորականությունը ո՛չ միայն աղոթում են խաղաղության համար, այլև իրենց համայնքներին շարունակ խաղաղ ստեղծագործական աշխատանքի են կոչում՝ հանուն ժողովրդի խաղաղության ու բարօրության։

Խաղաղության կողմնակիցների Վրացական ռեսպուբլիկական կոնֆերենցիայի պատվիրակներին հիշեցնելով անցյալում Վրաստանի վրա օտարերկրացիների կատարած արշավանքների պատճառների մասին, Կալիստրատ Պատրիարք-Կաթողիկոսն ասաց, որ Վրաց եկեղեցին երբե՛ք չի հաշտվել ո՛չ խաղաղության խախտման, ո՛չ ազատության սահմանափակման հետ և այժմ չի կարող քրիստոնյա անվանել նրանց, ովքեր իրենց համարում են կուլտերի առաջնորդներ, խավարում խարխափողների ուղին լուսավորողներ, տգետների դաստիարակներ ու մանուկների ուսուցիչներ, իսկ միևնույն ժամանակ թունավորված մթերքներ են վաճառում, պատրաստվում են աշխարհի ատոմային ռմբակոծության, Կորեայում կոտորում են մանուկներին, կանանց ու ծերերին և ոչնչացնում ամեն մի կյանք, նույնիսկ բուսականությունը։

Վրաց հոգևորականությունն ու համայնքները, բոլորն անխտիր, ստորագրեցին խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Համաշխարհային խորհրդի Դիմումը։ Այդ մասին խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում խոսում էր Կալիստրատ Պատրիարք-Կաթողիկոսը, որն արտահայտեց հաստատ հավատ՝ խաղաղության ուժերի հաղթանակի նկատմամբ։

Այդ գործի հաղթանակի համար շատ հոգևոր եռանդ է դրել և շարունակում է դնել Հայոց եկեղեցին, որը գլխավորում է Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ը։

Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային առաջին կոնգրեսի ժամանակ նա ուղարկել է կոնգրեսի հասցեով իր կոնդակը, որով հայտարարում է, որ Հայոց եկեղեցին և հայ ժողովուրդը հանդիսանում են խաղաղության եռանդուն մարտնչողներ։ Միաժամանակ Նորին Սրբությունը հանձնարարեց Արևմտյան Եվրոպայի թեմերի իր ներկայացուցիչ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանին՝ Հայոց եկեղեցու անունից հանդես գալ այդ կոնգրեսում։

Առաջին հանրաքվեի ժամանակ՝ ատոմային զենքի արգելման մասին Հայոց եկեղեցին լրիվ միացավ Ստոկհոլմի որոշումներին, որովհետև, ինչպես հայտարարեց Գեորգ Զ. Կաթողիկոսը, «Բազմաչարչար հայ ժողովրդի համար, որն անցյալում կրել է անհաշիվ տառապանքներ, չկա ավելի նվիրական երազանք, քան երկարատև խաղաղությունն էր։ Նորին Սրբություն Պատրիարք-Կաթողիկոսը Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի գլխավորությամբ հատուկ պատգամավորություն ուղարկեց խաղաղության պաշտպանության հարցերի վերաբերյալ քրիստոնեական բոլոր դավանանքների հոգևորականության կոնֆերենցիային, որը տեղի ունեցավ 1950 թվականի հուլիս ամսում Չեխոսլովակիայում՝ Լուդաչովիցո քաղաքում։

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կազմակերպման ժամանակվանից Հայոց եկեղեցու Հայրապետը նրա գործունյա անդամն է հանդիսանում։ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայի պատգամավորների առաջ նա վկայեց, որ հայ ժողովուրդը ձգտում է մյուս բոլոր ժողո-

վուրդների հետ միասին խաղաղ, համերաշխ աշխատել։

Երկրորդ հանրաքվեի եռուն շրջանում հոգևոր խաղաղության Պակտի, Հայոց Եկեղեցու Պետը դիմեց արտասահմանում գտնվող հայ համայնքներին՝ կանխաղգարելով, որ նրանք զգուշանան կուլտուրայի թշնամիներից, որոնք ձևանում են իբր նրա պաշտպաններ, և հանուն մարդկության հոգևոր և նյութական հաջողությունների, հետևեն խաղաղության պահպանման ճիշտ ուղուն։ Մայրագույն Հովվապետի խոսքը Հայոց Եկեղեցու որդիներին և դուստրերին ազդարարում էր իր ժողովրդի, ինչպես նաև երկրագնդի բոլոր մարդկանց համար խաղաղության նկատմամբ Հայոց Եկեղեցու հաստատուն դիրքի մասին և հավատացյալներին հանձնարարում էր իրենց ստորագրություններով հաստատել խաղաղության Պակտի անհրաժեշտությունը։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ-ը պատմեց ՍՍՌՄ-ում և արտասահմանի գաղութներում, խաղաղության պաշտպանության շարժման գործում հավատացյալ հայերի ցույց տված ջերմ աջակցության մասին և հաստատ համոզմունք հայտնեց, որ խաղաղության շարժումը կհաղթանակի բրոնության քաղաքականությանը։

Խաղաղությունը պաշտպանելու անհրաժեշտությունը պարզապես գիտակցելով է գործում Բելոկրինիցյան թեմակալության Հին-Միսական Եկեղեցու հոգևոր կենտրոնը։ Մոսկվայի և Համայն Ռուսիո վերջերս վախճանված Հովվապետի՝ Գերոնտիա եպիսկոպոսի կոչով Հին-Միսական Եկեղեցին, եպիսկոպոսությունը և աշխարհականները ստորագրեցին Ստոկհոլմի Կոչը և խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը։ Արքեպիսկոպոս Հովվապետը հոգևորականությանն ու համայնքներին ուղղված իր ուղերձներով օգնում էր ըմբռնելու միջազգային իրադարձությունները և նրանց հորդորում էր պայքարի՝ հանուն խաղաղության սուրբ գործի։ Մյուս եպիսկոպոսների հետ միասին նա պատերազմի հրձիգներին ուղղամտորեն անվանում էր սատանայի ծառաներ, որոնք շահամոլական շարժառիթներով շանում են մարդությանը ներքաշել մի նոր զարհուրելի սպանդի մեջ։ Հին-Միսական Եկեղեցին արտահայտեց իր աջակցությունը Ռուսաց, Վրաց և Հայոց Եկեղեցիների Պատրիարքների Դիմումին և հանձինս իր եպիսկոպոսների մասնակցեց խաղաղության կողմնակիցների Քիշինյովում գումարված ռեսպուբլիկական կոնֆերենցիային և Մոսկվայում՝ Համամիութենական կոնֆերենցիաներին։ Երբ ամերիկյան ագրեսորներն սկսեցին Կորեայում գործադրել բակտերիոլոգիական զենքը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Նոր-Միսական Եկեղեցու արք-

Մոսկվայի և Համայն Ռուսիո Հին-Միսական արքեպիսկոպոս Ցլավիանի ելույթը

եպիսկոպոս Ցլավիանը և Արքեպիսկոպոսարանի խորհրդի անդամները վճռական բողոքով հանդես եկան այդ մեծագույն ոճրագործության դեմ։

Լիտվական Հին-Միսական Եկեղեցին, որը չունի հոգևորական եռաստիճան քահանայապետություն, ամբողջ ժողովրդի հետ միասին ընդհանուր տագնապ է ապրում։ Հին-Միսական Եկեղեցու Գերագույն խորհրդի նախագահությունը Հին-Միսական համայնքներին ուղղած իր ուղերձներում հավատացյալներին բազմիցս կոչ է արել և շարունակում է կոչ անել խաղաղության պաշտպանության գործին մասնակցելու համար։ Բոլոր համայնքները միահամուռ պաշտպանեցին և՝ Ստոկհոլմի Կոչը, և՝ երեք Պատրիարքների Դիմումը, և՝ խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ պահանջը։ Հին-Միսական Եկեղեցու խորհրդի նախագահ վանահայր Ֆեոդոր Միլովիչ Կուզնեցովը մասնակցում էր խաղաղության կողմնակիցների Լիտվական ռեսպուբլիկական կոնֆե-

Պանևիժիսի և Վիլնյուսի կաթոլիկ եպիսկոպոս ամենապատիվ Կազիմիերաս Պալտարոկասի ելույթը

ռենցիայի աշխատանքներին։ Շատ վանականներ հանդես եկան հավատացյալների առջև զեկուցումներով և քարոզներով խաղաղության համար պայքարի թեմաներով։

Քրիստոնեական միևնույն ոգով են լուծվում ընթացիկ ժամանակի հարցերն ու խաղաղության պաշտպանության խնդիրները նաև մյուս հին-ծիսական եկեղեցիների՝ հին-ուղղափառ քրիստոնյաների կողմից, որոնց ղեկավարում է Մոսկվայի և Համայն Ռուսիո Արքեպիսկոպոս Իոաննը, հին-եղբայրների Մոսկովյան Պրեոբրաժենսկու միաբանության կողմից, որին ղեկավարում է հոգևոր ուսուցիչ Մաքսիմ Սերգեևիչ Սերգեևը և Լատվիայի հին-ծիսական համայնքի կողմից, որին գլխավորում է ուսուցչապետ Իվան Ուլյանովիչ Վակոնյան։

Սովետական Լատվիայի Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին, հանձինս Ռիգայի միտրոպոլիայի իր գերագույն հովվապետների՝ սրբազնագույն միտրոպոլիտ Անտոնի Սպրինկովիչի և միտրոպոլիտի տեղակալ եպիսկոպոս Պյոտր Ստրոդոսի, իր հոգևորականությանն ու համայնքներին խաղաղության պաշտպանության գործին գործուն մասնակցության ակնառու օրինակ է տալիս։ Քրիստոնեական կենցաղի քարոզը և մեծ Հայրենիքի բարօրության համար աղոթքով, ժրաջան աշխատանքի կոչերը լրացվում են ամբողջ աշխարհում խաղաղություն հաստատվելու համար հասարակական աղոթքով։ Երբ երևան եկավ Ստոկհոլմի կոչը, Լատվիայի բոլոր կաթոլիկները իրենց հովվապետների հորդորանքով միացան այդ կոչին։ Նրանք նույնպես միահամուռ պաշտպանեցին նաև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը։ Պյոտր Ստրոդոս եպիսկոպոսը խաղաղության կողմնակիցների Լատվիական ռեսպուբլիկական կոնֆերենցիայում ներկայացնում էր Կաթոլիկ Եկեղեցին. նա էլ մասնակցում էր Մոսկվայում գումարված խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայի աշխատանքին։ Դատապարտելով նոր պատերազմի նախապատրաստումը որպես քրիստոնեական բարոյախոսության դեմ կատարվող ոճրագործություն, Լատվիայի կաթոլիկները միասնական են մեր երկրի ամբողջ ժողովրդի հետ և ամբողջ աշխարհի կաթոլիկներին կոչ են անում պաշտպանելու խաղաղության ընդհանուր գործը։ Այդ մասին էր խոսում եպիսկոպոս Պյոտր Ստրոդոս խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում։

Սովետական Լիտվայի կաթոլիկները, որոնց ղեկավարում են Պանևիժիսի և Վիլնյուսի եպիսկոպոս Կազիմիերաս Պալտարոկասը, կանոնիկոս Իոզաս Ստանկևիչուսը և կանոնիկոս Պյատրաս Մայժյալիսը, միացել են խաղաղության համար մղվող պայքարի ընդհանուր ճակատին։ Ոչոր տերևները թափվում են, կենդանի տերևները ավելի երկար են ապրում,— ասվում է հոգևորականությանն ուղղված Կաունասի թեմական առաջնորդարանի դիմումներից մեկում։— Մենք ընթանում ենք կենդանի տերևների հետ։ Մենք աղոթում և աղոթելու ենք ամբողջ կյանքի ընթացքի համար, նրանց համար, ովքեր ստեղծում են նոր կյանք, իրագործում են սոցիալական մեծ բարեփոխումներ և պայքարում են հանուն ճշմարտության ու խաղաղության։ Համաշխարհային երկու պատերազմների վկաները լինելով, Լիտվայի կաթոլիկները կրել են նրանց բոլոր սարսափելի հետևանքները և խաղաղությունը նույնպես թանկ է նրանց համար, ինչպես և բոլորի համար։

Կաունասի թեմական առաջնորդարանի կառավարիչ, Կալշյադորի և Վիլկավիշյան թեմական առաջնորդարանների կանոնիկոս Ի. Ստանկևիչուսը մասնակցում էր խաղա-

դության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերենցիային, որտեղից վերադառնալուց հետո ռադիոյի միջոցով ճառով դիմեց Իտալիայի կաթոլիկներին։ Իտալական կաթոլիկներին մի շարք դիմումներ են ուղղել Սովետական Լիտվայի կաթոլիկյան գործիչները նաև Եպիսկոպոս Կ. Պալտարոկասը և կանոնիկոս Ստանկևիչուսը Լիտվայի Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներն էին Խաղաղության կողմնակիցների 1951 թվականի սեպտեմբերին գումարված ռեսպուբլիկական կոնֆերենցիայում, որտեղ կանոնիկոս Ի. Ստանկևիչուսն ընտրվեց Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի անդամ։ Եպիսկոպոս Կազիմիերաս Պալտարոկասն ու քահանա Ա. Շիլլինգասը Լիտվայի կաթոլիկների ներկայացուցիչներն էին Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում։ Կոնֆերենցիայի որոշումները նրանք լայնորեն ժողովրդականացնում էին հոգևորականության և համայնքների շրջանում՝ թեմական առաջնորդների կոնֆերենցիաներում։

Խաղաղության պաշտպանության համար իր աշխատանքը մեծ ոգևորությամբ է կատարում Լատվիական ՍՍՌ-ում արքեպիսկոպոս Գուստավ Տուրսի կողմից գլխավորվող Ավետարանական-Լուտերական Եկեղեցին։ Նա, ելնելով Ավետարանական ուսմունքի հիմունքներից, քարոզում է, որ յուրաքանչյուր մարդ պետք է ձգտի խաղաղության՝ հանուն կուլտուրայի պահպանման ու զարգացման, հանուն իր ժողովրդի և հայրենիքի։ Հանուն խաղաղության պայքարի բոլոր նշանավոր իրադարձություններն աչքի են ընկել Լատվիայի լուտերականների գործուն մասնակցությամբ։ Երբ հանդես եկավ Ստոկհոլմի Կոչը, Եկեղեցու Նախագահ արքեպիսկոպոս Գ. Տուրսը իր Եկեղեցու ոչ միայն հոգևորականությանը և համայնքներին, այլև Շվեդիայի ու Ֆինլանդիայի լուտերական արքեպիսկոպոսներին կոչ արեց՝ պաշտպանելու Ստոկհոլմի Կոչի պահանջները։ Նա նմանապես Ռուսաց, Վրաց և Հայոց Եկեղեցիների Պետերին հաղորդեց նրանց Դիմումին իր Եկեղեցու միանալու մասին։ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերենցիայում արքեպիսկոպոս Գ. Տուրսը մի ճառով ելույթ ունեցավ խաղաղության պաշտպանության գործում իր Եկեղեցու գործունեության մասին և ընտրվեց Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կազմի մեջ։ Եկեղեցու Գերագույն վարչությունը հոգևորականության և հավատացյալների մեջ մեծ գործ էր կատարում Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Թեոլինի նստաշրջանի որոշումները այարզաբանելու ուղղությամբ։ Ամբողջ եկեղեցին պաշտպանեց Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը։ Արքեպիսկոպոս Գ. Տուրսը մասնակցեց Խաղաղության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերենցիային և ընտրվեց Մոսկվայում գումարվելիք Համամիութենական երրորդ կոնֆերենցիայի պատվիրակ։ Նա ռադիոյի միջոցով ողջունեց նոյեմբերի 30-ին Ստոկհոլմում գումարված Խաղաղության կողմնակիցների Սկանդինավյան կոնֆերենցիան։

Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական Եկեղեցու արքեպիսկոպոս ամենապատիվ Յան Կիլվիտի ելույթը

Էստոնական ՍՍՌ-ում Ավետարանական-Լուտերական Եկեղեցին, որին գլխավորում է արքեպիսկոպոս Յան Կիլվիտը, նույնպիսի խոշոր աշխատանք է կատարում խաղաղության համար մղվող պայքարի ասպարեզում։ Այդ աշխատանքի մի կարևորագույն տարրը հանդիսանում է հասարակական աղոթքը, որը հավատացյալներին բացահայտում է ավերիչ ուժերի ներգործությունը և մարմնավորվող խաղաղության ստեղծարար գաղափարները։ Հոգևորականությունն ու հա-



Ավետարանական Քրիստոնյա-Մկրտչականների Համամիութենական խորհրդի նախագահ Յակով Իվանովիչ Ժիդկովի ելույթը

վատացյալները, ժողովրդի հետ միասին, շատ տառապեցին անցյալ պատերազմում և այժմ քրիստոնեական խանդավառությամբ են աշխատանքին մասնակցում, դարմանելով պատերազմի հասցրած վերքերը։ «Քրիստոնյաների միավորող ուժը,— հիշեցնում էր իր համայնքին արքեպիսկոպոս Յան Կիյվիտը 1950 թվականի մարտի 1-ին,— չի կարող ազդեցություն չգործել հօգուտ ընդհանուր խաղաղության, եթե նրանց սերը կենդանի է և սիրո ու խաղաղության ակունքների կապը՝ անվթար։» Ստոկհոլմյան հանրաքվեի օրերին Էստոնիայի Ավետարանական-Լուտերական ամբողջ եկեղեցին միացավ Ստոկհոլմի պահանջներին և միևնույն բանին էլ կոչ արեց ռեֆորմատորական բոլոր եկեղեցիներին։ Սինոդի որոշման հիման վրա, արքեպիսկոպոս Յան Կիյվիտը միևնույն տարվա հուլիսին դիմեց Շվեդիայի և Ֆինլանդիայի Ավետարանական-Լուտերական եկեղեցու արքեպիսկոպոսներին՝ Ստոկհոլմի Կոչին միանալու հրավերով։ Օգոստոսին Սինոդը չերմագին կերպով պաշտպանեց երեք Պատրիարքների Դիմումը և ինքը դիմեց ամբողջ աշխարհի քրիստոնյաներին՝ կոչ անելով միանալ խաղաղության համար մղվող պայքարի գործին։ Խաղաղության կողմնակիցների ռեսպուբլիկական և Համամիութենական կոնֆերենցիաների որոշումները, որոնց աշխատանքին գործուն կերպով մասնակցում էին Էստոնիայի Ավետարանական-Լուտերական եկեղեցու ներկայացուցիչները, զեկուցումների և քարոզների միջոցով լայնորեն տարածվում էին հոգևորականության և հավատացյալների մեջ։ Էստոնիայի բոլոր լուտերականները միահամուռ պաշտպանում էին Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումը։

Զգտելով ամենքի հետ հաշտության, Էստոնական ՍՍՌ Մեթոդիստների եկեղեցին, որին ղեկավարում է Հոգևոր Վերատեսուչ Մարտին Յանովիչ Կուլդրեն, պաշտպանում է հասարակական բոլոր ձեռնարկումները՝ հանուն խաղաղության պաշտպանության, աղոթում է խաղաղության համար և իր հետևորդներին հորդորում է խաղաղության գործին նպաստել անձնվեր աշխատանքով, ի բարօրություն Հայրենիքի։

Խաղաղության ամրապնդման ընդհանուր գործում լայն մասնակցություն ունի Ավետարանական Քրիստոնյա-Մկրտչականների Համամիութենական խորհուրդը, որին գլխավորում է Յակով Իվանովիչ Ժիդկովը։ Խաղաղության համար մղվող պայքարի հարցերի վերաբերյալ բացատրական աշխատանքը հավատացյալների մեջ կատարվում է, գլխավորապես, աղոթաժողովներում, և այդ աշխատանքի նպատակն է հավատացյալներին ուղղել դեպի խաղաղության կողմնակիցների շարժման ընդհանուր հունը։ Խաղաղության համար մղվող պայքարին Սովետական Միության մկրտչականների մասնակցությունը նշող ձեռնարկումների ցանկը չափազանց մեծ է։ Նրա մեջ մտնում են Ավետարանական Քրիստոնյա-Մկրտչականների միության Դիմումը՝ Փարիզում խաղաղության կողմնակիցների կոնգրես գումարվելու առթիվ, Ստոկհոլմի Կոչի հայտարարություն-պատասխանը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված բողոքը Կորեայի խաղաղ բնակչությանը ռմբակոծելու դեմ, երեք Պատրիարքների Դիմումին միանալը, Ավետարանական Քրիստոնյա-Մկրտչականների Համամիութենական խորհրդի ներկայացուցիչ Յակով Ի. Ժիդկովի ելույթները խաղաղության կողմնակիցների Համամիութենական կոնֆերենցիաներում, ռադիոյի միջոցով նրա դիմումները ամբողջ աշխարհի մկրտչականներին և

կրակոտ բողոքը Կորեայում բակտերիոլոգիական պատերազմ մղելու դեմ։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում Ցակով Ի. Ժիրվովը խոսեց խաղաղության պաշտպանության գործում մեր երկրի բոլոր քրիստոնյաների հետ մկրտչականների միասնական լինելու մասին և ափսոսանք արտահայտեց՝ արտասահմանյան քրիստոնյաների մեջ այդպիսի միասնություն չլինելու առթիվ։ Զգտելով խաղաղության պաշտպանության գործում նրանց միասնականացնել, Ավետարանական Քրիստոնյա-Մկրտչականների Համամիութենական խորհուրդը ընդարձակ գրագրություն է վարում Անգլիայի և Ամերիկայի հավատակիցների հետ, որոնց մեջ քիչ չեն նրանց քաղաքականության պատասխանատու ղեկավարներից։

Շաբաթական յոթերորդ տրվա Ադվենտիստների Համամիութենական խորհուրդը, իր հանգուցյալ նախագահ Գրիգորևի հետ, ինչպես և նրա այժմյան նախագահ Պավել Անդրեևիչ Մացանովը, հավատացյալներին ուղղված իրենց ուղերձներով և խաղաղության մասին քարոզներով իրենց լուման են մուծել և շարունակում են մուծել խաղաղության համար ամբողջ սովետական ժողովրդի մղած ընդհանուր պայքարի գործում։ Համամիութենական խորհուրդը իր ժամանակին «հրաբանվանքով» միացավ երեք Պատրիարքների ամբողջ աշխարհի քրիստոնյաներին ուղղած Դիմումին։

Հոգևորական քրիստոնյաների Մոլոկանյան համայնքները Բաքվում (համայնքի Գործադիր խորհրդի նախագահն է Իվան Մատվեևիչ Մոնաենկոն) և Թբիլիսիում (նախագահն է Ալեքսեյ Մաքսիմովիչ Ռեմիզովը) խաղաղության պաշտպանության իրենց ամենօրյա աշխատանքում հոգով միասնական են ՍՍՌՄ բոլոր հավատացյալների հետ, այդ գործում ղեկավարելով իրենց համայնքները։

Անդրկարպատիայում Ռեֆորմատորական (Կալվինիստական) եկեղեցին, ավագ դեկան Ադալբերտ Ֆեոդորովիչ Գենչիի գլխավորությամբ, խաղաղությանը նվիրված մի շարք պատարագներում և քարոզներում պաշտպանում է խաղաղության պահպանության համաժողովրդական սրբազան գործը։

Մեր երկրի հավատացյալ հրեաները, սովետական ժողովրդի հետ միասին, նույնպես դգտում են կանխել պատերազմը։ Մոսկվայի հրեական կրոնական համայնքը, որի ղեկավարն է ռաբբի Սոլոմոն Միխայլովիչ Շլիֆերը, ակտիվորեն մասնակցեց Ստոկհոլմի Կոչի տակ և խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումի տակ ստորագրությունների հավաքման գործին։ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում համայնքի ներկայացուցիչն էր համայնքի նախագահ ռաբբի Ս. Մ. Շլիֆերը։ Հենց նա էլ իր քարոզներում բացահայտում է խաղաղության և խաղաղության համար մղվող հարցերը։

Մոսկվայի Խմբագրական Սինագոգայի ռաբբի և Հրեական Կրոնական Համայնքի նախագահ Ս. Մ. Շլիֆերի ելույթը

Նույն ոգով է իր աշխատանքը կատարում նաև Կիևի հրեական կրոնական համայնքը, որին ղեկավարում է ռաբբի Ի. Գ. Շեխտմանը, որը հաճախ հանդես է գալիս հավատացյալ հրեաների առջև ճառերով հոգուտ խաղաղության պաշտպանության։

Խաղաղության կողմնակիցների շարժման նպատակներին ամբողջովին համամիտ են Սովետական Միության մուսուլմանները։ ՍՍՌՄ Եվրոպական մասի և Սիբիրի մուսուլմանների մուֆտի՝ Հոգևոր Վարչության Նախագահ Ալ-Հաֆիզ Կալյամուլլա Շաքիր իբն Շեյխ ուլ-Իսլամ Խալեգդինովի ղեկավարությամբ մուսուլմանական հոգևորականությունը հավատացյալների մեջ լայն գործունեու-

Անդրկովկասի և Ադրբեջանի Մուսուլմանների Հոգևոր Վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամ Ալի-Զադե Ախունդ Աղա Ջավադ Օղլու ելույթը

*թյուն է ծավալել հօգուտ խաղաղության պաշտպանության։ Բոլոր մուսուլմաններին կոչ էր արվել ստորագրելու Ստոկհոլմի Կոչը. նրանց մեջ վառ արձագանք գտավ նաև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ պահանջը։ Հանձին մուֆտի Խալեդդինովի Սովետական Միության Եվրոպական մասի և Սիբիրի մուսուլմանները խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերենցիայում իրենց ձայնը տվեցին ի պաշտպանություն խաղաղության։ 1951 թվականի հուլիս ամսին մուֆտի Խալեդդինովը Մոսկվայում ռադիոյի միջոցով ելույթ ունեցավ մի կոչով, որն ուղղված էր աշխարհի բոլոր մուսուլմաններին և առանձնապես թյուրքական մուսուլմաններին, որոնց որդիներն ու եղբայրներն ուղարկվում են Կորեա, որպեսզի ամերիկյան կապիտալիստների շահերի համար կոտորեն խաղաղ մարդկանց։ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայում մուֆտի Խալեդդինովն ասաց. «Կցանկանայի, որպեսզի Թյուրքիայի, Պակիստանի, Եգիպտոսի, Իրանի և մուսուլմանական մյուս երկրների մուսուլմանները խաղաղության համար մղվող պայքարին միանային նույնպիսի ակտիվությամբ, ինչպես սովետական մուսուլմաններն են միացել»։

Անդրկովկասի մուսուլմանները, Հոգևոր Վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամ Ալի-Զադե Ախունդ Աղա Ջավադ օղլու ղեկավարությամբ նույնպես ընթանում են խաղաղության պաշտպանների առաջին շարքերում։ Նրանք միահամուռ պաշտպանեցին Ստոկհոլմի Կոչը և խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը։ Նրանց Հոգևոր Պետը մասնակցել է խաղաղության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերենցիային և Համամիութենական երկու կոնֆերենցիաներին, ռադիոյի միջոցով դիմել է Թյուրքիայի և մյուս երկրների մուսուլմաններին, կոչ անելով պայքարել իրենց երկրների ժողովուրդներին պատերազմի մեջ ներքաշելու ուղղությամբ անգլո-ամերիկյան իմպերիալիստների փորձերի դեմ։

Միևնույն ուղղությամբ են գործում նաև Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանները՝ մուֆտի Իշան-Բաբախան իբն Աբդուլ-Մաջիդ-Խանի ղեկավարությամբ։ Հոգևորականությանն ու հավատացյալ մուսուլմաններին ուղղված նրա դիմումները նպաստեցին նրանց միջև երկու հանրաքվեները անցկացնելու գործին։ Նա բազմիցս ռադիոյով դիմել է նաև Իրանի, Աֆղանիստանի, Պակիստանի, Թյուրքիայի, Արաբիայի և մյուս երկրների մուսուլմաններին, կոչ անելով նպաստել Կորեայում մղվող չարագործ պատերազմի ամենաարագ ավարտմանը։ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերենցիայից հետո Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանների մեջ մեծ աշխատանք է կատարվել այդ կոնֆերենցիայի որոշումները բացատրելու ուղղությամբ։

Հյուսիսային Կովկասի և Դաղստանի մուսուլմանների Հոգևոր Վարչությունը, մուֆտիի պաշտոնակատար Նախագահ Մահմեդ Հաջի Ղուրբանովի գլխավորությամբ դիմել է հավատացյալներին՝ ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար մղվող պայքարի սրբազան պարտքը կատարելու վերաբերյալ բազմիցս կոչերով։

Խաղաղության համար մղվող պայքարին գործուն կերպով մասնակցում են Արևելյան Սիբիրի բուդդայականները։ Առաջին և երկրորդ հանրաքվեների ժամանակաշրջաններում նրանց լամաներն ու Կենտրոնական Հոգևոր Վարչության անդամները լայն բացատրական աշխատանք կատարեցին հավատացյալ բուդդայականների շրջանում։ Իսկ ՍՍՌՄ-ում բուդդայական հոգևորականու-

ՍՍՌՄ Բուդդայականների Կենտրոնական Հոգևոր Վարչության նախագահ Բանչիդո-Խամբո Լամա Դարման Լոբսան-Նիմայի ելույթը

թյան ղեկավար Բանչիդո-Խամբո Լամա Դարման Լոբսան-Նիման մասնակցել է խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ և երրորդ կոնֆերենցիաներին և ռադիոյի միջոցով դիմել է մյուս երկրների բուդդայական հոգևորականությանը՝ խաղաղության համար պայքարելու կոչերով։

Աչքի անց կացնելով ՍՍՌՄ-ում գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցիների և կրոնական մյուս միավորումների կողմից խաղաղության պաշտպանության համար կատարվող գործունեության հանրագումարները, մենք պետք է ասենք, որ այդ գործունեության արդյունքներն անդաժանելի են այն նվաճումներից, որոնց շնորհիվ մեր երկիրը դիմակայում է խաղաղության և մարդկության թշնամիներին։ Նախ և առաջ, այդ մեր բազմազգ Պետության միաձուլ միասնականությունն է, մեր Պետության, որը չգիտե ազգային կամ կրոնական թշնամություն իր ժողովուրդների միջև։ Սովետական Միության կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդներն ունեն հավասար իրավունքներ և նրանք բոլորը գնում են իրենց ազգային կուլտուրան և տնտեսական բարեկեցությունը զարգացնելու ուղիով։ Դեռ ավելին, նրանց փոխհարաբերությունների հիմքն է կազմում փոխադարձ օգնության անխախտելի օրենքը, որը որոշվում է այս կամ այն ազգի առավելագույն հնարավորություններով։ Այդ տեսակետից գլխավոր օրինակը տալիս է մեր մեծ ռուս ժողովուրդը։ Այդ պատճառով Սովետական Միությունը ժողովուրդների խաղաղ բարեկամության ակնբախ օրինակ է հանդիսանում ողջ աշխարհի համար։ Դրանում է կայանում նրա ուժը նաև միջազգային խաղաղության համար մղվող պայքարում։

Սովետական ժողովրդի բարոյական միասնության գործոններից մեկն է հանդիսանում Սովետական Միության եկեղեցիների և կրոնական միավորումների բռնած հայրենասիրական դիրքը։ Մենք՝ հավատացյալ մարդիկս, մասնակցում ենք երկրի կյանքին, ինչպես և խաղաղության համար մղվող պայքարին՝ ո՛չ միայն մեր աշխատանքով ու քաղաքացիական պարտականություններն օրինակելիորեն կատարելով, այլև մեր այն հավատով, որ բարին կհաղթի չարին, որ արդարու-

Ռումինական Ուղղափառ Եկեղեցու Ներկայացուցիչ ամենապատիվ Սեբաստիան միտրոպոլիտի ելույթը

թյունն ու խաղաղությունը վերջնականապես կհաղթանակեն աշխարհում։

Այդ հավատը մեզ համար ջանքերի աղբյուր է հանդիսանում, ջանքեր, որոնք շարունակ նպատակ ունեն հաղթահարելու մարդկային հասմոլությունը, որի մեջ է մարդկանց երկպառակող վեճերի ու կռիվների արմատը։

Մարդկային հասմոլությունն է ծնել նաև սոցիալ-տնտեսական այն անարդարությունը, որից ծագում են պատերազմները։ Ուստի ժամանակակից իմպերիալիստների պատերազմական դիտավորությունների դեմ մղվող պայքարը սերտորեն կապված է կյանքի առավել կատարյալ կարգ ստեղծելու համար մղվող պայքարի հետ, այնպիսի կարգ, որը բացառում է թշնամանքն ու բռնությունը. իսկ կրոնի համար՝ հանուն խաղաղության մղվող պայքարն անհրաժեշտ է առավել կատարյալ մարդ դաստիարակելուց, որն ընդունակ է նման կարգ ստեղծելու և պաշտպանելու։

Այդ պայքարի պտուղները մաս առ մաս թափանցում են հասարակության և ժողովրդի քարոյական կերպարի մեջ, ներշնչում են նրան հայրենասիրություն, արիություն, աշխատասիրություն, ինքնազոհություն և բարոյական արժեքի են վերածում նվիրվածությունը Հայրենիքին ու ընդհանրական խաղաղության գործին։

3. ՍՍՌՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՀԵՏԱԳԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՅԴ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Խաղաղության համար մղվող պայքարում մեր ժողովրդի ձեռք բերած նվաճումները մեծ են։ Դրանք ունեն թե՛ նյութական թե՛ բարոյական արտահայտություն. մեծ կառուցումները քաց են անում խաղաղ կյանքի հեռանկարներ, իսկ մեր ժողովրդի հոգեկան միաձուլվածությունը պակվում է վստահությամբ՝ իր ուժերի նկատմամբ։ Մեր ամբողջ երկիրը խաղաղության ամրոց է ներկայացնում։

Սակայն արդարության և ուժի գիտակցումը մեզ հիմք չի տալիս մեկուսանալու մեր ներքին կյանքում, որովհետև չափից անցել են պատերազմի կողմնակիցների նկրտումները, որոնք հնարել են միայն մարդկանց ոչնչացնելու էժան եղանակ, առանց ձեռք տալու նրանց նյութական սեփականությանը։

Այդ դիտավորություններում մարդատյացության այնպիսի մի վիհ է կանգնած մեր դեմ, չարության այնպիսի մի բարձունք, որպիսին մարդիկ չեն տեսել աշխարհի ստեղծագործությունից մինչև այժմ։

Այդպիսով, վտանգը չափազանց մեծ է, որ կարելի լինի հանգստանալ ձեռք բերված արդյունքներով կամ թուլացնել խաղաղության համար մղվող պայքարը։ Ընդհակառակը, հարկավոր է, որ մենք բոլորս ուժեղացնենք լարվածությունը և զինվենք համբերությամբ ու տոկունությամբ։

Ամենից առաջ պետք է ընդունել, որ մեր կողմից մինչև այժմ կատարվածը դեռևս բոլորը չէ, ինչ հնարավոր ու անհրաժեշտ է կատարել, ուստի մենք պետք է բազմապատկենք մեր ջանքերը խաղաղությունը պաշտպանելու համար։

Իսկ ի՞նչ խնդիրներ են այդ ասպարեզում կանգնած մեր երկրի եկեղեցիների ու կրոնական միավորումների առջև։

Դժվարին և ահարկու հանգամանքներում թերևս հավատացյալներից ոմանք հակամիտ կլինեն գայթակղվելու և ցանկանալու մեկուսանալ իրենց բարեպաշտության մեջ, հեռանալ արտաքին պայքարից և նվիրվել իրենց ներքին աշխարհին։ Այդ այն հեռացումը չէ մարդկային ունայնությունից, որը որոշ պայմաններում առաջներում ստեղծում էր բարոյական ուժերի հզոր աղբյուրներ՝ չարի դեմ հենց նույն մարդկային աշխարհում կռվելու համար։ Արդի պայմաններում ամեն մի հեռացում իրականությունից այժմ կնշանակի ոչ այլ ինչ, եթե ոչ պասսիվ վերաբերմունք աշխարհում իշխող չարության նկատմամբ։ Նույն կարգին է պատկանում նաև որոշ հավատացյալների խուսափումը մեր ժամանակում պատերազմի վտանգի դեմ պայքարելուց. այդ խուսափումը հավասարազոր է պատերազմի անխուսափելիությունն ընդունելուն։

Այստեղից էլ խնդիր է ծագում. հավատացյալների երեսը դարձնել դեպի ընթացիկ կյանքը, որի դասերը պարտադիր են բոլորի համար, և կոչ անել հավատացյալներին՝ գործուն մասնակցություն ցույց տալու կյանքում, իրենց պարտքը կատարելու մերձավորների, հասարակության, հայրենիքի և երկրի վրա բոլոր մարդկանց նկատմամբ։

Այդպիսի կոչի հիմնական միջոցներ կարող են ծառայել հոտին ուղղվելիք ուղերձները և քարոզները խաղաղության և նրան հասնելու ուղիների մասին թեմայով։ Նույն այդ նպատակին պետք է ծառայեն նաև եկեղեցական հրատարակությունները, որտեղ դրանք գոյություն ունեն։ Դրանց մեջ պետք է տպագրել հոդվածներ ու զանազան նյութեր, որոնք լայնորեն լուսաբանում են խաղաղության համար մղվող պայքարի զարգացումը, նրա դժվարություններն ու հաջո-

Ավստրիայի Հին-Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ, սինոդի անդամ, պրոֆ. Ֆրանց Բարեյսկի ելույթը

ղությունները, պետք է ցույց տալ, թե ինչպես հավատացյալները մասնակցություն են ունենում այդ պայքարում և բացահայտել նրանց առջև այդ պայքարի հերթական խնդիրները։

Մեր երկրի եկեղեցիների և կրոնական միավորումների գործունեության մեջ հատուկ տեղ պետք է գրավի աչակցություն ցույց տալը հասարակական այն ձեռնարկումներին, որոնք նպատի ունեն միջազգային խաղաղության ամրապնդումը։ Ամեն մի գործում, լինի դա համաժողովրդական հարցում հօգուտ որևէ համաձայնության, պահանջի, բողոքի կամ դաշինքի, աշխատանքային ներդրում շինարարության մեջ, թե այլ բան,— ամենուրեք հավատացյալ մարդիկ կարող են և պետք է կիրառում գտնեն բոլոր ուժերի համար, եթե այդ պահանջում է խաղաղության պաշտպանման շահը։ Հանուն այդ մեծ նպատակի՝ մենք չպետք է քամահրենք ո՛չ խոսքը, ո՛չ գործը, ո՛չ նույնիսկ տրամադրությունը, եթե այդ կարող է դրական ազդեցություն գործել շրջապատողների վրա։

Այն տրամադրությունը, որով մենք հավաքվեցինք այստեղ և որով մենք կցրվենք այստեղից, հարկավոր է նույնպես օգտագործել որպես խաղաղության համար մղվող պայքարի զենք։ Դրա համար կա կիրառման կետ։ Բոլոր քրիստոնեական եկեղեցիները և կրոնական միավորումները, որոնք ներկայացված են այս կոնֆերենցիայում, անկասկած իրենց հավատակիցներն ունեն Սովետական Միության սահմաններից դուրս։ Եվ այդ հանգամանքը յուրաքանչյուր եկեղեցու վրա, յուրաքանչյուր կրոնական միավորման վրա խնդիր է դնում՝ կոչ անել արտասահմանում գտնվող իրենց հավատակից եղբայրներին խաղաղության համար գործուն պայքար մղելու իրենց երկրներում, որովհետև պատերազմը սպառնում է բոլոր ժողովուրդներին։

Խաղաղության քարոզի հետ պետք է կապակցել նաև հայրենասիրության կամ հայրենիքի սիրո դաստիարակումը։ Այդ զգացմունքը, որը սաստկանում է Աստծու հանդեպ շնորհակալությամբ ժողովրդական ընտանիքի անդամ լինելու բարիքի համար, յուրաքանչյուր ազգի հոգեկան ու նյութական զարգացման հիմքն է կազմում։ Նույն այդ զգացմունքը ո՛չ միայն մեզ ոգեշնչում է հասարակա-

Ֆինլանդիայից ժամանած հյուր, բարձրապատիվ նովիվ Միխաիլ Միիկոլի ելույթը

Հոլանդիայի Ռեֆորմիստական Եկեղեցու հոգեվ. խաղաղության Համաշխարհային խորհրդի անդամ, բարձրապատիվ Հուգո Վան-Դալենի ելույթը

կան աշխատանքի և սխրագործություններ կատարելու, այլև դրանք բարձրացնում, հասցնում է մինչև անձնազոհության։

Անհրաժեշտություն չկա խոսելու այն մասին, թե կրոնը, բացահայտելով մարդու մեջ Աստծու կերպարը, դաստիարակում և ամրապնդում է մարդկանց մեջ մարդկային արժանապատվության գիտակցությունը։

Արդյոք դրանից չի՞ հետևում մի խնդիր՝ սատարել հավատացյալների մեջ այդ արժանապատվությունը և այն ամրապնդել մերձավորի արժանապատվության նկատմամբ տածվող սիրո և հարգանքի զգացումով։ Կրոնական ազդեցությունն ամրապնդում է մարդկային հարաբերությունները եղբայրության բարոյական կապերով։

Եղբայրության գաղափարը, հայրենասիրության հետ զուգորդված, անխուսափելիորեն վերածվում է ժողովուրդների իրավահավասարության գաղափարին, որը ոչ տեղ է տալիս և ոչ էլ հիմք ազգային բացառիկության համար։ Ընդհակառակը, այդ գաղափարը պահանջում է հարգանք դեպի ուրիշ ազգեր, ժխտում է ազգային ճնշումը և առաջ է բերում բարեկամություն ու համագործակցություն ժողովուրդների միջև։ Հավատացյալների առաջ բացահայտել մարդկանց միջև ու ժողովուրդների միջև եղած բարոյական հիմունքները, քարոզել փոխադարձ հարգանք ու խաղաղություն՝ որպես այդ հարաբերությունների հիմքը — ա՛յդ էլ հենց հավատացյալ մարդկանց կրոնական դաստիարակման կարևորագույն խնդիրն է հանդիսանում։

Սիրո և եղբայրության քարոզին հաջորդում է ոչ պակաս կարևոր խնդիր՝ հանդես բերել հավատացյալների պատշաճ վերաբերմունք դաժանության, ճնշման ու հալածանքի զոհերի նկատմամբ, որի նպատակը պետք է լինի այդ զոհերին բարոյական կամ նյութական օգնություն ցույց տալը։ Լինելով կրոնական պարտքի արտահայտություն, այդ օգնությունը կարող է հանդիսանալ նաև հասարակական խնդիր։

Մենք մանրամասնորեն չենք խոսում անձնական և հասարակական աղոթքի անհրաժեշտության մասին։ Այդ հզորագույն հոգևոր զենքը հանդես է բերում իր գործունեությունը հավատացյալների ազատ միավորման մեջ, որոնք, միևնույն է, կանգնած են արդյոք տաճարներում, թե՞ աղոթում են իրենց բնակա-

Անտիոքի Հույն-Օրթոդոքս Պատրիարքության ներկայացուցիչ, գերապատիվ Վասիլ վարդապետի ելույթը

բաններում, սակայն շարունակ ապրում են մի հոգով, մի խնդիրքով, մի հույսով։ Հավատացյալների արդեն սոսկ այդ հոգևոր միությունը բարոյական ուժերի աղբյուր է հանդիսանում, որոնք այնքան անհրաժեշտ են ինչպես փորձությունների օրերին, նույնպես և ստեղծագործական աշխատանքի ժամանակաշրջանում։

Սակայն չի կարելի չհիշեցնել եկեղեցիների այն էական պարտականությունների մասին, որոնք հավատացյալ մարդկանց թելադրում են օրեցօր ամրապնդել գիտակցական վերաբերմունքը հանրօգուտ աշխատանքի և հանրային սեփականության նկատմամբ։ Մենք գիտենք, որ ստեղծագործ աշխատանքը ո՛չ միայն գոյության աղբյուր է, այլև անհրաժեշտ պայմանն է մարդու ֆիզիկական և բարոյական կատարելագործման։

Մենք գիտենք նույնպես, որ հասարակական ստացվածքի նկատմամբ պատշաճ վերաբերմունքը որոշվում է ո՛չ սոսկ հատուցման երկյուղով, այլև կրոնական խղճի թելադրանքով, որովհետև հանրօգուտ աշխատանքը ստեղծում է ընդհանուրի բարօրության համար անհրաժեշտ արժեքներ։ Ուստի կրոնական մարդկանց դյուրին է իմաստավորել աշխատանքի պտուղների սրբազան անձեռնմխելիությունը, որոնք ստեղծվում են ի բարօրություն ամբողջ ժողովրդի և հանուն խաղաղության պահպանման։

Աչքի անց կացնելով կրոնական ներգործության ոլորտը, չի կարելի նրա այն կարևոր խնդրի կողքից անցնել, որը պահանջում է շարունակ աղդեցություն գործել հավատացյալների վրա, որպեսզի նրանց մեջ բարձրանա բարոյական պատասխանատվության զգացումը քաղաքացիական պարտավորությունների կատարման համար։ Այդ զգացումը կազմում է անհրաժեշտ տարրը կրոնական խղճի, որը դատիարակվում է՝ ժողովրդին և պետությանն ի սպաս դրված աշխատանքի ու ամեն տեսակ պաշտոնի շահեկանության գիտակցման ոգով։

Սրանք են մեր ընդհանուր խնդիրները։ Դրանց թվարկումը չի բացառում խաղաղության ամրապնդման գործին կրոնական գծով ծառայելու համար նոր բնագավառներ գտնելու հնարավորությունը։ Այդ բնագավառներից մեկը կարող է լինել ուրիշ երկրների դավանակից հասարակությունների հետ կապերի ընդլայնումը, որպես նպատակ ունենալով ժողովուրդների մերձեցումը և ջանքերի համախմբումն ի պաշտպանություն խաղաղության։

Ուժեղացնե՛նք պայքարը խաղաղության համար, թանկագի՛ն բարեկամներ։ Ջխնայենք և ո՛չ մի ուժ, որպեսզի խաղաղության համար մղվող մեր պայքարը դառնա մեծ ներդրում խաղաղության պաշտպանության գործում։

Մեզ այդ պայքարի համար ոգեշնչում է մեր մեծ, հզոր Հայրենիքը։

Խաղաղության անառիկ միջնաբերդի պես բարձրանում է Սովետական Միությունը հուզված օվկիանոսի պղտոր ալիքների վրա։ Մեր միջնաբերդը բարձր է Մոն Բլաններից ու Էվերեստներից։

Այդ միջնաբերդի պահակային աշտարակում անհերթափոխ կանգնած է խաղաղության առաջին ժամապահը։ Սրատես են նրա աչքերը, ուժեղ է ձեռքը, որը մարդկանց ցույց է տալիս կյանքի ճանապարհը, հանդարտ խփում է նրա համապարփակ սիրտը, որն իր մեջ է առել տառապյալների ամբողջ ցավը, որը չի է հանգիստ, բայց անողոք դայրույթով դեպի տանջողները և մեծ սիրով՝ դեպի մարդիկ։ Նա չի՛ թողնի նոր տառապանքներ մատնել մարդկությանը, որին վերջերս է նա փրկել...

ՓԱՌՔ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ։

(Բուռն ծափահարություններ։ Բոլորը ոտքի են կանգնում։ Ծափահարությունները վերածվում են օվացիայի)։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՃԱՌԸ ՍՍՌՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՐՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԽԱՂԱՂՈՒՐՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

Այսօրուանից Առաքելական Եկեղեցին՝ իր հոգևորականությամբ և հավատացյալ հոտով, իր Հայրապետի բերնով, հայտնում է իր խրոխտակցությունն ու գոհունակությունը Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին՝ համախոհորդային կրոնապետների սույն կոնֆերենցիայի կազմակերպման համար և իր ողջույնը՝ կոնֆերենցիայի հերկա պատգամավորներ՝ ամենապատիվ կրոնապետներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմը, որ սկսեց Հիտլերը, աշխարհակալական նպատակ ուներ. Հիտլերը կամենում էր կոպիտ ուժի միջոցով աշխարհի տերը դառնալ, սարկացնել աշխարհը: Դաշնակից պետությունները, հատկապես շնորհիվ Սովետական Բանակի անհիշարագրելի զոհաբերությանց, չխլեցին հիտլերյան Գերմանիային և գսպեցին ֆաշիզմը, ֆաշիզմի փոխարեն հանդես բերելով նոր սկզբունքներ՝ ազգերի ազատության ու ինքնորոշման և՝ ուժի ու բռնության փոխարեն՝ բանականության ու խղճի սկզբունքը:

Խորհրդային Միության բերած մարդկային և նյութական մեծ զոհաբերությանց գնով վերջացավ Համաշխարհային երկրորդ պատերազմը առաջադեմ ուժերի հաղթանակով, ընդդեմ հետադեմ, խավարամիտ ուժերի:

Պատերազմից հետո՝ ողջ աշխարհը անհամբեր սպասում էր Ատլանտյան Խարտիայով հայտարարված քաղաքական և հասարակական լայն սկզբունքների կենսագործման: Սակայն պատերազմից հետո տեղի ունեցած դեպքերը հակառակն ապացուցեցին: Դաշնակից չորս մեծ պետությունների տարաբնույթ գործոց հախարարների և նոցա տեղակալների խորհրդակցությունները ոչ միայն չբարելավեցին մարդկային կյանքի պայմանները և խաղաղություն չհաստատեցին ողջ աշխարհի վրա, այլ ընդհակառակը՝ վատացրին ու բարդացրին և մարդկային կրքերը բորբոքեցին, որովհետև ֆաշիստ Գերմանիայի փոխարեն նույն սկզբունքներով հանդես եկավ անգլո-ամերիկյան համագոր-

ծակցությունը: Նոր բլոկը իր կոնկրետ գործերով համոզեց աշխարհին, որ անհանգիստ վճռականությամբ իրագործում է երրորդ համաշխարհային պատերազմի կազմակերպումը, որի հետևանքը, նկատի առնելով նրա պատերազմական գենքերը, պիտի լինի աշխարհի ամայացումը և նորա կատարյալ ավերումը:

Մարդկությունը կանգնած է այսօր երրորդ համաշխարհային պատերազմի անվավոր սպառնալիքի առաջ: Սակայն անգլո-ամերիկյան պատերազմասեր պետությունների հանդեպ կանգնած է Սովետական Միությունը, որ ցարդ վա-

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԼՈՒՅԹԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

ռել ու վարում է խաղաղասիրական քաղաքականություն, միջպետական կրնեռոռ հարցերը պահանջում է լուծել փոխըմբռնման ու համագործակցության հղանակով և հանդիսանում է խաղաղասեր ժողովուրդների հուսո ամրոցը:

Խաղաղության կողմնակիցների բանակը գլխավորում է մարդկության մեծ և իմաստուն Առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ ՍՏԱԼԻՆԸ, որն անշեղ կամքով կռում է ժողովուրդների բախտը և կազմակերպում խաղաղության գործը ողջ աշխարհում: Իոսիֆ Վիսսարիոնովիչի իմաստուն և մարդասեր

գործունեությունը լցնում է մեր ն. ողջ աշխարհի հարյուր միլիոնավորների հոգին լավատեսության հավատով՝ մարդկության ապագայի նկատմամբ:

Այսօր համաշխարհային երրորդ պատերազմի սպառնալիքը ոչ միայն չի պատճառում աշխարհին հուսալքում ու հուսաբեկում, այլ ընդհակառակը, մարդկությունը՝ նախորդ դառն փորձերի հետևանքով՝ համոզված լինելով, որ պատերազմը մահ ու ավեր է բերում, իսկ խաղաղությունը՝ կյանք ու երջանկություն, սկսել է կազմակերպվել, որի հետևանքով այսօր բոլոր պետությունների մեջ ունի խաղաղասերների հոծ բազմություն, խաղաղության տեղական կոմիտեներ և Համաշխարհային խորհուրդ, որոնք խաղաղ ճանապարհով աշխատում են թեթել մարդկությունը հոգուտ խաղաղության, ողջ աշխարհին երջանկացնելով թե՝ պատերազմի վտանգը պետք է օրեցօր թուլանա և կգա ժամանակ, երբ պատերազմի միտքն ու ծրագիրը կմեռնեն ու կանէանան և մարդկությունը կազատվի նոցա մղձավանջից ու կհանգստանա:

Նկատի առնելով երկու հերթական գաղափարները՝ պատերազմի և խաղաղության պայքարը և աշխարհի հերկա վիճակը՝ այսօրվա կոնֆերենցիայի առաջ ինքնին ծառանում է երկու հարց՝ 1. Պարզել թե՝ ի՞նչ է արել կրոնն ու նորա գործադիր մարմինը՝ Եկեղեցին տվյալ պայքարի նկատմամբ և 2. Ինչպիսի՞ պիտի լինեն նորա անելիքները հետագայում:

Այս հարցերը պերճախոս ու սեղմ ոճով արծարծեց ու բացատրեց խաղաղության Համաշխարհային խորհրդի անդամ գերաշնորհ միտրոպոլիտ Նիկոլայը, այնուհանդերձ թող հերվի նաև Մեզ անդրադառնալ երկրորդ հարցին և համառոտակի շարադրել Մեր տեսակետը:

Քրիստոնեական կրոնի գործադիր մարմինը՝ Եկեղեցին զարգացրել է կրոնի տեսական և ծիսական կողմը. նա իր ծագման օրից ցայսօր առավելապես աշխատել է հավատ զարթեցնել, հավատ ծավալել ժողովրդի մեջ, մշակել քրիստոնեական կրոնի դավանանքը, պաշտամունքը, ծեսերն ու արարողությունները, և, թեև քարոզել է նաև քրիստոնեական կրոնի բարոյական վսեմ գաղափարները՝ սիրո, եղբայրության, խաղաղության ու համերաշխության գաղափարները, որ Փրկչի մարդեղության էական նպատակն է, սակայն նա քիչ է ուշադրություն դարձրել այդ գաղափարների կենսագործման վերա: Փրկիչը տիեզերքի Արարչի կամքն ու նպատակը ճանաչել ու հայտարարել է սիրո գաղափարի մարմնացումը աշխարհում: Այդ գաղափարը եղել է Նորա քարոզի նյութն ու վարդապետությունը: Փրկիչն այդ գաղափարով նպատակ է ունեցել երկնքի կամ՝ որ նույնն է՝ Աստուծո թագավորություն հիմնել երկրի վերա, այն է՝ մարդկությունը զոդել սիրո և եղբայրության զգացմունքով, հաստատելով աշխարհում խաղաղ ու համերաշխ կյանք:

Ահա այս քրիստոնեական հիմնական գաղափարի կենսագործումն է, որ Եկեղեցին անցյալում քիչ է ուշադրության առել:

Այսպես նաև մեր ժամանակի համաշխարհային երկու խոշոր պատերազմների ընթացքում Եկեղեցին հանդես չի եկել իր հավատացյալների հոծ բազմությամբ, որպես կազմակերպված անկախ հաստատություն, պատերազմի հրդեհը մարելու նպատակով, այլ սկսած պատերազմի պայմաններում պայքարել է միայն իր ժողովրդի և իր Հայրենիքի պաշտպանության համար:

Այսօր ավելի քան երբևիցէ եկել է ժամանակը, որ Եկեղեցին հանդես գա որպես միասնական անկախ հաստատություն, կենսագործելու քրիստոնեական կրոնի հիմնական վարդապետությունը:

Այսօր Քրիստոնեական Եկեղեցին, ինչպես և մյուս կրոնները և կրոնական միավորումները իրավունք չունեն այլևս լռելու, երբ մարդկության համարյա կեսը, իրենց ստորագրություններով պատերազմի հակառակ են և խա-

ղաղություն են պահանջում, խաղաղություն՝ որ հրիստոնեական վարդապետության հիմնական գաղափարներից մեկն է: Քրիստոնեական եկեղեցու և մյուս կրոնների այսօրվա լռությունը համազոր կլինի ինքնասպանության. նրանք կկորցնեն իրենց նմայիր ժողովրդի աչքին, նրանք կդառնան կյանքի համար անկարևոր հաստատություններ:

Նկատի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ Մենք հպատակահարմար ենք համարում և համոզված ենք, որ եթե բոլոր մեծ և փոքր ազգերի հրիստոնեական եկեղեցիները, ինչպես նաև մյուս կրոնները հանդիպվեն և հանդես գան մի հակառով իրենց հավատացյալներով հակառակ պատերազմի և հօգուտ խաղաղության, ոչ միայն դրական արժեք կունենա և կնպաստե խաղաղության հաղթանակին, այլև կբարձրանա հոգևորականության հեղինակությունը և կշեշտվի կրոնի անհրաժեշտությունը կյանքի համար:

Երբ հրիստոնեական եկեղեցիների և մյուս կրոնների համագործակցության ծրագիրը իրականանա հօգուտ խաղաղության, Մեր տեսակետով այդ համագործակցության առջև պիտի դրվեն հետևյալ երկու խնդիրները.

1. Յուրաքանչյուր հրիստոնեական եկեղեցի և յուրաքանչյուր կրոն, ինչպես մինչև այժմ, հետ այսորիկ ևս պիտի շարունակե աջակցել խաղաղության Համաշխարհային Խորհրդին՝ նպաստելով նորա մշակած ծրագրի իրացման.

2. Նկատի առնելով այն պարագան, որ, մարդկությունը ոչ միայն հակառակ է առաջիկա կազմակերպվող պատերազմին, այլ ընդհանրապես պատերազմներին և տևական խաղաղություն է պահանջում, եկեղեցին և բոլոր կրոնները պետք է ամեն միջոցներով պայքարեն պահանջված խաղաղությունը հաստատելու համար: Մարդկությունը տևական խաղաղություն է պահանջում հիմնվելով բոլոր ազգերի պատմության տված փաստերի վերա, որոնք միաբերան վկայում են թե՝ կուլտուրական կյանքի զարգացումն ու մարդկային կյանքի բարեկեցությունը տեղի են ունենում ազգերի խաղաղ կյանքի շրջաններում և ընդհակառակը՝ կռիվների ու պատերազմների շրջանները ավերիչ ու կործանիչ շրջաններ են, երբ մարդ իր շինածն ու ստեղծածը իր ձեռքով ավերում ու ոչնչացնում է:

Եզրակացությունը պարզ է. կուլտուրական կյանքի զարգացումն ու մարդկային կյանքի բարեկեցությունը պահանջում են տևական խաղաղություն:

Ի հաստատություն Մեր ասածների՝ Մենք կբերենք օրինակներ խորհրդային երկրի երեսուն տարվա պատմությունից.— Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը, որ ոչ միայն անհատի, ժողովուրդների և պետությունների ազատության գաղափարը քարոզեց, այլև իր երկրում կենսագործեց այն, եթե նա ոչ միայն տեսական նոր վիթխարի ծրագիր առաջադրեց, այլև կենսագործեց այն՝ իր երկրի աշխարհագրական դեմքը փոխելով, իր երկրի սահմաններում գետերը միմյանց և ծովերի հետ կապելով, որի հետևանքով ամայի անապատները բուսականությամբ ծածկվեցին և մարդաբնակ դարձան, երկրի գյուղատնտեսական ուժը չափազանց աճեց և ընդհանրապես երկրի տնտեսական կյանքը բարգավաճեց ու մարդկային կյանքի բարելավման ուղին հարթվեցավ. պատճառն այն է, որ խորհրդային իշխանությունը իր հաստատման օրից ցայսօր վարել ու վարում է ներքին ու արտաքին խաղաղասիրական քաղաքականություն և հետամուտ է իր երկրի բազմալեզու ժողովուրդների մեջ տևական համերաշխություն և համագործակցություն ստեղծելու և նոցա մեջ ճշմարիտ եղբայրություն հաստատելու: Եվ այսօր էլ՝ նկատի առնելով պատերազմի մահաբեր ու ավերիչ հետևանքները և մարդկության կրելիք անբուժելի տառապանքները, նա հակառակ է պատե-

ռազմին, պաշտպան է խաղաղության և կողմնակից՝ միջպետական դժվարին լուծելի բոլոր հարցերը համերաշխությամբ և համագործակցությամբ լուծելու:

Մեր մեջբերած վերոհիշյալ պարագաներն ու պատճառաբանությունները գալիս են հաստատելու, որ մարդկային կյանքի այսօրվա տառապանքների և ընդհանրապես նորա կյանքի ոչ բնականոն ընթացքի պատճառը մարդու մտքի և հոգու աննորդաշնակ զարգացումն է:

Մարդու որոնող մտքի մշակման և զարգացման ծնունդ է գիտությունը, որ անհրաժեշտ է տիեզերքի մեջ գործող ույժերն ու նորա օրենքները ուսումնասիրելու և ճշմարտությունները երևան հանելու համար: Սակայն նույնքան անհրաժեշտ է նաև հատուկ ուշադրություն դարձնել մարդկային հոգու դաստիարակության վերա՝ ձգտելով նորա հոգու մեջ իշխող դարձնել սիրո, մարդասիրության և եղբայրության զգացմունքները, որպեսզի գիտության ստեղծագործությունները մարդկությունը օգտագործե մարդկային կյանքը բարելավելու և երջանկությունը կայուն դարձնելու համար:

Այսօր գիտությունը այն աստիճանի է հասել, որ կարող է աշխարհը կործանել, բայց կարող է նաև շինել ու վայելել. իսկ աշխարհը շինելու և վայելելու համար՝ նա կարոտում է զարգացած բարոյական նորմաների:

Այսօր գիտությունը ստեղծել է հյուլեական ույժ, որ կարող է աշխարհը ոչնչացնել. մի ույժ, որ կարող է նաև աշխարհը երջանկացնել: Ցավ է սակայն, որ մտածում ես, թե Ամերիկայի և կապիտալիստական այլ երկրների պետական գործիչների մեջ կան մարդիկ, եսական զգացմունքով տարված, պատրաստ ոչնչացնելու մարդկային հոգու նյութական և հոգեկան ողջ ստեղծագործությունները, ամայացնելու աշխարհը, մինչև իսկ կործանելու աշխարհը, փոխանակ շինելու և վայելելու, որովհետև պակասում է մարդուն եսական զգացմունքի հակաթույնը՝ մարդասիրության և եղբայրության զգացմունքները, որոնք բարձր բարոյականության ծնունդ են:

Բարոյական բարձր նորմաների զարգացման ապարատը մարդու խիղճն է. նա է որոշում բարին և չարը, լավն ու վատը, արդարն ու անարդարը, ճշմարիտն ու սուտը: Եվ որպեսզի խղճի թելադրանքները անշեղ գործադրվեն՝ կարևոր է զարգացնել նաև կամքը: Երբ մարդու խիղճն ու կամքը դաստիարակվեն՝ մարդու հոգու մեջ կտիրապետեն մարդասիրության և եղբայրության զգացմունքները, և ահա այն ժամանակ կյանքը հարատև խաղաղ կընթանա և մարդը երջանիկ կապրի աշխարհում:

Մեր բոլոր վերոհիշյալ տասածներից հետևում է, որ մենք պիտի ձգտենք, որպեսզի աշխարհի բոլոր եկեղեցիներն ու բոլոր կրոնները միանան ու պայքար մղեն հոգուտ խաղաղության և նոր պատերազմի սպառնալիքի դեմ:

Ողջունելի կլիներ, եթե աշխարհի բոլոր եկեղեցիների և կրոնների ներկայացուցիչները համաշխարհային կոնֆերենցիա կազմեին քննարկելու այն հարցը թե՝ ինչպե՞ս և ի՞նչ եղանակով կարող են նոր պատերազմի սպառնալից վտանգը չեզոքացնել, և թե՝ ինչպե՞ս հնարավոր կլինի մարդկային մտքի և կամքի դաստիարակության միջոցով հաստատել մարդու հոգու մեջ մարդասիրության, եղբայրության և համագործակցության զգացմունքները:

Ինչ կվերաբերի բոլոր եկեղեցիների և կրոնների պետերի վարչական համագործակցության ձևերին՝ Մեզ թվում է թե՝ յուրաքանչյուր կրոն և եկեղեցի ազատ պիտի լինի անկախորեն տեսչելու իր ներքին եկեղեցական և կրոնական խնդիրները. իսկ բարոյական բարձր գաղափարների դաստիարակության նկատմամբ, որոնց մասին վերևում խոսեցինք, հնարավոր կլինի համագոր-

ծակցության այնպիսի ձևեր ու մեթոդներ մշակել, որ բնդունելի լինի բոլոր կրոնների և եկեղեցիների պետերին:

Վերոհիշյալ ծրագիրը մեծ ջանք և եռանդ ու լարված աշխատանք է պահանջում, սակայն նորա կենսագործումը ըստ ամենայնի հնարավոր է, եթե բարի ցանկություն ու կամք լինի:

Վերոհիշյալ մեծ և կարևոր ծրագրի համընթաց մեր առաջ կան այլ շատ կարևոր հարցեր, որոնց լուծումը շափազանց կարևոր և անհետաձգելի է: Մենք նկատի ունենք այն գազանությունները, որ կատարում են ամերիկյան գիշյալ ույժերը Կորեայում Միավորված Ազգերի Կազմակերպության դրոշի ներքո: Ամերիկյան գիշյալ ույժերի անհախընթաց և անհեռելի արարքները պահանջում են համայն մարդկության անհետաձգելի և եռանդագին միջամտությունը՝ անմիջապես դադարեցնելու բակտերիոլոգիական զենքի գործածությունը, ազատելու համար մարդկությունը ապագա անհերևակայելի սոսկալի չարիքներից, ինչպես նաև դադարեցնելու Կորեայի պատերազմը:

Որպեսզի հոգևորականությունը ևս իր լուման միացնի առաջադիմ մարդկության եռանդագին ջանքերին՝ Մենք պատվարժան պատգամավորների ուշադրությանն ենք հանձնում հետևյալ առաջարկները.

1. Դիմել ներկա Համամիութենական կոնֆերենցիայի անունից աշխարհի բոլոր կրոնների և եկեղեցիների պետերին և բոլոր հավատացյալներին՝ հրավիրելով նոցա անհապաղ բողոքի ձայն բարձրացնել և պայքարել նախապատրաստվող նոր պատերազմի դեմ:

2. Դիմել ներկա Համամիութենական կոնֆերենցիայի բոլոր կրոնների և եկեղեցիների պետերի և պատգամավորների անունից խաղաղության Համաշխարհային Խորհրդին և՝ հաղորդելով մեր ծրագիրը՝ դրվատել նորա մարդասեր և անձնվեր գործունեությունը հանդեպ համայն մարդկության և՝ օրհնելով Համաշխարհային Խորհրդի անդամներին ու նոցա ձեռնարկները՝ մաղթել Ամենաբարձրյալին՝ շնորհել նոցա համբերատար ոգի և հաջողություն նոցա բոլոր ձեռնարկներին: (Ծափահարություններ):

ՀԱՄԱՑՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ԵԼՈՒՅԹԸ ՍՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

Խաղաղության բարձրապատիվ կողմնակիցներ.

Վրացական Ուղղափառ եկեղեցին առանձին հույսերով ողջունում է այս բարձր ժողովը և ցանկանում է նրան բեղմնավոր աշխատանք:

Ես, Վրացական եկեղեցու ղեկավարս, երկար չեմ խոսելու խաղաղության օգտի և պատերազմի վնասի մասին, այլ շատ կարճառոտ կխոսեմ Վրացական եկեղեցու կողմից խաղաղության համար մղված պայքարի մասին, նրա զգացմունքների, ցանկությունների և ակնկալությունների մասին:

Վրացական եկեղեցին քարոզում և տարածում է հավատացյալների մեջ սեր և խաղաղություն, որ երկրի վրա բերեց մեր Տեր Հիսուս Քրիստոսը, և նա նրբազգաց կերպով ուսումնասիրում է ժամանակակից մարդկության բարոյական բոլոր պահանջներին ու իր պարտքն է համարում բոլոր միջոցներով նպաստել նրա լավագույն ձգտումներին:

Ուստի Վրացական եկեղեցին չէր կարող դուրս մնալ խաղաղության համար տեղի ունեցող այն ընդհանուր շարժումից, որը Սովետական Միության մեջ սկսվել է մեծ Առաջնորդի կոչով և ընդգրկել ողջ աշխարհը:

Վրացական եկեղեցին ունեցել է իր ներկայացուցիչները խաղաղության կողմնակիցների բոլոր ժողովներում ու կոնֆերենցիաներում, իր ձայնն է բարձրացրել խաղաղության թշնամիների և նոր պատերազմի հրձիգների դեմ: Նրա հոգևորականությունը և ժողովուրդը միահամուռ կերպով իրենց ստորագրությունն են դրել հանուն խաղաղության պայքար մղելու կոչերի տակ: Այդպիսով, Վրացական եկեղեցին միշտ և ամենուրեք մասնակցություն է ցույց տվել ամբողջ աշխարհի խաղաղության համար կատարվող աշխատանքին:

Այդպես էլ հենց պետք է լիներ: Վրացական Ուղղափառ եկեղեցին քարոզում է խաղաղության ավետարանը: Նա գիտե, թե ի՛նչ է խաղաղությունը մարդկության համար, գիտե, որ խաղաղության ծարավի են բոլորը, որ խաղաղությունը հարկավոր է բոլորին: Այդ պատճառով նա աղոթել է, աղոթում է և պետք է աղոթի «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի» և անդադար պայքարելու է խաղաղության համար:

Խաղաղության համար սրտանց պայքարողների շարքում Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը գրավում են ոչ վերջին տեղը:



ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ԳԱՏՐԻԱՐՔ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ԵԼՈՒՅԹԸ

Նրանք սրտանց պայքարում են խաղաղության համար, որովհետև խաղաղություն է քարոզում ավետարանը, որովհետև խաղաղության ծառայի են ամենքը, որովհետև խաղաղությունն է հարկավոր ամենքին:

Խաղաղության դրոշն իր ձեռքն է վերցրել վրաց ժողովրդի փառապանծ զավակ մեծ Ստալինը: (Ծափահարություններ): Վրաց ժողովուրդը սիրում է նրան և հետևում է նրան՝ խաղաղության դրոշակակրին: Խաղաղության համար պայքարի է կոչում մեծ Ստալինը և նրան է հետևում ամբողջ սովետական ժողովուրդը:

Վրացական եկեղեցին աղոթում է և աղոթելու է նրա առողջության և արևշատության համար և ամբողջ ուժով պայքարելու է խաղաղության համար:

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը վրդովված են խաղաղության թշնամիների— ամերիկյան իմպերիալիստների— շլսված ամարդության համար, որոնք բակտերիոլոգիական պատերազմ են մղում Կորեայի և Չինաստանի հողերում:

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը պահանջում են դադարեցնել և արգելել բակտերիոլոգիական պատերազմը:

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը պահանջում են արգելել ատոմային և այլ նույնատեսակ ռումբեր:

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը պահանջում են կնքել հանդարտության Պակտ հինգ մեծ տերությունների միջև:

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը պահանջում են պատերազմի հանցագործ համարել այն կառավարությանը, որն առաջինը կգործադրի ատոմային կամ այլ նույնատեսակ ռումբեր:

ՍՍՌՄ-ում գոյություն ունեցող բոլոր կրոնների ներկայացուցիչների՝ պատմության մեջ դեռևս չտեսնված՝ մեր այս ժողովը, բնականաբար, հղացում է մի միտք. արդյոք չի՞ հասել արդեն ժամանակը, որ բոլոր երկրների կրոնական գործիչների համաշխարհային համագումար հրավիրվի և այստեղ համախոհ ու միահամուռ կերպով որոշվի ամբողջ աշխարհի խաղաղության հարցը:

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը հավատում են, որ այդ կլինի: Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը համոզված են, որ խաղաղությունը կհաղթանակի պատերազմին, որովհետև խաղաղության կողմնակից է մեծ Ստալինը: Նույն այդ հույսը ներշնչում է մեզ նաև այն հանգամանքը, որ մեծ Առաջնորդ Ստալինի կոչին հաստատուն կերպով հետևում է Սովետական Միության ժողովուրդը, հոգեկան և նյութական միջոցներով հարուստ Ռուսական Ուղղափառ եկեղեցին, Մոսկվայի և Համայն Ռուսիոց Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի գլխավորությամբ:

Կեցցե՞ խաղաղության դրոշակակիրը՝ մեծ ՍՏԱԼԻՆԸ: (Ծափահարություններ):

Վրացական եկեղեցին և վրաց ժողովուրդը ցանկանում են նրան առողջություն և արևշատություն և բարձրաձայն գոչում են վրացական «Մռավալ ժամիերս»: (Բուռն ծափահարություններ, որ վերածվում օվացիայի):

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒՏԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ, ՏՈՒՐՍԻ ՃԱՌԸ ՍՍՌՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ, ԿՐՈՆԱԿԱՆ ԱԲԼ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

Սրբազնագույն, ամենապատիվ Պատրիարք Հայրեր, Գերապատիվ Եպիսկոպոսներ, ի Քրիստոս հավատացյալ եղբայրներ և արտասահմանյան հյուրեր.

«Խաղաղություն ձեզ»: Լատվիական Ավետարանական - Լուտերական եկեղեցու պատվիրակության անունից՝ հարություն առած Քրիստոս Փրկչի այս բառերով եմ ողջունում ձեզ, խաղաղության գործի քանկագին բարեկամներ։ Մենք փառք ենք տալիս Ամենաբարձրյալին և սրտանց ուրախանում ենք Սովետական մեծ պետության բոլոր երկրամասերից և ռեսպուբլիկաներից, ինչպես և արտասահմանից այստեղ հավաքված հոգևորականության այս պատմական կոնֆերենցիայի համար։



Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական եկեղեցու արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը ելույթի ժամանակ

Ուրախ ենք, որ 1950 թվականին Կովկասում երեք Պատրիարքների հանրահայտ խորհրդակցությունը, որտեղից խաղաղության բարի համբավը հնչեց ամբողջ աշխարհով, վերածվեց հոգևորականության այս լայնածավալ ժողովին, բայց խորապես ցավում ենք, որ մեր մեջ չկա Վրաստանի հանգուցյալ Պարտիարք-Կաթողիկոս Երանելին Կալիստրատը, որի պայծառ հիշատակը կպահպանի ո՛չ միայն Վրաստանի բարեծնունդ և երախտագետ ժողովուրդը, այլև ամբողջ Միության և Մերձբալթիկայի հոգևորականությունը։

Այնպիսի բազմակողմանի հոգևորական ժողով, ինչպիսին այս է, մեր անջատ եկեղեցիների պատմության մեջ չի եղել։ Այդպիսին գումարվում է առաջին անգամ։ Առաջներում այդ մասին միայն երազում էին, ինչպես և երազում էին հաստատուն խաղաղության մասին երկրի վրա։ Այս նշանակալի կոնֆերենցիայի գումարման առթիվ, իմ և լատվիական պատվիրակության կողմից շնորհակալություն եմ հայտնում Նորին Սրբություն Պատրիարք Ալեքսիին և իր մերձավորագույն գործակից միտրոպոլիտ Նիկոլային և ամբողջ Սուրբ Սինոդին, նույնպես և Սովետական կառավարությանը՝ աջակցության համար։

Խաղաղության վեհ նպատակն ամբողջ աշխարհում բարենպաստ հող ունի մերձավորի նկատմամբ եղբայրական սիրով առլցցուն քրիստոնեական ուսմունքի մեջ ինչ-

պես առհասարակ Հին, այնպես և Նոր Կտակարանների Սուրբ Գրքում։ Այնտեղ մենք շատ իմաստուն բառեր ենք գտնում խաղաղության մասին, որի համար մենք պայքարում ենք, և որը իրար է մերձեցնում մեր եկեղեցիներին։ Խաղաղության սուրբ նպատակն ամրապնդում է բարեկամությունը ժողովուրդների, հատկապես խաղաղասեր ժողովուրդների, ինչպիսին է քաջակորով, համբերատար, աշխատասեր և հաղթական ռուս ժողովրդի և այստեղ ներկայացած մյուս ժողովուրդների միջև։

Եթե առաջներում քրիստոնեական առանձին դավանանքների և ժողովուրդների միջև լինում էին որևէ գժտություններ, ապա այժմ ամբողջ աշխարհում խաղաղության համար մղվող պայքարում շատ անշրջետներ հարթվում են, դոգմատիկ տարբերություններ և հակադրություններ, որպես մարդկանց կողմից ստեղծված և ոչ թե Աստծո կողմից տրված՝ չքանում են։ Մնում է փոխադարձ ըմբռնման և անկեղծ բարեկամության ընդհանուր հիմքը՝ սերը մերձավորի նկատմամբ և աստվածային հավատը միասնական Աստծո և Փրկիչ Հիսուս Քրիստոսի նկատմամբ, որն ասաց. «Եվ եղիցին մի հօտ և մի հովիւ» (Հովհաննու Ավետարան, ժ 16)։

Ամբողջ աշխարհում խաղաղության վեհ նպատակն առաջ է ընթանում և հաջողությամբ պաշտպանվում առաջադիմական կառավարությունների և խաղաղասեր պետությունների կառավարողների կողմից՝ Սովետական Միությունն ու իր հանճարեղ առաջնորդ՝ խաղաղության դրոշակակիր Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ։ (Ստափահարություններ)։

Խաղաղության ստալինյան հեռատես, գերիմաստուն և հաջող քաղաքականությունը հայտնի է բոլորին։ Նա երևում է հեռվից։ Այստեղ գալիս, մոտենալով Մոսկվային, նույնիսկ օդից տեսնվում էին բարձրարձակ շինարարությունները, հատկապես նոր համալսարանի վեհատեսիլ շենքը Լենինյան լեռներում։ Այն տեսնել կարելի է խորունկ գետնի տակ, Մոսկվայի զարմանահրաշ մետրոյում։

Սովետական ժողովուրդների խաղաղասիրությունն ու աշխատասիրությունն առանձնապես ապացուցվում է Վոլգայի, Դնեպրի, Դոնի վրա էլեկտրակայանների վիթխարի կառուցումներով։ Աննախընթաց չափի ջրանցքներ են փորվում անապատում, Ղրիմում և Ամու-Դարյայում։ Նա, ով ոռա ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների նման այդպիսի հրսկայական աշխատանքներ է կատարում և այդպիսի հրապուրվածությամբ ու արագընթաց հաջողությամբ է կապած աշխատանքի՝ նա ժամանակ իսկ չի ունենա պատերազմի մասին մտածելու։ Այդ խաղաղ, հաջող շինարարությունը հնարավոր է այն պատճառով, որովհետև պետական, այսինքն՝ ժողովրդական հարստությունը մեծ է, նա արագորեն, առանց երկարատև վիճաբանությունների ու երկարաձիգ ճառերի, առանց շահույթների և օգուտների շահամոլական հաշիվների, ինչպես այդ տեղի է ունենում կապիտալիստների մոտ, կարող է ուղղված լինել դեպի անմիջապես ժողովրդի բարեկեցությունն ու կուլտուրական նվաճումները։

Այգիների և արտերի վերածված անապատները առատորեն կտան պտուղ, մրգեր և հաց, որն ավելի էժան կլինի, քան պատերազմից հետո կենսամթերքների այժմ իրագործված գների հինգերորդ իջեցումը։ Այս բոլորը երաշխիք է խաղաղության, որը ժողովուրդներին տալիս է մեծ և հզոր պետությունը՝ Սովետական Միությունը, որի հովանու տակ մենք ապրում ենք։

Ցուրաքանչյուր պետության համար գլխավորն ինքը՝ մարդն է։ Նրա մասին Սովետական պետությունը հոգ է տանում արդեն վաղ մանկությունից, որն ապացուցվում է բազմազավակ հերոսուհի մայրերին պարգևատրելով, կառուցելով լավ կահավորված մանկամատուներ, մանկապարտեզներ, զանազան տիպի դպրոցներ, մանկական սանատորիաներ և հանգստյան տներ, որոնք մեծ քանակությամբ և օրինակելիորեն կառուցված են Ղրիմում, Սև ծովի կովկասյան ափին, ինչպես նաև Ռիգայի ծովեզերքին և հենց Ռիգայում, որտեղ երեխաների համար հատկացված է հին քաղաքի ամենաընդարձակ պալատը՝ վաղեմի ամրոցը։

Համարձակ և համոզված մենք կարող ենք ասել, որ երեխաների և առհասարակ աճող սերնդի մասին, նրա առողջության և դաստիարակության մասին ո՛չ մի տեղ այնպես հոգ չեն տանում, ինչպես Սովետական Միության մեջ։ Դա ընդգծվեց և արտասահմանում, Վիեննայում, Երեխաների պաշտպանության միջազգային կոնֆերենցիայում։ Ինչպես այնտեղ ասվեց, կապիտալիստական երկրներում շատ երեխաների վիճակը հաճախ շատ խղճալի է։

Իսկ առանձնապես ագետալի և սարսափելի դրության մեջ են ընկել երեխաները Հյուսիսային Կորեայում՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների ագրեսիվ պատերազմի հետևանքով։ Այնտեղ անմեղ երեխաներն ու անպաշտպան մայրերը պատերազմի

հետևանքով տառապում են ոչ միայն քաղաքացիական վարչությունից, քաղցից ու ցրտից, այլև ենթարկվում են մինչև իսկ խեղդումների և բնաջնջման՝ հաճախակի ռմբակոծումներից, ընդորում, ոչ միայն պայթուցիկ, թունավոր նյութերից, այլև ժանտախտով, խոլերայով և այլ ախտերով վարակված միջատներով լցված բակտերիոլոգիական ռումբերով կատարված ռմբակոծումներից, ինչպես ապացուցված է դեմոկրատ իրավաբանների միջազգային հանձնաժողովի հետազոտություններից և հայտնի է Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և Կորեական Ժողովրդա-Դեմոկրատական Ռեսպուբլիկաների կառավարությունների հայտարարություններից։

Իմպերիալիստների՝ անգլո-ամերիկյան ռազմամոլների կողմից զանգվածային սպանության ոճրագործ զենքի գործադրումը ցույց է տալիս, որ Կորեան հնազանդեցնելու նրանց ապարդյուն մտադրությունը ձախողված է և որ նրանք դրանից վախեցած, կառչում են ժանտախտավարակ միջատներից, ինչպես խեղդվողը ծղոտից։

Բայց պատերազմի նման զազրելի և տմարդի եղանակներին դիմելը ինքնին ապացուցել է Ժընևի դաշնագրության դրժմանը և քրիստոնեական մարդասիրությունից հեռանալուն։ Ժողովուրդները չեն կարող լռել, նրանք պետք է իրենց վրդովմունքի ձայնը բարձրացնեն՝ ընդդեմ բակտերիոլոգիական պատերազմի հարուցիչների, պատերազմ՝ որը սպառնում է ամբողջ մարդկությանը, և ի պաշտպանություն այդ պատերազմից տառապող ու չարատանջ զոհերի։ Զայրալից բողոքներին, առանձնապես նրանց, որոնք արտահայտված են արդեն հոգևորականության այս կոնֆերենցիայում, ինչպես և խաղաղության պաշտպանության ավելի առաջվա կոմիտեների կողմից՝ Սովետական Միությունում և արտասահմանում, Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական Եկեղեցու պատգամավորությունը լիովին միացնում է նաև իր զայրագին բողոքը։

Լատվիական ժողովուրդը և Լատվիական Ավետարանական-Լուտերական Եկեղեցին վերջին համաշխարհային պատերազմում շատ ու շատ տառապեցին և շատ բան կորցրին։ Որոշ քաղաքներ ու հազարավոր գյուղեր վառվել են գերմանական ֆաշիստների ռմբակոծություններից կամ հրկիզումներից, եկեղեցիների մեծ մասը տուժել է (մենք ունեինք ընդամենը 320 եկեղեցի), բայց փա՜ռք Աստծո, պատերազմից հետո անցած խաղաղ տարիներին կրկին բերված են օգտագործման վիճակի։ Վնասվածները գրեթե արդեն ամենուրեք վերականգնված են, այլև նորից կառուցվում են նոր եկեղեցիներ Ելգավայում և Գուլբենում։ Առանձնապես զգալի են մարդկային կորուստները. շատերն են սպանվել պատերազմում, իսկ շատերն էլ ցրված են ամբողջ աշխարհով մեկ։

Այսպես են պատերազմի տխուր հետևանքները, որոնք մեզ, տառապածներիս ավելի լավ հայտնի են։ Ուստի զարմանալի չէ, որ ավետարանական-լուտերական դավանանք ունեցող լատիշական ժողովուրդը հաստատակամորեն կանգնած է հանուն խաղաղության դիրքերում և աշխատելու է կատարել առաքյալի հետևյալ խոսքերը. «Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Պողոսի Թուղթ առ Եբրայեցիս, ԺԲ 14)։ Խաղաղության համար մղվող պայքարում մեր եկեղեցին ձեռք-ձեռքի տված համաքայլ ընթանում է բոլոր եկեղեցիների, սովետական բոլոր ժողովուրդների հետ։ Մենք միահամուռ կերպով, թե՛ քահանաները և թե՛ ծխականները, 1950 թվականին ստորագրեցինք խաղաղության կողմնակիցների Ստոկհոլմի կոչը, իսկ անցյալ տարի՝ հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը։ Լատվիական Ավետարանական-Լուտերական Եկեղեցու Եկեղեցական Գերագույն Վարչությունը կոչ արեց ստորագրել ինչպես իր ծխականներին, այնպես և արտասահմանի եղբայրակից եկեղեցիներին։

Մենք աղոթում ենք Ամենաբարձրյալին՝ հանուն մեր Հայրենիքի, հանուն կառավարողների կյանքի, որպեսզի մենք մեր կյանքն անցկացնենք խաղաղ և առանց խռովության. ինչպես այդ նշել է Պողոս առաքյալը (Թուղթ առ Տիմոթեոս, Բ 2) և դրանով կայսրինը տալիս ենք կայսրին, և Աստծունը՝ Աստծուն (Մատթեոսի ավետարան, ԻԲ 21), ինչպես ասել է Քրիստոսը։ Մենք մեր եկեղեցիներում պատարագներին աղոթում ենք խաղաղության համար, ծխականներին խաղաղության ենք կոչ անում մեր քարոզներում ու մեր տպագիր հրատարակություններում. գլխավորապես խաղաղության մասին հոգևոր նոր օրհներգներում։ Այդ օրհներգները, որոնք փառաբանում են խաղաղությունը և պարունակում են աղոթքներ խաղաղության համար, տպագրվելու են նոր ատենի գրքի մեջ, որն այժմ հրատարակվում է։ Այն արդեն հանձնված է տպարան

տպագրության և մեկ-երկու ամսից հետո լույս կտեսնի։ Այս բոլորը, և՛ երջանիկ կյանքը, և՛ ժողովրդի բարեկամության զարգացումը, իհարկե, հնարավոր է միայն խաղաղ պայմաններում։ Ուստի մենք բերկրանքով ենք ողջունում Խաղաղության Համաշխարհային Խորհրդի բոլոր որոշումները և խաղաղասեր ժողովուրդների և նրանց կառավարությունների բոլոր նախաձեռնարկումները՝ հօգուտ խաղաղության պաշտպանության, առանձնապես Սովետական Միության սույն թվականի մարտի 10-ի և ապրիլի 9-ի պատմական հուշագրերը արևմտյան տերություններին՝ Գերմանիայի հետ խաղաղության պայմանագիր կնքելու վերաբերյալ։

Մեր՝ Լատվիական Ավետարանական-Լուտերական Եկեղեցին, մասնակցել է Մոսկվայում 1950 թվականի և 1951 թվականի՝ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական կոնֆերենցիաներին, ինչպես նաև 1950 թվականի սեպտեմբերի 17-ին Ռիգայում գումարված ռեսպուբլիկական կոնֆերենցիային։ Արքեպիսկոպոսը, գերապայծառները և հովիվները հատկապես խաղաղության համար մատուցել են շատ հատուկ պատարագներ, դրանցից մի քանիսը եղբայրական էստոնական Ավետարանական-Լուտերական Եկեղեցու ղեկավար հոգևորականության, ինչպես նաև Լիտվայի Ավետարանական Ունիֆորմիստական Եկեղեցու ներկայացուցիչների հետ համատեղ կերպով։ Այդպիսի մի պատարագ մատուցվեց Ռիգայի արքեպիսկոպոսի Մայր տաճարում 1951 թվականի հոկտեմբերի 29-ին՝ Կովկասից—Վրաստանից ու Հայաստանից—արքեպիսկոպոսի ճանապարհորդությունից վերադառնալուց հետո։ Այդ պատարագը նշանակալից էր նրանով, որ այնտեղ ներկա էր Ռիգայի Ռուսական Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոսն իր շքախմբով։ Սույն թվականի հունվարի 7-ին Ռիգայի ուղղափառ տաճարում նման պատարագ մատուցվեց, որտեղ իր հերթին հրավիրված էին Ավետարանական-Լուտերական Եկեղեցու ներկայացուցիչները։ Ռուս և լատիշ ժողովուրդների միջև այդպիսի քրիստոնեական և եղբայրական համագործակցությունը, ինչպես և խաղաղության համար մատուցված ընդհանուր աղոթքները ժողովրդի մեջ թողեցին խոր տպավորություն, որը, անտարակույս, նպաստում է խաղաղության գաղափարի ամրապնդմանը։

Այս կոնֆերենցիայի բացման օրը՝ մայիսի 9-ը, համընկնում է հաղթանակի և խաղաղության 7-րդ տարեդարձի հետ և այս օրը Լատվիական ՍՍՌ ավետարանական եկեղեցիներում մատուցվում են պատարագներ, ընթերցվում աղոթքներ հանուն խաղաղության և հանուն հոգևորականության այս կոնֆերենցիայի հաջողությունների, և երգվում են խաղաղության նոր հիմները։ Նրանց հիմքում Պողոս Առաքյալի հետևյալ սուրբ խոսքերն են. «Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի և զմիջնորմն ցանկոյն քակեաց», (Թուղթ առ Եփեսացիս, Բ 14)։

Մեր Եկեղեցին հավանություն է տալիս Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշումներին և աշխատում է դրանք կենսագործել։

Մեր Եկեղեցին կոչ է անում մյուս եկեղեցիներին, հավատակիցներին և բոլոր քրիստոնյաներին՝ հետևել խաղաղության մասին Քրիստոսի պատվիրաններին, որովհետև նա իր աշակերտներին ասաց. «Կալարուք յանձինս ձեր զաղն և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մարկոս, Թ 49)։

Լատվիական Ավետարանական-Լուտերական Եկեղեցին բոլոր հավատացյալներին կոչ է անում՝ աղոթել հանուն խաղաղության և աշխատել ի փառս խաղաղության, հույս դնելով Տեր Աստծո վրա։

Հավատացած լինենք, որ մուծելով մեր լուման ամբողջ աշխարհում խաղաղության համար սուրբ գործի մեջ, մենք այն կպաշտպանենք և խաղաղությունն իրենց ձեռքը վերցրած խաղաղասեր ժողովուրդներն այն կապահովեն և խաղաղությունը կպահպանվի ու կամրապնդվի ի բարօրություն ամբողջ մարդկության։ (Ծափահարություններ)։

ՈՒՂԵՐՁ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻՑ՝ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԿՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ԵՎ ԲՈԼՈՐ ԿՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՄԱՐԴԻԿ.

Ռուսական Ուղղափառ Եկեղեցու նախաձեռնությամբ ընթացիկ տարվա մայիսի 9—12-ը Մոսկվայում գումարվեց Սովետական Միության մեջ գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների ներկայացուցիչների կոնֆերենցիան, որը հրավիրվեց ողջ աշխարհում խաղաղության պաշտպանության հարցերը քննարկելու համար:

Խաղաղությունը սիրող բոլոր մարդիկ բռնված են տագնապով: Բոլորը զգում են, թե ինչպես է խտանում սարսափով, ատելությամբ և պատերազմի յուրերով թունավորված մթնոլորտը: Շատերը պատկերացնում են գալիք վտանգի աստիճանը, սակայն դեռ ոչ բոլորը գիտեն նրա մութ աղբյուրի մասին, իսկ ոմանք էլ, հետևելով սուտ ցուցումներին, փնտրում են նրան ոչ այնտեղ, որտեղ իրականում նա գտնվում է: Ուստի և նրանք գտնվում են կամ պայքարից հեռու, կամ կասկածանքների և անվճռականության մեջ, կամ թե խաղաղության թշնամի տրամադրությունների ազդեցության տակ:

Վշտացած դիտելով մեր երկրից դուրս գտնվող շատ հավատացյալների այդպիսի դրությունը, մենք, Սովետական Միությանն մեջ գոյություն ունեցող կրոնների ներկայացուցիչներս, մեր պարտքն ենք համարում վկայելու, որ ըստ մեր համոզմունքի, պատերազմի աղբյուրը թաքնվում է ոչ թե այստեղ, ուր մարդիկ անդուլ աշխատանքով ստեղծում են ընդհանուրի համար երջանկության և բարգավաճման պայմաններ, շտացնելով հանիները և ոռոգելով անապատները, ուր մարդկության ուժերը ուղղված են երաշտի և հիվանդությունների դեմ, ուր մարդկանց երազանքները և գործերը թևավորվում են խաղաղության գաղափարով, իսկ այնտեղ, ուր սոցիալական հակասությունները բացատրվում են բնակչության գերաճումով, ուր մշակվում են ամենից ավելի ագրոտ միջոցներ մարդկանց զանգվածային ոչնչացման համար, ուր նախա-

պատրաստվում են պատերազմի, երազելով ողջ աշխարհի վրա իշխելու մասին:

Անհրաժեշտություն չկա դուրս հանելու դեպի Աստծո աշխարհը մարդասյացության ցնորքների և դիտավորությունների նողկալի պատկերները, որպիսի ցնորքներով և դիտավորություններով լեցուն է պատերազմի ժամանակակից քարոզիչների մթագնած բանականությունը:

Թող այդ դիտավորությունները, որ նույնքան վանող են, որքան և ինքը՝ ատելության զգացմունքը, և նույնքան անոելի, ինչքան ատոմային ռումբը և մահացու բակտերիաները՝ չքունավորեն ժողովուրդների տրամադրությունը և սարսափի չքերեն շարության անդունդի տեսարանի առջև:

Բայց մենք չենք կարող փակել մեր աչքերը մութ ուժերի շարժման առաջ, ինչպես և չպետք է ընկճենք սարսափի և հուսահատության դրության մեջ: Մեր գործն է՝ կոչ անել մարդկանց պայքարելու տառաների ու հանցագործությունների, խաղաղության թշնամիների և ոչ մեծավորների ու նոր իրավակարգի ճշմարտության դեմ, որ չեն ընդունում պատերազմի կողմնակիցները: Մեր պարտքն է հիշեցնել ողջ աշխարհի հավատացյալ մարդկանց, որ նրանք հանդիսանում են միջավայրի դեպքերի կենդանի մասնակիցներ, և ոչ թե հակատամարտի կողմնակի ականատեսներ, որտեղ վճռվում է մեր ընդհանուր բախտը:

Անա թե ինչու մենք կոչ ենք անում հողագնդում գոյություն ունեցող բոլոր եկեղեցիներին և կրոնական միավորություններին՝ օգնել իրենց ժողովուրդներին՝ խաղաղությունը պաշտպանելու պայքարում:

Գործի վսեմության և ճշմարտության գիտակցությամբ և ըստ պարտքի կոչված՝ մենք պարտավոր ենք ցուցաբերել անմիջական մասնակցություն այդ պայքարում: Մենք պարտավոր ենք պաշտպանելու խաղաղության Համաշխարհային խորհրդի առաջադրանքները՝ ագրեսիան դատապարտելու և իրենց երկրում թշնամություն և ատելություն հրահրող պատերազմի պրոպագանդան արգելելու մասին: Մեզ անհրաժեշտ է ստեղծել բարոյական պատնեշ կրքերի սանձարձակության դեմ, որը դրդում է հարձակվելու խաղաղ հարևանների վրա, և նախապես դատապարտել այն, որպես հանցագործություն՝ բարոյականության և մարդկության հանդեպ:

Նպատակ ունենալով վերացնելու երկյուղն ու անվստահությունը, բոլոր երկրների հավատացյալները թող պահանջեն արգելելու ատոմային, քիմիական, բակտերիոլոգիական և մարդկանց զանգվածային ոչնչացման բոլոր տեսակի այլ զենքերը, միաժամանակ, ընդհանուր, վերահսկողական կարգով զինաթափելու մեծ և փոքր պետություններին, դադարեցնելու պատերազմը ոչ միայն Կորեայում, այլ ամենուրեք, որտեղ նա գոյություն ունի:

Դատապարտելով ամերիկյան ագրեսիան Կորեայում, մենք հաստատապես համոզվել ենք այն բանում, որ ողջ աշխարհի բոլոր եկեղեցիները և կրոնական միավորությունները պատրաստ են գործնականապես պաշտպանել խաղաղության Համաշխարհային խորհրդի բյուրոյի այս տարվա ապրիլի 1-ի կոչը՝ «Բակտերիոլոգիական պատերազմի դեմ»:

Քանի դեռ պատերազմը չի դարձել չարամիտների համար որպես պատիժ, պետք է խուսափել պատերազմի կոչ անող նրանց խոսքի և գործի պղծությունից և պահանջել մեծ տերությունների կառավարություններից՝ կնքել խաղաղության Պակտ, որը կհանդիսանա հենց նրանց խաղաղասիրության լավագույն սուգումը և միջազգային հարցերի, ինչպես նաև խաղաղության Համաշխար-

հային խորհրդի վերոհիշյալ առաջադրանքների քննարկման լավագույն պայմանը:

Ահա այն խնդիրները, որոնք դնում է բոլոր երկրների հավատացյալների առաջ խաղաղության ամրապնդման գործը:

Այդ մեծագույն նպատակի վերաբերյալ բոլոր կրոնների միասնականության մեջ կասկած չենք չի կարող, ինչպես և չի կարելի կասկածել այն բանում, որ դրանցից յուրաքանչյուրն յուրովի հավատում է Աստծուն: Մեր, հավատացյալներիս շարքում չկան շարության և անշնորհության երկրպագուներ, չկան մանվան և քայքայման ծառայողներ, չկան Աստծո հակառակորդներ: Ընդհակառակը, բոլոր կրոնները, չնայած նրանց միջև եղած տարբերություններին, պաշտպանում են մարդկության մեջ ձգտումը դեպի միակ նշմարտությունը, բոլոր կրոնները լուսաբանում են չկատարված իրականությունը բարության և արդարության գաղափարներով և ընդլայնում են մինչև իսկ ժամանակավոր կյանքը հողագնդում՝ մինչև հավիտենականության սահմանները:

Ուստի, համաժողովրդական խաղաղության վերաբերմամբ հոգսը բնական է բոլոր կրոնների համար— իզուր չէ, որ Սովետական Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների ներկայացուցիչները հավաքվել են միասին քննարկելու խաղաղության պաշտպանության վերաբերյալ հարցը: Մեր միասնականությանը այդ տեսակետից աջակցում է և Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը, որը, այսպիսով, յուրաքանչյուր քայլափոխում մերկացնում է նոր պատերազմի հրահրիչներին:

Սակայն կապիտալիստական երկրներում դեռ ոչ բոլոր հավատացյալ մարդիկ մասնակցում են խաղաղության համար մղվող պայքարի գործին: Քրիստոնեության մի մասը հետ է քաշվում պայքարից կեղծ պրոպագանդայի և մի քանի հոգևորական առաջնորդների հեղինակության շնորհիվ, որոնք այսպես թե այնպես կապված են իմպերիալիստական շրջանների հետ: Դեռ մի քանի՝ Իսլամին և Բուդդային դավանող՝ ժողովուրդներ գտնվում են իմպերիալիստական պետությունների լծի տակ: Հուդայական կրոնին դավանողները, ապրելով մի շարք երկրներում, ոչ ամենուրեք բարձրացնում են իրենց ձայնը խաղաղության պաշտպանության գործում:

Ահա այդ խաբված, տարաբեկված, տառապող և դանդաղաշարժ, բայց խաղաղության կարիք զգացող և խաղաղությանը հավատացող մարդկանց մենք կցանկանայինք կոչել ընդհանուր վտանգի գիտակցության և համազգումների բերել նրանց այն բանում, որ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԳԱՀԳԱՆՎԻ ԵՎ ԿԱՄՐԱՊՆԴՎԻ, ԵԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՎԵՐՑՆԵՆ ԻՐԵՆՑ ՁԵՌՔԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆԵՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ»:

Այդ մտադրությամբ մենք մեր ուղերձով սկզբում դիմում ենք քրիստոնյաներին և ասում.— Ձեր պատասխանատվությունը խաղաղությունը պահպանելու գործում առանձնապես մեծ է, քանի որ պատերազմի վտանգը առաջ է գալիս այն պետություններից, որոնք իրենց քրիստոնյա են անվանում: Հիրավի, այդ նույն ճանգամանքը ձեզ թույլ է տալիս ամենամեծ հաջողությամբ ծառայել խաղաղության պահպանման գործին, որը պահանջում է ձեզանից ոչ թե նախապատվություն տալու այս կամ այն սոցիալական կարգին, այլ միայն ձեր կրոնական պարտքի նշանությանը: Եվ երբ դուք պատշաճ արիությամբ կսկսեք շուտ տալ հասարակական կարծիքը հօգուտ խաղաղության, ապա ոչ միայն կունենաք դրական ազդեցություն ձեր կառավարությունների

վրա, այլև, բացի դրանից, կկանխեք այն նախատինքը, որ բխում է այլ կրոնների ժողովուրդներից:

Ջերմագին կոչով մենք դիմում ենք մուսուլման և բուդդայական կրոնների հոգևորականությանը և հավատացյալ զանգվածներին, որոնք պատկանում են կապիտալիստական, գաղութային և կախյալ երկրների ժողովուրդներին:

Անցյալի ծանր փորձը և ոչ պակաս ձեր ժողովուրդների ներկայիս դրժվարին կացությունը հաստատում են, թե ինչպիսի բարիք կհանդիսանա նրանց համար երկարատև և կայուն խաղաղությունը: Խաղաղության ուխտը, եթե իրականացվեր Միավորված Ազգերի Կազմակերպության շրջանակներում, կթույլատրեր ձեր ժողովուրդներին խաղաղ ճանապարհով հասնել ազգային ինքնորոշման և արագ կերպով վերացնել իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականության ծանր հետևանքները:

Գործուն պայքարի ենք կոչում ձեզ, որպեսզի աշխարհի հավատացյալ հրեաներ, քանի որ դուք խաղաղության կարիք եք զգում ոչ պակաս չափով, քան այլ ժողովուրդները:

Այդ մասին կարելի էր և չխոսել, եթե խաղաղության պայքարի համար չկոչեին ձեզ Օսվենցիմի, Բուխենվալդի, Դախաուի, վարշավյան գետոյի և վերջին համաշխարհային պատերազմի այլ այրունանեղ ռազմաբեմերը:

Այսպես, ուրեմն, մեր ուղերձում, ուղղված ողջ աշխարհի եկեղեցիներին, կրոնական միավորություններին, հոգևորականությանը և բոլոր կրոնների հավատացյալներին, կրկնում ենք. «Միավորվեցեք խաղաղության համար մղվող պայքարում ձեր երկրների ժողովուրդների հետ և ձեր կառավարություններին դրեք նոր համաշխարհային պատերազմ հրահրող կորստաբեր քաղաքականությունից հրաժարվելու անհրաժեշտության առաջ»:

Այն ժամանակ մոայլ ամպերից, որոնցով այժմ պատած է երկինքը, կթափվեն երկրի վրա ոչ թե հրավառ հեղուկ, ոչ թե ատոմային ռումբերի կորստաբեր կարկուտ, ոչ թե ճիվանդություններով վարակված միջատ—միկրոբներ, այլ բարեբեր զովացուցիչ ցողեր, որոնք իրենց հյութերով կսնեն մեր կռվից մարդկության սրտերում ցանած խաղաղության սերմերը:

ԹՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԻ ՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

ՈՒՂԵՐՁ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻՆ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավերով, մենք, Սովետական Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների ներկայացուցիչներս, ընթացիկ տարվա մայիսի 9—12-ը հավաքվեցինք ներկա կոնֆերենցիային՝ քննարկելու ողջ աշխարհում խաղաղությունը պաշտպանելու համար ժողովուրդների հետագա պայքարին աջակցելու հարցերը:

Լսելով խաղաղության Համաշխարհային խորհրդի անդամ միտրոպոլիտ Նիկոլայի զեկուցումը, կոնֆերենցիան ծանոթացավ իմպերիալիստների կողմից նախապատրաստվող երրորդ համաշխարհային պատերազմի դեմ մղվող պայքարի գործում բոլոր երկրների ժողովուրդների, եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների, եկեղեցական համայնքների և անձանց կողմից ձեռք բերված նվաճումների հետ և գտավ, որ այդ նվաճումները ներկայանում են որպես մի խոշոր ավանդ՝ համաժողովրդական խաղաղությունը ամրապնդելու բնագավառում:

Այդ զեկուցման մեջ բերվեցին խաղաղության ասպարեզում Սովետական Միությունում գործող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների գործունեության արդյունքները, որոնք մոտ են գործել նվաճումների ընդհանուր գումարի մեջ և որոնցով մեր երկիրը, բոլոր այլ ժողովուրդների հետ միասին, հակադրվում է խաղաղության թշնամիներին և մարդկությանը:

Խաղաղության պայքարի գործում մեր ժողովրդի նվաճումները մեծ են թե՛ նյութական և թե՛ բարոյական տեսակետներից: Նրա ստեղծագործական աշխատանքը ուղղված է խաղաղ նպատակների կենսագործմանը, իսկ հոգևոր հատախմբվածությունը պսակվում է իր ուժերի վստահությամբ: Նրա համար պայքարը ժամանակակից իմպերիալիստների հանցագործ դիտավորություններին դեմ սերտորեն կապված է է՛լ ավելի կատարյալ կյանքի կարգ հիմնելու համար մղվող պայքարի հետ, որը բացառում է թշնամությունն ու բռնությունը, իսկ կրոնի համար մեր երկրում խաղաղության նպատակով մղվող պայքարը անբաժանելի է մարդու և քաղաքացու դաստիարակումից, որն ընդունակ է ստեղծել և պանպանել այդպիսի կարգը:

Կոնֆերանսը խաղաղության համար մղվող հետագա պայքարի բնագավառում կենտրոնացրեց իր ուշադրությունը Սովետական Միությունում գործող եկեղեցիների և կրոնական միավորությունների առջև դրված խնդիրների շուրջ և որոշեց կոչ անել մեր երկրի հոգևորականությանը և բոլոր դավանանքների հավատացյալներին՝ է՛լ ավելի ակտիվ մասնակցություն ցուցաբերել մեր ժամանակի այդ մեծագույն գործին:

Գործնականում այդ նշանակում է, որ Սովետական Միությունում գործող եկեղեցիները և կրոնական միավորությունները է՛լ ավելի լայն չափերով պետք է քարոզեն խաղաղության գաղափարները, բացահայտեն մարդկանց և ժողովուրդների միջև եղած հարաբերությունների բարոյական հիմունքները, աջակցեն հասարակական ձեռնարկումներին, որոնք ուղղված են համաժողովրդական խաղաղությունը ամրապնդելուն, կոչ անեն միահամուռ հավատով արտասահմանյան իրենց հավատակից եղբայրներին ակտիվորեն պաշտպանելու խաղաղության համար պայքարող իրենց ժողովուրդներին, ի հայտ բերեն հավատացյալների համապատասխան վերաբերմունքը դաժանությանը, ճնշումներին և հետապնդումներին մատնված զոհերի նկատմամբ, ընդարձակեն կապը այլ երկրների եկեղեցիների և կրոնական համայնքների հետ ժողովուրդներին մերձեցնելու նրանց փոխըմբռնման նպատակով:

Ընդլայնելով խաղաղության գործում մատուցած կրոնական ծառայության բնագավառը, մեր երկրի եկեղեցիները և կրոնական միավորությունները միահամուռ ձևով հավանություն են տալիս Խաղաղության Համաշխարհային Խորհրդի առաջադրանքներին՝ ճիշգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու և համաժողովրդական հարցերի այնպիսի կարգեր ստեղծելու մասին, ինչպիսին են՝ ընդհանուր զինաթափումը, Կորեայում, Վյետնամում և այլ վայրերում պատերազմի օջախների վերացումը, Գերմանիայի և Յապոնիայի հետ խաղաղության դաշինքի կնքումը, ինչպես նաև ժողովուրդների և համաժողովրդական կուլտուրայի և տնտեսական կապերի հարցը:

Այդ բոլոր առաջադրանքները ուղիղ և պարզ ուղի են հարթում դեպի ընդհանուր խաղաղությունը, նրանք համապատասխանում են խաղաղասեր ժողովուրդների երազանքներին, ուստի և պարտավորեցնում են մեզ՝ բոլոր միջոցներով աջակցել նրանց կենսագործմանը: Մեր ամենօրյա գործունեությամբ մենք անընդհատ կպարզաբանենք հավատացյալ մարդկանց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի ծրագրերի գործնական նպատակահարմարությունը և կկոչենք այն իրագործելու համար:

Մենք, Սովետական Միությունում գործող եկեղեցիների և կրոնական միավորությունների ներկայացուցիչներս, դիմել ենք ամբողջ աշխարհի եկեղեցիներին, կրոնական միավորություններին, հոգևորականությանը և բոլոր դավանանքների հավատացյալներին՝ կոչ անելով ակտիվացնելու խաղաղության համար մղվող պայքարը՝ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշումները պաշտպանելու միջոցով: Մեր ուղերձով կոչ ենք անում կապիտալիստական երկրների հավատացյալներին՝ պայքարելու թշնամություն և ատելություն սերմանող ռազմական պրոպագանդայի դեմ, ինչպես և խորհուրդ ենք տալիս նրանց ստեղծելու պատնեշ երրորդ համաշխարհային պատերազմ հրահրող բոլոր փորձերի դեմ:

Մենք ջերմորեն կոչ ենք անում ողջ աշխարհի բոլոր հավատացյալներին՝ գործնականորեն պաշտպանել Խաղաղության Համաշխարհային Խորհրդի բյուրոյի կոչը՝ «Բակտերիոլոգիական պատերազմի դեմ»:

Հավատալով, որ արդարացի գործը կպսակվի հաղթանակով՝ մեր կոնֆերենցիան ջերմորեն ողջունում է Խաղաղության Համաշխարհային Խորհրդի գործունեությունը և արտահայտում իր կայուն վճռականությունն այն բանում, որ նրա դրոշակի ներքո կմիավորվեն բարի կամքի տեր բոլոր մարդիկ, բոլոր ժողովուրդները, որոնք իրենց ձեռքը կվերցնեն խաղաղության պահպանման գործը և այն կպաշտպանեն մինչև հաղթանակ:

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՄԵՐԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ինստիտուտներն ու գիտական հիմնարկները 1952 թվականի ամառվա ընթացքում կազմակերպում են ավելի քան 40 գիտական արշավախմբեր ռեսպուբլիկայի բնական հարստությունների ուսումնասիրման և գյուղատնտեսական կոպտուրաների բերքատվության հետագա բարձրացման խնդիրների հետ կապված աշխատանքներ կատարելու համար։ Գենետիկայի և սելեկցիայի (ծագումնաբանության և բնարտասերման) ինստիտուտի աշխատանքները դարձյալ պետք է ուղղված լինեն նոր, արժեքավոր տեսակների ստեղծման կողմը՝ գլխավորապես լեռնային շրջանների համար, բուսաբանները պետք է զբաղվեն ռեսպուբլիկայի բուսական աշխարհի ուսումնասիրությամբ։ Բուսաբանության ինստիտուտի 7 արշավախմբերից մեկը կմեկնի Վրաստան։ Նրա մասնակիցները Աջարիայում և Աբխազիայում նյութեր կհավաքեն Կովկասի ֆլորայի մենագրությունը կազմելու համար։

Գաղտաբուծության ինստիտուտի արշավախմբերը պետք է զբաղվեն Իշլանի, Շամշադինի, Կիրովականի շրջաններում աճող պտուղների տեսակների ուսումնասիրությամբ։ Ակադեմիայի մի շարք ինստիտուտներ ու գիտական հիմնարկներ հետազոտություններ են կատարում՝ կապված Սևանի լճի ցամաքեցված հատակի օգտագործման հարցի հետ։

Հնագետների արշավախմբերը շարունակում են Կարմիր բլուրի, Գառնիի և Դվինի պեղումները։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ.— Ճարտարապետական վարչության Ճարտարապետական հուշարձանների պահպանման կոմիտեն աշխատանքներ է տանում Հայաստանում գտնվող ճարտարապետական հին հուշարձանների վերականգնման ուղղությամբ։ Այժմ կոմիտեն լարեկարգում է Հայաստանի պատմական նշանավոր հուշարձաններից մեկի՝ Զվարթնոցի հողամասը։ Ընթացիկ տարվա աշնանը այստեղ կանկնվեն գեղագարդող ծառեր, կկառուցվեն տաղավարներ և այլն։

Սանահինում վերականգնվում է 13-րդ դարից մնացած աղբյուրի ծածկը, որը գտնվում է Հայաստանի գեղանկարչական վայրերից մեկում։

ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ.— Դիլիջանում բացվել է քաղաքային գավառագիտական թանգարան, որը գիտողին ծանոթացնում է հին և նոր Դիլիջանի հետ։ Բազմաթիվ ցուցամուշները ցույց են տալիս այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Դիլիջանում Սովետական իշխանության տարիներին։ Ցուցամուշների մեջ շատ կան գեղեցիկ նկարներ, որոնք պատկերում են քաղաքի և նրա շրջակայքի գեղանկարչական բնությունը։

Ռեսպուբլիկայում ներկայումս գործում են ևս 3 ուրիշ գավառագիտական թանգարաններ՝ Լենինականում, Գորիսում և Նոր-Բայազետում։ Տարեցտարի թանգարանները լրացվում են նոր նյութերով, որոնք խոսում են քաղաքի սովետական շրջանի զարգացման մասին, աշխատավորների նոր երջանիկ կյանքի մասին, ազգագրության ու գյուղատնտեսության նվաճումների մասին։

ԱՐՇԱՎԱՆՄԵՐԵՐ ԴԵՊԻ ԱՐՓԱ ԼԻՃԸ.— Զանգեզուրի շրջանում, ծովի մակերևույթից ավելի քան 2.000 մետր բարձրության վրա է գտնվում Հայաստանի գեղանկարչական լճերից մեկը՝ Արփա լիճը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Սևանի հիդրոբիոլոգիական կայանի արշավախումբը ուսումնասիրել է Արփա լճի կենդանական աշխարհի այժմյան վիճակը և նրա տնտեսական օգտագործման հնարավորությունները։ Վերջին ժամանակներս ավելացել են լճի ջրային պաշարները։ Այդ բանը բարենպաստ պայմաններ է ստեղծում նրա հիմնական հարստության՝ ձածան ձկան բազմացման համար։ Արշավախմբի հետազոտությունները ցույց են տալիս, որ ներկայումս ձածանի պաշարները նշանակալից են և հնարավորություն են բնձեռում այստեղ կազմակերպելու ձկան շահութաբեր որս։

ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.— Երևանի զանազան շրջաններում կառուցվում են նոր շենքեր, տեղամասեր են առանձնացվում բնակելի տների, դպրոցների, կինոթատրոնների համար։ Նրանց նախագծերը մշակվում են ռեսպուբլիկական նախագծային ճարտարապետական ստեղծագործական արհեստանոցներում։

ՍՍՌՄ ճարտարապետական ակադեմիայի Թղթակից-անդամ ճարտարապետ Ի. Մարգարյանի արհեստանոցում աշխատում են տագիո-հանդույցի 4—5 հարկանի շենքի նախագծի վրա։

Ճարտարապետ Գ. Մուշեղյանը վերջացրել է Հայկական ՍՍՌ Առևտրատնտեսության մինիստրության վարչական շենքի տեխնիկական նախագծի կազմումը։ Այդ շենքի շինարարությունն արդեն սկսվել է Աղիդրեկովի հրապարակում։

ՍՍՌՄ ճարտարապետական ակադեմիայի իսկական անդամ Ս. Սաֆարյանի արհեստանոցը գծագրերով ապահովում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի շենքի կառուցումը։

Ստալինյան մրցանակի լաուրեատ Ռ. Խաչատրյանի արհեստանոցում ավարտվում է Երևանի «Արարատ» տրեստի գինու կոմբինատի գինու շտեմարանի նախագծի կազմումը։ Ճարտարապետ է. Տիգրանյանը մշակում է Երևանի կայարանի վերակառուցման նախագիծը։

Ճարտարապետ Օ. Բաբաջանյանը իր արհեստանոցում կազմում է բանվորական ավանների առանձին տների նախագծերը։

ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐ ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտնականների մի խումբ, ակադեմիայի խորհրդական անդամ Գ. Դավթյանի գլխավորությամբ, շրջագայեց Ապարանի շրջանի գյուղերում։ Գիտնականները կոլտնտեսականների համար դասախոսություններ կարդացին հետևյալ թեմաներով. «Հանքային պարարտանյութերի նշանակությունը ցորենի բերքատվության բարձրացման գործում», «Հանքային պարարտանյութերի օգտագործման արդյունքները Քուչակի կոլեկտիվ տնտեսության հողերում» և այլն։

Հողագործները լայնորեն կկիրառեն գիտնականների փորձը դաշտային աշխատանքների ժամանակ։

ՆՎԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ.— Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանն ընդունեց ակադեմիկոս Հ. Մանանդյանի ամբողջ գրադարանը, որի մի մասը հանգուցյալ գիտնականը նվիրել էր դեռևս իր կենդանության օրոք։

Անվանի գիտնականի գրադարանը կազմված է 2.000-ից ավելի հայերեն, ռուսերեն, վրացերեն, հունարեն, պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով հրատարակված գիտական մեծարժեք գրքերից։

Հայերեն և ռուսերեն գրականությունը, որ կազմում է գրադարանի մեծ մասը, վերաբերում է պատմությանը, ազգագրությանը, տնտեսագիտությանը, լեզվաբանությանը, բանասիրությանը, իրավաբանությանը և այլ բնագավառների։ Նվիրված գրականության մեջ գտնվում է ճշգնավոր պատմաբանի աշխատությունների երկու հավաքածուն։

Հայկական ՍՍՌ Պետական ձեռագրատանը (Մատենադարան) հանձնված է 239 վավերագիր։ Այդ վավերագրերի մեջ են մտնում Հ. Մանանդյանի աշխատությունների ձեռագրերը, դիտողություններն ու ուղղումները, կարդացած դասախոսությունների համառոտագրությունները, պատմական գրագրություններ, նամակներ, գրախոսականներ, դեռևս ուսանողական տարիներից պահպանված փաստաթղթեր և այլն։ Այդ փաստաթղթերից շատերը վերաբերում են Մանանդյանի կյանքի տարբեր շրջանների և այն կապերին, որ նա ունեցել է հատկապես ռուս, վրացի և ադրբեջանցի գիտնականների հետ։

Ընդունելով ակադեմիկոս Հ. Մանանդյանի գիտական այս հարուստ գրադարանը, Հանրային գրադարանի ֆոնդերը՝ հատկապես կովկասագիտական և հայերեն գրականության բաժինները հարստացան նոր, արժեքավոր գրքերով, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեր պատմաբանների համար։

ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչությունը անցած տարվա հոկտեմբերին ձեռնարկեց տարրական և միջնակարգ դպրոցների համար 1952—1953 ուսումնական տարվա դասագրքերի հրատարակման գործին։ Մրագրով նախատեսված է հրատարակել 32 անուն դասագիրք՝ 2.000.000 ընդհանուր տիրաժով (տպաքանակով), որը գոյի կերպով ավելի է, քան անցյալ տարի։

Արդեն լույս են տեսել 55 դասագիրք, տիրաժը՝ 1.266.000։ Հրատարակված դասագրքերից են՝ «Հայ գրականության քրեստոմատիա» 9-րդ դասարանի համար, ֆիզիկայի դասագիրք 6-րդ դասարանի համար և այլն։ Հայպետհրատը լույս է ընծայել քրդերեն լեզվի քերականության դասագիրք քրդական տարրական դպրոցների համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՄԱՌԱՑԻՆ ՀԱՆԴԻՍԸ.— Ռեսպուբլիկայի քաղաքների և գյուղերի տարրական դպրոցների ուսուցիչները տարրական և միջնակարգ դպրոցների աշխատակիցների արհեստակցական միության ուղեգրերով մեկնում են Կիևյան-Վոլգայի, Գյատիգորսկի, Ժելեզնովոդսկի և ուրիշ կուրորտների սանատորիաները և հանգստյան տները։ Ամառվա ընթացքում Սաղկադորի, Ախթալայի, Սևանի, Եռաբլուրի հանգստի տներում իրենց արձակուրդը կանցկացնեն 882 մանկավարժ։ Սոչիի, Ցայտարի, Ցխալտուբոյի բուժավայրերում կբուժվեն ժողովրդական կրթության 500 աշխատողներ։ 340 ուսուցիչներ մեկնելու են անդրկովկասյան տեսարժան վայրերը դիտելու։

Հայաստանի դպրոցների 500 լավագույն դասատուներ սոչիական արձակուրդների ընթացքում էքսկուրսիայի կմեկնեն Մոսկվա, Լենինգրադ, Կիև և Սովետական Միության այլ քաղաքներ։

Ընթացիկ տարում ուսուցիչների հանգստի և սանատորիական բուժման վրա Հայկական ՍՍՌ տարրական և միջնակարգ դպրոցների աշխատողների արհեստակցական միության կենտրոնական կոմիտեն կծախսի 600.000 ռուբլուց ավելի։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈՆԵՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.— Հայաստանի Թատերական ընկերությունում կայացավ Գորկի Վ. Վաղարշյանի անվան միջշրջանային պետական Թատրոնի ստեղծագործական երեկոն։

Երեկոն բացեց ժողովրդական արտիստ Տ. Շամիրխանյանը և մայրաքաղաքի հասարակայնության անունից ջերմորեն ողջունեց հյուրերին։ Թատրոնի ստեղծագործական աշխատանքը բնութագրեց վաստակավոր արտիստ Ա. Այլյանը։ Թատրոնը տարիներ շարունակ սպասարկել է Գորկի, ինչպես նաև Մեղրու, Սիսիանի և Ղափանի շրջանների աշխատավորությունը, ունեցել է մի շարք հաջողված բեմադրություններ։

Միայն ընթացիկ տարում Թատրոնը տվել է 100 ներկայացում։ Գորկի Թատրոնը ստեղծագործական ոգեշնչում է ստացել սովետահայ Թատրոնի վարպետների կողմից։

Երեկոյի երկրորդ բաժնում Գորկի Թատրոնի ստեղծագործական ուժերի կատարմամբ ներկայացվեցին պատկերներ Կալինովսկու և Բերյոզկինի «Ճշմարտություն ենք հոր մասին» և Ն. Վ. Գոգոլի «Ամուսնություն» պիեսներից։

ՍԻՐՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ.— Հայաստանի Սովետական գրողների միությունում տեղի ունեցավ Ստալինյան մրցանակի լաուրեատ բանաստեղծուհի Սիրվա Կապուտիկյանի ստեղծագործական երեկոն։

Հայաստանի Սովետական գրողների միության նախագահ Ավետիք Իսահակյանը իր բացման խոսքում Սիրվա Կապուտիկյանին բնորոշեց որպես սովետական մարդկանց հույզերն ու ապրումները չերմորեն գովերգող, մեր լքնաղ առօրյայի և էլ ավելի պայծառ ապագայի նկատմամբ խոր հավատով լցված բանաստեղծուհու։ Նրա գործերը հայտնի են դարձել Սովետական Միությանը բազմազգ ժողովուրդներին և հռչակ վաստակել հեղինակի համար։ Սիրվա Կապուտիկյանի վերջին տարիների ամենալավ գործերը ամփոփված են Նրա «Իմ հարազատները» ժողովածուում, որի համար բանաստեղծուհին արժանացավ մեծ պատվի՝ Ստալինյան մրցանակի։

«Իմ հարազատները» ժողովածուի մասին ներածական խոսք ասաց Նաիրի Զարյանը։

«Իմ հարազատները» ժողովածուն հեղինակի հասունության վկայականն է։ Այստեղ զետեղված բանաստեղծությունները տոգորված են մեր օրերի չերմ շնչով, ժողովուրդների ստալինյան բարեկամության գեղափարներով։

Այդ ժողովածուի շուրջը արտահայտվեցին Սիմակը, Հրաչյա Քոչարը, Գեորգ Էմինը, Մ. Մարգարյանը, Հր. Հովհաննիսյանը, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, Ստալինյան մրցանակի լաուրեատ Սերգեյ Մերգելյանը։

Իր պատասխան խոսքում Սիրվա Կապուտիկյանն ասաց, որ կառավարական բարձր պարգևը ոգեշնչում է իրեն տալու նոր, ավելի բարձր ստեղծագործություններ։ Այնուհետև նա կարդաց իր բանաստեղծություններից մի քանիսը։

ԳԵՐԱՍԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՋԱՆԻԲԵԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ.— Երևանի Թատերական ընկերությունում տեղի ունեցավ ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Գուրգեն Ջանիբեկյանի ստեղծագործական երեկոն։

Անվանի դերասանի անցած ստեղծագործական ուղու մասին զեկուցեց արվեստի վաստակավոր գործիչ Տ. Հախումյանը։ Զեկուցողը Գուրգեն Ջանիբեկյանին բնորոշեց որպես բազմակողմանի տաղանդավոր դերասանի, որն իր շուրջ 30-ամյա աշխատանքով արժանացել է հանդիսականների բարձր գնահատականին։

Զեկուցումից հետո դերասանին չերմ խոսքով ողջունեց ռեսպուբլիկայի ժողովրդական դերասանուհի Օլգա Գուլազյանը։

Երեկոյի երկրորդ բաժնում Գուրգեն Ջանիբեկյանի մասնակցությամբ ցույց տրվեցին հատվածներ «Վանքաձոր», «Ժայռ», «Համլետ», «Օթելլո» ներկայացումներից։

Ներկա գտնվողները չերմորեն ընդունեցին ժողովրդական դերասանին։